Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LCN
1665

1999

Augustin Mayhofer

Bamberg

25. 1876

ԷՋ

Արժանապատիւ տէր Գաբրիէլ Պատկանեան ծերունւոյն այս աշխատասիրութիւնն, զոր մաս առ մաս ԱՐՇԱԼՈՒՄՈՑ միջոցաւ հրատարակելոյ առթիւ, զատ թղթոյ վերայ ևս տպել տուած եմք, արժան համարեցաք կազմել տալ զայն 'ի մի հատոր և մատուցանել յընթերցումն բարեսէր ազգայնոց։

Ցիշեալ պատուական ծերունւոյն աչաց տկարութիւնն՝ դժբաղդաբար, առայժմ թոյլ չտալով նմա այս Ծաղկաքաղ պատմութեան երկրորդ հատորն ևս լմնցնել, հարկադրեցաք արդէն տպեալ մի քանի թերթերն յարակցել ներկայ հատորոյն։

Զմիւռնիա 1876

Խմբագիրը—Տէր
ԱՐՇԱԼՈՒՄՈՑ

1193
1186
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅՍՍՌ—ՍՍՍՐ

Ф 1665-ԱՀ
ՀՔ 1670

ԾԱՂԿԱԲԱՂ

Ի յիսակատար կենսագրութենէ սրբազան Հայրապետի Ներսիսի Ե. վենտփառ. եւ ազգասէր կաթողիկոսի ամենայն Հայոց :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Քանի՞ դիւցազունք են հանդիսացել աշխարհի տեսարանի մէջ, որոց ծննդեան տեղն և ժամանակն՝ սիեղերքաց մէկ անկիւնի խորշին պատահելով՝ անծանօթ և անյայտ են մնացել ժամանակակցաց, և միայն՝ այն ժամանակն են՝ ի յայտ եկել և հետաքրքրութեան ենթարկուել, երբ այն դիւցազունք կամ սկսել են, կամ աւարտել են իւրեանց նահատակութիւնքն :

Հերակլէսի և Աղէքսանդրի Մակեդոնացւոյ ծննդեան ժամանակաց նշանքն՝ պատմաբանք վաղեն նուիրել բանաստեղծական հրաշադէտ հոգեզմայլութեանց : Հայաստանի ինն աստաներ-որդ դարու՝ հայրենեաց հօր հայրենին՝ էր անունն գիւղաքաղաքն Աշտարակ · այստեղ ծնաւ 1768 թուին, փետրվարի 13, (ռմծէ, դիր տարւոյն ԺԵ թ վերադիրն՝ ԻԱ) Ներսէս, որ կէս դարէն աւելի կանգնած էր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ հովուական իշխանութեան նախագահ տեղն, և իւր ձեռին ունէր՝ ոչ միայն հոգևորա-

կանաց, այլև բովանդակ հայաշանց վիճակն, զոր եթէ չյաջողեց ըստ իւրոց հայրենասէր ըղձակերաութեանց անօրինել, չէր այն 'ի թերութենէ կամաց, այլ 'ի շրջապատ հանգամանաց ազդեցութենէ։

Շատ կ'սխալի այն մարդն՝ որ կընայի նորա վերայ՝ ինչպէս մէկ գեղացւոյ զաւակի վերայ, որ վանքերի քնջներումն կրօնաւորական կենաց ճնշման ներքոյ զարգացած, մէկ կոյր բաղդի սատարութեամբ առաջացած լինի կենցաղական ասպարիզի մէջ։ Երբ Հայաստանի քաղաքաց մէջէն՝ Պարսից և Հաղարացւոց բարբարոսական բռնութիւնն հալածեց զամենայն ինչ հայազգական, մեր ազգի բնիկ բարեսոհմութիւնն՝ ըստ մեծի մասին համախմբեալ կենդրոնացաւ Հայաստանի գիւղօրէից և աւանաց մէջ, ուր՝որքան հարազատ էր պահվում նոցա բնիկ արարատեան բարքառն, նոյնքան ազատ էր մնում նոցա առանին ծէսը, սովորութիւնը և արարողութիւնը օտարազգեաց ազդեցութենէն, և որդւոց յորդիս՝ ազդէ յազգ իջանում էր ժառանգաբար ոչ միայն ազգութեան արիւնն՝ անխառն և անարատ, այլև տոհմական աղնուութիւնն իւր նախկին պարզութեամբ և զուտ հայայի հոգւով յաջորդում էր՝ անընդհատ սերունդէ սերունդ։ Ցիրաւի՝ նոցա տունն այնպ'ս էր, ինչպէս Քսենոփոնտ նկարագրում է մէկ Հայաստանի գիւղի տանուտէրի գերդաստանական վարքն և բարքն. Չկային նոցա տան մէջ հռոմէական արտաքին փաղփիւններ, և աթէնական պերճութիւնք. բայց և պարսկական

չռայլ զեղխութիւնն, և մաղղական գեղջուկ գծծութիւնն միշտ տարադրած էին. չունէին չափազանց ճոխութեամբ դիզաբարդած ոսկեղէն և արծաթեղէն կթղայք և սպասք, բայց խեցի անօթոց մէջ համադամ խորտիկք, փափուկ նաշիհ հաց և անուշահամ գինին միշտ պատրաստ էր ամեն պանդուխտ հիւրի համար։

Այսպէս ներսէս Աշտարակ գիւղաքաղաքի մէջ, Արարատ աշխարհի, կոտայք նահանգի, Երևանայ գաւառի մէջ ծնելով, ժառանգաբար ստացաւ բարեսոհմիկ Շահազիզեանց ոչ միայն վաղնջուց համբաւեալ ազգաբանութիւնն, այլև այն տոհմի հարենասէր բարքն և համեստ վարքն։ Սորա նախնեաց մէջ աւանդութեամբ պահվում էր այն կարծիքն՝ թէ սոքա էին Կամսարական ցեղէն, և հին վկայականք ևս ցոյց էին տալիս՝ թէ արդարև պահած մնացած էին որպէս ճիռ 'ի մէջ ողկուզոց. այլ մէկ անակնկալ դիպուած պատճառ տուեց սորա պապու՝ Կամսարական Կարապետ Աստուածատուրեան ազգայի ժամանակն՝ այս ցեղապետութեան ծագման կարծեաց՝ խոտորիլ իւր բնիկ ու նախկին ազգիւրէն։ (1)

Երբ Դաւիթ բէգն սկսաւ 1722 թուին Սիւն-

(1) Այս Կարապետ ազգայն էր՝ այն Կարապետ Աստուածատուրեանն, զոր Ղազիր Շահն կարգեալ էր, իշխան Աստապատայ, զոր եւ Պատմ. Հայ. Հ. Միք. Չամչեան 'ի հատորն Գ. երկիցս յիշէ՝ յէջս 837 եւ 842, Կարապետ Աստուածատրեան՝ իշխան Աստապատայ. եւ զոր չէ հարկ խառնել ընդ աստապատցի Կարապետի, որ անդ յատկապէս նշանակի որդի մեծի, եւ կոչեցաւ ուրացող Կարապետ։

եաց երկրումն զօրանալ, նորա քաջ զինուորաց մին եղև Կարապետ աղայն Կամնարական, որ իւր երիտասարդ հասակի մէջ մէկ քանի աշտարակցի հասակակից տղէրք հետն առած՝ գնաց Դաւիթ բէգի բանակն իւր հայրենեաց աղատութեան ծառայել։ Այս անհաւասար պատերազմաց մէջ Կարապետ աղայն պարսիկ սրով վիրաւորեալ կորոյս իւր դադաթի մասն. վասնորոյ՝ յետ առողջանալոյն՝ Պարսիկք սկսան նորան քեամսար (կիսագագաթ) կոչել։ Բայց երբ Դաւիթ բէգ 1728 թուին վախճանեցաւ, և նորա զօրապետն Մխիթար գաւառաճանութեան ղահ լինելով՝ անմխիթար թողոյց զՀայաստան 1729 ամին, և տէր Աւետիք՝ Դաւիթ բէգի անպարտելի զօրավարաց մին, որ յետոյ Եղև Տէրենց աղգատոհմի նախահայր, առժամանակ հեռացաւ Հայաստանէն, քեամ սար Կարապետ աղայն ևս՝ որ ականատես եղև Մեծին Պետրոսի կայսերն Ռուսաց 1723 ամի գալոյն յօգնութիւն Հայոց, և վաղվաղակի վերադառնալոյն, դարձաւ սրտակտուր յետս 'ի դիւղն իւր Աշտարակ. բայց ոչ ընդերկար տևեց նորա վհատութիւնը. որովհետև 1730 թուին Թահմազ Ղուլի խանն զօրացաւ, քեամ սար կոչեցեալ Կարապետ աղայն գնաց նորա մօտ որ նորան ծառայելով՝ աղգին ծառայէ, և իւր հաւատարիմ ծառայութեամբ և անձնանուէր սպասաւորութեամբ քեամ սար Կարապետ աղայն ոչ թէ միայն կարողացաւ այնքան հաճոյական լինել խանին, որ նա երբ 1732 թուին Նադիր Շահ անուամբ միապետեց, նորա քեամսար մականուան փոխարէն՝ Շահազիզմանուն շնորհեց, որ կընշանակէ Շահի սիրելի. այլև այնքան զօրացաւ, նորա թագաւորութեան առաջին տարիներն, մինչ չէր չափազանց մոլեգնել Նադիր Շահն, որ այն հզօր ինքնակալի առջևն, որ իւր ձեռին ունէր Հայաստանի կէսն, Հայոց աղգի համար, սուրբ Աթոռոյ համար, Մելիքների ապահովութեան համար, մէկ պահապան հրեշտակի նման եղև կանգնած, նոցա բազմապատիկ, կամ լաւ ևս ամենայն հարկաւորութեանց մէջ պէտք գալով, մինչև Աստապատայ իշխան կարգվիլն իւր 1740 թուին. վասնորոյ այն Շահազիզ մականունն այնքան հասարակեցաւ, մինչև նորա քեամսար (կամնար) աղգանունը մոռացութեան պիտի տրուէր, եթէ սրբազանն Ներսէս երկուսն ևս չկազդուրէր՝ որպէս գերդաստանական աւանդ։

Ներսիսի հայրն էր երևելի աւագերէցն Տէր Յարութիւն Կարապետեան Շահազիզեանց Կամսարական, յաւուրս Սիմէոն կաթողիկոսի, խոսովանահայր նորա և Դրանէրէց կաթողիկոսարանի, և Աշտարակ գիւղաքաղաքի ժողովրդապետ. անուն մօրն՝ որ թաղուած է Տփխիս՝ Զրկինեանց եկեղեցւոյ դաւիթն, էր Հռիփսիմէ, 'ի մերձաւոր ազգականութենէ մօր Մելիք Յահակի, (որոյ դուստրն Մարիամն եղև կին ուստեր Հերակլ թագաւորին Վրաց՝ արքայորդւոյն Ալեքսանդրի)։ Այս տէր Յարութիւն աւագ քահանայի Հօր՝ վերոյիշեալ քեամսար Կարապետ աղայի Շահազիզեան Կամնարականի համահայր և համամայր եղբայր էր մեծանուն Գալուստ արքեպիսկոպոսն, զոր գիտական Աւետիք վար-

ժապեան Պէրպէրեան յիշէ յիւրում պատմութեան Հայոց յէջս 8, 10, 12, 14, և այլն, և մօրաքեռորդի արքեպիսկոպոսին Ներսէսի՝ մականուանելոյն Մեծ, որ իւր ազգական կարապետ աղայի կամարական անունն էր սեփականել, և կըկամէր որ այն կամար անունն համարեալ լինի ժառանգութիւն Ցնացած 'ի նախնի կամարականաց՝ որք հանդերձ նահապետաւն իւրեանց Ներսէհաւ՝ սրախողխող էին կոտորվել յաւուրս Արշակայ Բ։ Ուստի՝ յորժամ ծնաւ տէր Յարութիւն աւագ քահանային որդի, օրն էր չորեքշաբաթի, մեծի պահոց առաջին բակլայ խորանի (փակեալ) խորանի չորեքշաբաթին, և որովհետև միւս օրն էր Ցեառնընդառաջի մեծ տօնն, և կնքահայրն էր վերոյիշեալ Ներսէս արքեպիսկոպոսն, որ դեռ այն ժամանակն առեղայ էր, կամօք տէր Յարութիւն աւագ քահանայի, և հաճութեամբ Գալուստ արքեպիսկոպոսի, մանկան անունը՝ որ ըստ պատշաճի աւուրն պիտի դնէին Սիմէոն, դրուեցաւ Ներսէս՝ 'ի յիշատակ Ներսէհ կամարակալի։ Ո՞վ կըկարծէր՝ թէ այս նորածին և նորակնիք Ներսէս մանուկը, ժամանակաւ պիտի այս Աշտարակ գիւղաքաղաքին ևս տայ այն համբաւն, ինչ որ նորա անուանակիցն տուել էր համանուն Աշտարակ քաղաքին՝ որ Բագրևանդայ գաւառումն է։

Բայց՝ այն ժամանակէն յետ՝ անցել էր արդէն հազար երեք հարիւր տարւոյ չափ ժամանակ, և ո՛չ ոք էր կարող գուշակել՝ թէ այս Ներսէս՝ որ հանդերձեալէր լինել Ներսիսեանց կարգին հինգերորդ, իւրաքանչիւր համանուան համեմատութեամբ՝ պիտի լինէր ճիշտ երկրորդ։ Առաջին Ներսէսն էր Պարթևաղեան Մեծն Ներսէս, իսկ Սա իւր մեծագործութեամբ արժանի եղև կոչուել երկրորդ Ներսէս մեծ։ Երկրորդ Ներսէսն՝ մականուանեալ էր Աշտարակցի։ Սա ևս միւս Աշտարակ գեղէն գոլով՝ իրաւամբ կոչուեցաւ Ներսէս Աշտարակցի երկրորդ։ Երրորդ Ներսէսն էր Շինողն, որովհետև Էջմիածնի շրջապատ վանականաց բնակարանն՝ նա էր շինել. իսկ Սա՝ ո՛չ թէ զանազան շինուածովք պիտի ստանայր անուն Շինող երկրորդ, այլև Էջմիածնի փրկութեամբ՝ կանգնող և Ազատող պիտի անուանէր։ Իսկ չորրորդ Ներսէսն էր Շնորհալին (Կլայեցի). և ո՞վ է կարող ասել՝ թէ Սա չէր և երկրորդ Ներսէս Շնորհալի՝ իւր բազմապատիկ շնորհաց առաւելութեամբ. որովզարդարել էին զնա 'ի ներքուստ Աստուած և բնութիւն, և որպէս թէ ծածուկ և յայտնի՝ առանց նշանաց և յայտնութեանց և առանց կիւսահմայ գուշակութեանց պատրաստել էին վեր հանել յայն գահ, զոր իւր քրտնավաստակ աշխատութեամբ հաստատել էր սուրբ Գրիգոր լուսաւորիչ՝ սրբոց Առաքելոց Թադէոսի և Բարդուղիմէոսի գրած հիմանց վերայ։

Այս գերագահ աթոռոյ վերայ բազմողն է Հայոց ազգի Հայրապետն և Քրիստոսի բանաւոր հօտի Հովուապետն, և սկսած այն ժամանակէն՝ երբ մեր ազգն կորցրեց իւր թագաւորական գահն, այս Հայրապետական գահն էր և է մեր ազգի ծայրագոյն բարձրութեան կէտն, քան զոր աւելի՝ մեր ազգի համար չկայ այլևս տեղ։

եւ այս դահի վերայ ելանելով այս մեծանուն Հայրապետն Ներսէս ե՝ կանգնեցաւ այն վեհութեան աստիճանումն, քան զոր աւելին բարձր չունի այժմ ոչ մեր ազգն և ոչ մեր եկեղեցին։

Բայց Սա՝ ոչ այն պատճառաւ միայն եղև անուանի՝ որովհետև հասաւ այս գերագահ փառաց · բազումք են հասել թէ՛ յառաջ և թէ՛ յետոյ, այլ նա՝ տակաւին արքեպիսկոպոս եղած ժամանակն, և կամ քան զայն առաջ ևս՝ լոկ վարդապետ կամ աբեղայ, կամ սարկաւագ գոլով, այնքան ականաւոր էր իւր գործունէութիւնքն՝ մինչ զի Հայրապետ անունն, զոր բոլոր ազգն շատ տարիներէ 'ի վեր ցանկանումէր նորա վերայ տեսանել, ոչ ինչ աւելացոյց նորա նախկին անուանց հռչակին վերայ · կամ պարզ ևս ասենք նա դեռ Ներսէս վարդապետ գոլով այնքան համբաւաւոր էր, որ Ներսէս կաթողիկոս կամ Ներսէս Հայրապետ կոչելոյ ժամանակն՝ բազում անգամ հարկաւոր էր լինում կրկնել և Ներսէս վարդապետ անունն՝ որ աւելի ազդու լինի։

Այսպիսի անձն՝ որոյ համար դարեր պիտի երկնէին, ոչ թէ միայն մեր ազգի մէջ, այլև մեր ժամանակակից բազում օտար ազգաց մէջ ևս հաղուագիւտ լինելով, մեկ յաղող դիպուածով եղև 1868 թուին, երբ նորա ծննդեան հարիւրամեանի յոբելեանն լրացաւ, առարկայ կենսագրութեան · և անկողմնասեր գրիչն պիտի աւանդէ քարտիզին նորա վարքն այնքան անախտակիր հոգւով, որքան աւելի պիտի երկնչի հասարակաց անաչառ դատաստանէն։ Որովհետև՝ որպէս նա այնքան բարձր էր կանգնած հայազգի մարդկութեան կարգումն, որ՝ նորա իւրաքանչիւր գործքն, մէն մի շարժմունքն պարզ և յայտնի էին ամենեցուն «ոչ կարէ քաղաք թագչիլ՝ որ 'ի վերայ լերին իցէ կանգեալ» և բազում գրիչք էին պատաղեալ՝ Նորա գործոց անկորուստ պահելոյ համար · նոյնպէս և ես՝ արդէն եօթանասունեւերկու տարեց մէջ, աշխարհի հետ ամենայն հաշիւս աւարտած լինելով, և առաջիւս՝ բաց 'ի գերեզմանէն այլ նպատակ չունենալով, սեպուհ պարտք կրհամարիմ ինձ գրել միայն գործնական փաստերն, և ոչ ներբող ինչ կամ պարսաւ։

Ներսէս՝ իւր ծնած օրէն սկսած, մինչև իւր նուիրումն 'ի ծոց սուրբ Աթոռոյն, որպէս և յետ այնորիկ՝ մինչև իւր մահն՝ տեսած չէ՝ ոչ աղքատութիւն, ոչ կարօտութիւն և ոչ չքաւորութիւն։ Շահազիզեանց տունն՝ ինչպէս 'ի ժամանակի կենդանութեան Կարապետ աղայի, (որ 'ի սկիզբն 1749 թուոյն Հէյտար խանի հետ գքժտելով, թողեց Աստապատայ իշխանութիւնն և վերադարձաւ իւր հայրենիքն՝ Աշտարակ, և նոյն տարին վախճանեցաւ և թաղուեցաւ Աշտարակ,) նոյնպէս և նորա որդւոյ տէր Յարութիւն աւագերիցու ժամանակն, ոչ միայն Աշտարակ գիւղի բնակչաց համար, այլև բոլոր սուրբ Էջմիածնի Միաբանից, և նորա յոգնախումբ ուխտաւորաց համար՝ որպէս հայր Աբրահամի տուն հիւրասիրութեամբ և հիւրընկալութեամբ բարեհամբաւեալ էր։

Հայոց գիւղականաց մէջ, մանաւանդ Հայաստանի և Արարատ գաւառի Պարսից ձեռին գե-

բութեան ժամանակն՝ թէպէտ իսկապէս ճոխ և հարուստ մեծատունք բաղումք կային, բայց նոցա ոսկին և արծաթն ոք չէր կարողանալ։ Շահագիղեանց տունն ոչ շռայլութեամբ, այլ պարկեշտ և համեստ առատաձեռնութեամբ՝ իւրոց և օտարաց համար դուռն միշտ բաց ունելով, ծանօթից և անծանօթից առջև սեղանն պատրաստ ունելով, նահապետական տուն էին 'ի նախնեաց հետէ. և Ներսէս աչք բաց արաւ այս լուութեան մէջ. վանորոյ և մինչև վերջն՝ ոչ յաջողութիւնն կարողացաւ նորան երբէք հարբեցնել, և ոչ ձախորդութիւնն վհատեցնել։ Իւր աղայական օրն, և իւր մանկական հասակն՝ իւր բարեպաշտ, առաքինի և աղնուաբարոյ ծնողաց հովանւոյ ներքոյ անցուցանելով՝ համարեա թէ մոր գրկէն մէկ քայլափոխ արաւ և ընկաւ սուրբ Եկեղեցւոյ գերկն։

Ութ տարեկան էր մանուկն Ներսէս, մինչ իւր պապու եղբայր Գալուստ ծերունազարդ արքեպիսկոպոսն, զոր ինքն Ներսէս՝ սովորաբար պապ կրկոչէր, առաւ զնա իւր մօտ, և սկսաւ հայերէն դպրութեան աշակերտել՝ Էջմիածնի ժառանգաւորաց դպրատանն։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Այս էր 1776 թուին, երբ Սիմէօն աղդասէր կաթողիկոսն յերեքտասան ամաց հետէ վարելով ՀԱյրապետութիւնն, և ազգի լուսաւորութեան համար ճգնելով՝ Ս. Էջմիածնի ծոցումն բաց էր արել մեծ վարժատուն ժառանգաւորաց և յոչէից ստեղծագործել էր գեղեցիկ թղթաշինութեան գործարան և տպարան, ուր արդէն

սկսել էին տպագրել զանազան հոգևոր մատեանք, որոց մէջ քան զամենայն հարկաւորագոյնքն, որք էին՝ տաճկի ժամագիրք, տաճկի սաղմոս, ձայնքաղ շարական, և միայն երկուսն՝ յառաջ քան զայն՝ Ցօնացոյց, և այլն արդէն տպեալ էին, և միւսներն ևս հետզհետէ կը տպագրէին։

Նշանաւոր ժամանակ էր այս։ Ցօնացուցի նորոգութիւնն՝ որպէս գործ համազգային եկեղեցւոյ՝ եղել էր լայն ասպարէս ազգասիրական վիճաբանութեանց և աստուածաբանական խնդրոց և եկեղեցական պատմութեան և իրաւագիտութեան։ Գիտնական Յակոբ Նալեան Պօլսոյ Պատրիարքի հովանաւորութեան ներքոյ բարգաւաճեալ Պաղտասար դպրի(2) անմոռանալի վարժարանի մէջ, (ուր և ինքն Սիմէօն կաթողիկոսն էր ճախարակեալ,) դաստիարակեալ և ծաղկեալ Արքեպիսկոպոսունք, գիտնական Յարութիւն վարդապետ Բասենցի(3), Աստուածաբան և իմաս-

(2) Պաղտասար դպիր, պանպանիչ ուղիղ հայերէն լեզուի՝ 'ի հրնեղեղէ Հոլով Յոհաննիսի Եւ սեբաստացի Մխիթար Աբբայի, պատուելի մականուանեալ, հեղինակ փորձիկ, այլ սակաւավրէպ քերականութեան; զոր երախտագէտ Հ. Միքայել Զամչեան ծայրէ 'ի ծայր իւրացուցեալ է, այլ զլացեալ է Եւ 'ի ջաւ տողի մեղ անգամ տեղի անուանն նորա կամ բանասիրական աշխատութեանց յիւրում հշմարտախօս պատմութեան։ Իսկ Երկրորդ Պաղտասար դպիր՝ տիրացու պատուական կոչեալ, էր բոռն առաջնոյն։

(3) Զսա յիշէ Զամչ. Պատ. հատ. Գ.-յէջն 865, կոչելով Յարութիւն վարդապետ Բասենցի՝ աշակերտ

տաեր Պետրոս վարդապետ Բերդումեան, և երգարանք և տաղաչափք՝ Աղամալեան և Նախիջևանցի, և ծեր Ղափանցի, և Բարսեղ կեսարացի և Ներսէս մեծ՝ հօրեղբայր փոքու, անուանեալ(4) և Սահակ երկրորդ ահագին՝ հակառակորդ Զաքարեայ Պատրիարքի(5), որք այժմ էին ընդ հայրապետական դաւազանաւն Սիմէոնի, և նորա հոգևոր վարժարանի մէջ արդէն վարժապետական պաշտօն կըվարէին։ Այսպէս յաջողակ ժամանակի մէջ մնաւ մնացի մանուկն Ներսէս սուրբ Էջմիածնի ժառանգաւորաց վարժարանն, բաց յորմէ և սեղանատունն և սրահն

Մինաս կաթողիկոսի, զի չեւ էր գնացեալ 'ի Թրեստ՝ գժտմնեալ ընդ ընտրութիւն Ղուկասու։

(4) Զարմանալի երեւի ինձ, զի զանուանս սոցա Հ. Միք. եւ վարժ. Պերպերեան ոչ յիշեն։ Մինչ սոքա՝ բաց 'ի Ղափանցւոյն, էին ժամանակակից իրերաց եւ գործք նոցա անմահ են։

(5) Զ Սահակ եւ զկռուփ նորա յիշէ Պերպերեանն յէջն 3—4 Պատ. Հայոց. բայց զայն ոչ ցուցանէ, զի այս Սահակ՝ Անտոնն կոչեցեալ վասն անեղ եւ քաղցր ձայնին, էր հարազատ եղբայր այնօրիկ Ստեփաննոսի սուտ դեսպանի, զոր յիշէ Հ. Միք. Զամչ. Գ. հատ. Պատ. էջ 785. որ խարդախ բազմակնիք աղերսարկութեամբ դիմեալ յերկրին Արցախայ առ Շահնազարբայն Վրաց՝ 'ի 1722 ամի, եհան 'ի պայքար զիշխանն Սիւնեաց զԴաւիթ բեգ, եւ յայտնի է յազգի մերում անուամբ Էլչի Ստեփանի։ Զանդրանիկ որդի Էլչի Ստեփանին այսորիկ զԴաւիթ բեգն 'ի 1832 ամի 'ի սկիզբն Մարտի բաղեաց 'ի Գրիգորիպոլիս քաղաքի արքեպիսկոպոսն Ներսէս, յորում առուր պատարագամատոյցն էի ես։ Որպէս ասացի յիւրում տեղւոջ։

վանից, և սենեակք մէն մի պատկառելի դիտնական եպիսկոպոսաց՝ էին վասն զգօն և աշխուրջ մանկան՝ անսայթաք կրթարան։

Մինչ Սիմէոն կաթողիկոսն այսպէս իւր մեծամեծ վարդապետաց միաբանութեամբ՝ իւր Հայրապետական Աթոռոյն մէջ՝ ընդ հանուր խղճալի Հայոց ազգի համար դեղարան փրկութեան կազմել կըհնարէր, նորա հոգեծին և ձեռնասուն աշակերտն, Յովսէփ արքեպիսկոպոսն Արղութեան, որ Սիմէոնի նուիրակութեան ժամանակն 'ի 1755 ամի էր ընդ նմա 'ի Պոլիս անբաժան, և տեսել էր զՅակոբ Պատրիարքն, և ըզդպիր Պաղտասարն, և սորա վարժարանի մէջ ծանօթացել էր Աստուածածնի եկեղեցւոյ աւագքահանայ տէր Գաբրիէլի հետ, Սիմէոնի Հայրապետական յաթոռն ելանելոյն զկնի եպիսկոպոս ձեռնադրեալ՝ գնացել էր յԱստրախան՝ ուր թերորդ Առաջնորդ Ռուսաստանի Հայոց, կայսրուհւոյն Ռուսաց Եկատերինեայ Երկրորդի յաղթակիր զօրապետաց և զօրաց հետ՝ Վալաքիայի և Մոլդաւիայի կողմն արշաւան երթալով, և զկնի գրաւելոյ զՏաւրիկեան թերակղզին և այլ տեղերն, և զայն կողմանց հայերն դէպ 'ի Ռուսաստան գաղթելով պատրաստում էր Նոր-Նախիջևան և Գրիգորիպոլիս քաղաքաց հիմնարկութիւնն, որ գոնէ ցրուեալ ազգի այն փոքրիկ մասն ոռնակոխ չկորչի։

Ահա այս ժամանակն էր, որ մանուկն Ներսէս նոր մտած լինելով սուրբ Էջմիածին, և անդ լսելով Յովսեփայ գործքերն, և նորա գործոց վերայ Սիմէոն կաթողիկոսի, Բասենցի Յարու-

թիւն և Բերդումեան Պետրոս հրաշաքարող վարդապետաց ճառերն, յանկարծ տեսաւ Յովսէփէն ուղարկած զԱստապատցի տէր Յակոբն, որ բերել էր Յովսէփայ աղերսագիրն, որով խնդրել էր Յովսէփ՝ Ռուսաստանի Հայոց եկեղեցեաց համար արքունական ոճից մաղթանաց կարգաւորութիւն. և Սիմէոն կաթողիկոս շարադրեց զայն, և մեծահանդէս կատարեց առաջի դեսպանին Յովսէփայ։ Ներսէս ինքն է պատմել ինձ, թէ ես Բերդումեան, կամ Բասենցիին կամ Սահակ Ահագինին աշակերտութիւն արած չեմ, այլ տեսել եմ 'ի հեռուստ, որ ամառնային եղանակին, փառացի և խրոխտ մարդիկ գոլով, Էջմիածնի քարայատակի վերայ աթոռով նստած՝ արևէն ապահով տեղ, և աշակերտք, այսինքն՝ եպիսկոպոսք և վարդապետք և սարկաւագաց բազմութիւնն՝ նոցա առջևն ծունդ չոքած կիսաբոլոր շրջանակաւ՝ լսումէին նոցա դասատուութիւնն, որ խրթին գրարաւ լեզուաւ բարձրաձայն քարոզի ձևով կըկատարէին, և այս աշակերտաց մէջ էր և Եփրեմ Նորընծայ եպիսկոպոսն, որ յետոյ եղև կաթողիկոս։

Բայց ինքն Ներսէս՝ մեծ համարումն ունէր առ Սիմէոն կաթողիկոսն, և նորա յիշատակի համար կամենումէր՝ որ նորա գրած չորս տուն Տէր ողորմեայն՝ Արի՝ Աստուած, Միջնորդութիւն, Զի գիտացաք և Արդ անկանիմք, անխափան և անփոփոխ մնան եկեղեցւոյ մէջ։ Թէպէտ ինքն յայտնի ասած չունի, բայց որ միանգամ հասու էր եղել երկուց ևս ընաւորութեանց՝ պարզ կըտեսնէր, որ Ներսէս հետամուտ էր ըստ ամենայնի՝ Սիմէոնի բարի նպատակաւ սկսածներն չթողուլ անկատար։ Այլ արդեօք կենցաղոյս ծովու ալեկոծութիւնքն թոյլ տուին՝ որ հասանի գոնէ այն բաղձանաց կիսոյն կամ քառորդին։

Ութ տարի տևեց Ներսիսի՝ սուրբ Էջմիածնի՝ Սիմէոնեան ժառանգաւորաց վարժարանի մէջ աշակերտութիւնն, և այս պատճառաւ է, որ նորա ժամանակակից ականատես պուէտիկոսն՝ իւր մէկ քերթուածի մէջ կասէ Ներսիսի համար՝ երբ նա արդէն ունէր Տփխիսի առաջնորդութիւնն. յայտանուն այր՝ ծնունդ, սնունդ, արարատեան սահմանի. ոլորտացեալ անդստին անդ Էջմիածինն անուանի, վտակարբու իմաստութեան, Հայն. յերդն 'ի կանխագէտ տեսչութենէ։ Ներսէս՝ Սիմէոն կաթողիկոսի նման անձամբ փոքրիկ էր և նիհար, արծռունկն, խաժակն կամ որպէս ինքն կասէր՝ մողէսակնեայ, որպէս և իւր հայրն, և որպէս իւր եղբայրն Կարապետ աղայն, (որ յետ ժամանակաց եղև անուանի անձն, իսկական ժառանգորդ անուան իւր պապուն՝ առաջին Շահազիզ Կարապետ աղային Կամսարական). որոյ գերեզմանն կայ Տփխիս՝ վանքի եկեղեցւոյ գաւթումն։

Ներսէսի ձայնն էր նուազ և կարկաջուն, բայց ո՛չ տգեղ. այլ ինքն մտօք ուշիմ և քաջառու։ Ռուսաց Սաղմոսն բերան սերտելով՝ սովորեցաւ ռուսերէն լեզուն, զոր կըխօսէր առանց իրիք դժուարութեան։ Ո՞վ կըհաւատայր՝ թէ այն փոքրիկ մարմնոյ մէջ այնքան գրոց տեղեկութիւն կըլինի. այնր ժամանակի դասատիարակութեան սովորական կանոնօք՝ ո՛չ թէ միայն ժա-

մագիրքը, կամ Սաղմոսը սովորել էր անգիր, այլև Նարեկն, և Շարականը, և Աստուածաշունչ մատեանն ծայրէ 'ի ծայր, և Գրիգորի Տաթևացւոյ հարցմանց գիրքն, և Ամարան Զմերան քարոզից, հատորքն, Սիմէօնի կիւրակէիցն, և Բերդումեանի դասագրքերն, զորս անջինջ ունէր 'ի միտս։ Նաև Ներսիսի Շնորհալւոյ և Ներսիսի Լամբրոնացւոյ և սրբոց հարց աշխատութիւնքն։ Թող զայնոսիկ՝ որ յիւր կենաց ընթացս 1—2 անգամ ընթերցեալ է։ Եւ այս իսկ էր պատճառն, որ նորա գրութեանց մէջ, որնոր գրած ունի իւր եպիսկոպոսութեան օրերն, ուրեք ուրեք շարադրութիւնքն կըլլնէին արժանաւոր գրչի Եղիշէի և Սարգսի Շնորհալւոյ։ Իսկ զոր գրած ունէր յաւուրս վարդապետութեան կամ 'ի վերջին ամն կենաց՝ գրչի թևերն կխոնջէին, և ուրեք ուրեք կիջանէին մինչև 'ի տառասխալութիւն։ Այս ութամեայ կրթութեան վերջին տարիքն արդէն մեռել էին Բերդումեանն, Աղամալեանն, (իսկ Ղափանցին՝ վաղու էս), և Ներսէս երբեմն դիպուածով լսել է Բասենցւոյ դասախօսութիւնն։

Այս ութամեայ՝ Ներսիսի դաստիարակութեան միջոցն՝ այն անդորր ժամանակներն էին, որ Պարսից տէրութիւնն Քէրիմ խանի իշխանութեան ներքոյ խաղաղութիւն էր գտել 1762ին մինչև 1779։ Զկնի որոյ պատերազմունք Պարսից վասն գահակալութեան՝ էին 'ի խորին Պարսկաստան մինչև 'ի թագաւորելն Ալիմուրատայ, որով և աշխարհն Արարատայ մնայր անխռով։ Այս անվրդով ժամանակներն՝ Պարսից բռնաւոր խա-

ներն, որ առաջ կուդային Էջմիածին կեղեքելոյ համար, այժմ երբեմն գալիս էին Էջմիածին որպէս հիւր։ բայց կաթողիկոսն ստիպուած էր լինում նոցա առջևն մեծածախ ճաշեր և ընթրիքներ բանալ, և այս միջոցներն միաբանութեան մէջէն ձայնաւորքն՝ և 'ի դլուխ ամենեցուն Սահակ Ահագին՝ ձայնապետն՝ երգերով և շարականներով նոցա դինարբուքն կըզարդարէին։ Այս բռնի երգաբանութեանց և ակամայ զուարճութեանց ժամանակներն՝ այնպիսի ծիծաղաշարժ անցքեր էին տեղի ունենում, որ Պարսիկք չիմանալով հայերէն՝ նուշ և շաքարի տեղ էին ընդունում։ Այսպէս մէկ օր մէկ խան՝ հացկերոյթի ժամանակն հրամայաբար 'ինդրեց, որ իւր կենաց բաժակի վերայ այնպէս շարական ասեն, որ մէջը խան լինի։ Ծանրաբարոյ Բերդումեանն՝ առ զայրոյթ սրտին՝ իւր զուարթ և առողջ ձայնով սկսաւ բարձրաձայն։ «Աղաղակէր Աստուածային բարբառովն տէր Յիսուս 'ի խաչին, և ընդդէմ առտեղաց կնքէր հրացեալ Աստուածային սուրբ ձեռամբ, և բարկութեամբ զարթուցեալ 'ի վերայ խաւարասէր էջխանն։» Այ՝ շատ շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ ասաց հարբած խանը՝ երբ լսեց խան անունը։ Մի՞ անդամերբ մէկ խան այդպէս պահանջեց Մահմէտի անունն յիշեն շարականի՞ մէջ, Բասենցին՝ որոյ ձայնն նոյնպէս յաջողակ էր և օքանչելի՝ սկսաւ երգել՝ յորժամ էկն Մահմատ 'ի քաղաքն Մաշատ Լայլն։ Խանն մեծ ուրախութիւն ունեցաւ։ Դարձեալ մէկ օր հարկաւոր եղև Ալիի անունը հնչել։ Ձայնապետ Սահակ եպիսկոպոսն

Ահագին՝ ըստ ակնարկութեան անծիծաղ Սիմէոնի՝ սկսաւ երգել. Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս, ուր չորիցս հետզհետէ լուսեցաւ բառն իմանալի։ Գինեհար Խանն ուրախանալով Իմամ Ալիի փառաբանութիւնը լսելով, մէկ բուռ ոսկի պարգևեց ձայնապետին։ Եւ այս բանի վերայ ասաց Բերդումեան. «առ քեզ տրաքոց, եթէ չկատարվեցաւ Սամիսոնի առեղծանելինքն «ի կերչէ ել կերակուր և 'ի հզօրէ փայլուն հուր''։ Մէկ անգամ ևս սարդարն կամեցաւ որ Հասան և Հիւսէինի անունն տան. Սիմէոն հրամայեց երգել՝ Խորհուրդ խորին անահասան սկիզբն, և հիւսինպուկք։

Մէկ Խան մէկ օր առարկութիւն է արել Սիմէոն կաթողիկոսին՝ թէ ձեր սուրբ Գրոց մէջ լսել եմ որ կայ մեր Մահմատ մարգարէի անունն՝ մխիթարիչ հոգի անուամբ։ Սիմէոն անվրդով պատասխանել է. մեր վարդապետք այդ մտօք չեն հասկացել մխիթարիչ հոգին. բայց մեր սուրբ գիրքն երկու է. մին կասուի հին կտակարան, և միւսն՝ նոր։ Հին կտակարանի մէջ Եսայի մարգարէի տեսլեանն՝ գրած է, տեսի և ահա գայր հեծեալ մի իշոյ, և հեծեալ մի ուղտու, և յետոյ տեսի՝ զի գայր նոյն հեծեալ երկձի. եթէ այն երկու հեծեալն համարինք մին Մովսիսական օրէնքն և միւսն՝ քրիստոնէականն՝ այնուհետև կմնայ երկձին հասկանալ ձեր մարգարէի վերայ, որոյ տուած օրէնքն երկու օրէնքէն հաւաքած է կասեն։ Իսկ նոր կտակարանի մէջ՝ ճշմարիտն ասեմ, շատ իրաց անուանքկան, բայց այդպիսի իմաստ ունեցող բան տե-

սած չեմ։ Խանը պատասխան է տալիս. եթէ դուք տեսած չէք, անշուշտ սուտ է ասել ինձ ասողը. ես գիտեմ խալիֆայ՝ որ քո ասածն ստոյգ կըլինի։

Այս մանրավէպները ախորժանօք կըպատմէր Ներսէս, որպէս իւր աշակերտութեան ժամանակն կամ քան զայն առաջ Սիմէոնի և նորա վարդապետաց հաղարաւոր գործքերէն։

Ներսիսի պապն՝ Գալուստ արքեպիսկոպոսն որ դեռ չէր ըստ ամենայնի ծերացել, տեսնելով որ Բերդումեանի մահէն յետ՝ Բասենցին չէ կարողանում միայնակ Սիմէոնի փափաքանաց հաւասար վարժարանի յառաջադիմութիւնն պահել, իմացաւ՝ որ իւր որդեդիր Ներսէս պատանին չէ կարող այնուհետև լցուցանել Էջմիածնի վարժարանէն իւր ծարաւն, նորա տասնևվեցամեայ հասակի մէջ ուղարկեց 'ի Պոլիս առ Գրիգոր Պատրիարքն, որ յետ Յակոբայ Պատրիարքի նստեալ էր յաթոռ նորա 'ի 1764 ամին, և յետ տասնամեայ պատրիարքութեան հրաժարեալ նստէր 'ի Պոլիս(6). որ իւր վաղածանօթ բարե-

(6) Վասն Գրիգոր Պատրիարքի, ստուգապատում Զամչեան գրէ, թէ 'ի 1775 'ի Հոկտեմբեր 26 գնաց յառաջնորդուրիւն Կիպրոսի. եւ յետ մետասան ամսոց ելեալ 'ի Կիպրոսէ 'ի Սեպտեմբերի, ջրաւ յերկիրն քրիստոնէից. ուր եւ կայ մինչեւ ցայսօր (1784) հոգացեալ զփրկութիւն հոգւոյ իւրոյ։ Այլ Ներսէս պատանի 'ի 1783 ամի գնայեալ 'ի Պոլիս՝ եգիտ զնա անդ եւ նորա հետ միասին վերադարձաւ Էջմիածին, որպէս տեսցի։ Ահա պատմութեան անկողմնապիրութեան նշանն։

ժամ էր, որ նա այն տեղ յանձնէ Թադեոս վարդապետին, յաշակերտաց Պաղտասարայ, 'ի հրահանգութիւն։

Ներսէս թողեց իւր հօր տանն՝ զեղբայր իւր Գարապետն և երկու քոյր և բոլոր հայրենի գոյքն և ստացուածքն և գնաց 'ի Պոլիս, և ուսումն ստացաւ Թադեոս մեծանուն վարժապետէն, սկսեալ 1783 թուէն, մինչև 1787։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Այս ժամանակամիջոցներն, այսինքն յաւուրս աշակերտութեան Ներսէսի և յառաջ քան զայն ևս, որպէս յԷջմիածին, նոյնպէս և 'ի Կ. Պոլիս տեղի էին ունեցել զանազան փոփոխութիւններ։ Նախ 'ի 1772 կամ 1773 թուին՝ 'ի տեղի Գրիգոր Պատրիարքին, որ 'ի 1764 ամի յաջորդեց Պատրիարքին Յակոբայ Նալեան, նստել էր Զաքարիա Կաղղուանցին՝ Խբլբ կոչեցեալ վասն թաւամաղ երեսացն։ Յերկրորդում ամի պատրիարքութեան Զաքարեայ եղեալէր նորոգութիւն Տօնացուցին, որում՝ ոչ հասու լինելով Զաքարեայ ազգասիրական դիտաւորութեանց սրբազան հեղինակին, դտանելով ընդ թոչարար ազդեցութեամբ կրօնաւորաց Ղազարու վանից, որոց՝ ամենայն ինչ Հայրապետին Սիմէօնի՝ էին դժուարամարս, ընդ երկար հակառակեցաւ. և ապա յուշ իւր դարձեալ առժամանակ ընկալաւ, և ապա կրկին մերժեաց, մինչև յետ իբր քան ամաց յաւուրս Դանիէլի եդիտ արժանաւոր ժողովրդականութիւն Տօնացոյցն այն ազդապարծանք։ Իսկ յՁրորդ տարին պատրիարքութեան Զաքարեայ, այսինքն՝ 'ի 1780 թուի, մինչդեռ

Ներսէս պատանին Էջմիածնէն չէր դնացել 'ի Պոլիս, վախճանեցաւ և անմահութեան տրժանաւոր Սիմէօն կաթողիկոսն, և նորա տեղն յաջորդեց ընտրութեամբ միայն Էջմիածնի միաբանութեան Ղուկաս՝ 'ի կողմանց Կարնոյ։ Ղուկասու ընտրութեան անհամաձայն էին, Էջմիածնի մէջ՝ Յարութիւն Բասենցին, որ տակաւին Սիմէօնի ընտրութեան ժամանակն՝ 1763 թուին՝ էր 'ի շարս ընտրելեաց, և նա ինքն յառաջ մատոյց զՍիմէօն կաթողիկոս, և ընտրեաց զնա(1)։ Եւ 'ի Ռուսաստան՝ Յովսէփ Արղութեանց։ Սոքա երկուսն ևս քաջ գիտէին՝ որ Սիմէօնի Հայրապետական ամենուրոյ օրինաւոր ժառանգորդք ամենայն իրաւամբք՝ են նոքա, և ոչ այլ ոք։ Մանաւանդ այնու դերազանցութեամբ, որ Սիմէօնի կարգած անբասիր ուղղութեան և աղդաշահ կանոնաց անխախտ պահպանութեան համար՝ նոցա նման անձինք էին պէտք, որպէս այս երկուքն էին յայնմ ժամանակի։ Սիմէօն՝ երկար ժամանակ՝ սկսեալ 'ի 1755 ամէն՝ Յովսէփայ հետ մնալով 'ի Պոլիս, և հասու լինելով

(1) Պատմութիւն Հայոց Հ. Միքայել Չամչեանի, հատոր Գ. էջ՝ 872 գրի. 'ի լինել ժողովոյ ճնգիցս վասն ընտրութեան՝ ոչ յաջողեցաւ. . . ոմանք ասէին ընտրել. . . զՅարութիւն Բասենցի. . . 'ի ճինգերորդում գումարման Յարութիւն Բասենցի առաջի արար զՍիմէօն վարդապետ Երեւանցի, եւ յարուցեալ 'ի տեղւոջէ իւրմէ՝ ծունր եղ նմա եւ համբուրեաց զոչ նորա եւ ասաց. կեցցէ հոգեւոր տէր մեր Սի էօն կաթուղիկոս. . . զիՅարութիւն վարդապետն յառաջագոյն խոստացեալ էր նմա՝ թէ զքեզ տաց ընտրել եւայլն։

չարեաց՝ որք անընդհատ կը յորդէին թշուառացեալ ազգի գլուխն՝ փափաքաւանութեամբ խմբելոց դարանակալութենէն, և մերայնոց սոպռ և անդուսպ կրօնական մոլեռանդութենէն՝ որոց մէջ չէր պակսիր մէկ բալուեցի տէր Մանուէլ, խելամուտ էր եղել, և այդ մասին շատ ու շատ վշտակցութեամբ խօսել էր Յարութիւն Բասենցւոյ հետ, դիտնական Յակոբ Պատրիարքի խոհական տնտեսութիւնն արդարացնելով, որ այս ազգային համաճարակ ախտն դարմանելոյ համար, հարկաւոր էր նորա արմատն ապաքինել։ Վասնորոյ իւր հայրապետութեան ժամանակն, բոլոր ջանքն այն էր, որ այն՝ սուրբ Էջմիածնի ծոցէն կամ դողացեալ կամ սարտուցեալ զաւակաց մէջէն՝ որք միսանդամ լսող են ճրշմարտութեան՝ Հայոց եկեղեցւոյ անարատ ճրշմարտութիւնն ուսուցանէ. իսկ որք՝ օձի նման՝ տրտամբ ականջներն կբխցանեն, դաւաղանաւ նոցա կամակոր գլուխներն ջաղխելով ղդաստացնել. որովհետև այս ազգամիջեան կռուի մէջ՝ թէ յաղթելն և թէ յաղթուիլն՝ ազգի ընդհանրութեան էր վնաս, իսկ Հռոմայ դահի համար՝ հաւասար շուն՝ մրթելոյն, կամ էշ զոհելոյն։

Այս երկու եպիսկոպոսք՝ Յովսէփ Արղութեանց և Յարութիւն Բասենցի՝ ըստ ամենայնի տեղեակ լինելով և կամակից արի նպատակի ազգապետին Սիմէօնի, և խմանալով՝ զ այն օրերն Սիմէօնի Աստուածահաճոյ և ազգօգուտ նպատակին հետամուտ չկան այլ եպիսկոպոսունք, և Ղուկաս չէ յարմար և ընդունակ՝ այս գաղափարներն մարմնացուցանել, նոքա էրկամենային

Հայոց Հայրապետութիւն ստանալ, որ կարողանան ազգի յառաջադիմութեան, որոյ հիշողներել էին՝ Յակոբ Պատրիարքն 'ի Պոլիս և Սիմէօն կաթողիկոսն՝ Էջմիածին, օգնել, և այն՝ Սիմէօնի առանձին նպատակին հասնիլ. այս է, զաշակերտս Աբրայի Մխիթարայ՝ որ վախճանել էր դեռ ևս յաւուրս խռովութեանց Ղազարու 1749 թուին, առանց շարժելոյ զնոսա 'ի տեղւոջէ իւրեանց՝ դարձուցանել 'ի ծոց Հայաստանեայց եկեղեցւոյ, պաշտպանութեամբ Ռուսաց տէրութեան պատսպարելով 'ի պատուհասից Հռոմայ արքունեաց։ Ո՛չ թէ Էջմիածնի միաբանք կարէին ասել՝ թէ Յարութիւն Բասենցին և կամ Յովսէփ Արղութեանց արժանաւոր չեն Հայրապետական աթոռոյ, և այն պատճառաւ զնոսա թողած՝ Ղուկասին տուինք նախ ընտրութիւնն. կամ թէ Ղուկաս աւելի արժանաւորութեանց փաստեր էր ցուցել, և վասն այն իսկ ընտրեցինք։ Ո՛չ։ Այլ միայն այն պատճառաւ՝ որ Բասենցին շատ դիտնական էր, իսկ Յովսէփ՝ շատ հզօր՝ Ռուսաց տէրութեան օգնութեամբ, և իւր սխրագործութեամբք։ Իսկ այն ժամանակն այնպէս էր, որ ոչ շատ դիտնականք կարէին լինել հաճոյ, և ոչ աւելի հզօրն, որովհետև տասնևեօթն տարի էր տևել Սիմէօնի դիտնական և հզօր Հայրապետութիւնն, և Քրիստոսի այգիէն դեռ կիսով չափ հազիւ էր քաղուել փուչն, որով ձանձրացել էին, և հզօր կէսն ևս սոքա պիտի քաղէին անէին. և այս իսկ պատճառաւ ընտրուեցաւ Ղուկաս։

Այս անխոհեմ և ազգակործան ընտրութեան

պտուղն եղև այս, որ երբ եօթանասունևվեց-
ամեայ Բասենցի Յարութիւն Արհին՝ սկսաւ ար-
տասուօք քանքարտել, թէ դուք ձեր վիճակաց
թեմակալութեան ազատելով, որ դիտնական
Մխիթարեանց ժառանգութիւն չեփականվին,
այս ազգաշնաս ընտրութիւնն արարիք, որով՝
այսուհետև՝ ո՞վ գիտէ՝ թէ քանի՞ դար պիտի
տևէ այս համազգային պատառումն. նմա պա-
տասխան տուին, թէ՝ եթէ այդքան կրցաւիս,
դուն ինքն գնա՝ նոցա մօտ. և նա չհանգուրժե-
լով այնպիսի դառն բաժակի՝ ամենապարտ և
դլխակոր՝ թ.քած մրած վանն ազգասիրութեան՝
գնաց Եւրոպա, և քսանևչորս(2) ամ մնաց այն
տեղ, և հարիւրամեայ վանքանոցաւ և թաղե-
ցաւ 'ի Թրեստ, որպէս նորա տապանագիրն կը
վկայէ։ Երբեակ ուրթ ամօք՝ 'ի Թրեստ յարկա-
կիր. զոր և մահաւիթ՝ քան տասուածադիր,
հարիւրամենի՝ ամիսվեաց 'ի դէր։

(2) Քսան եւ չորսն կարծում եմ որ սխալ ըմբռնու-
մըն պիտի լինի, ծագեալ երրեակ ուրթ ամօր բառերէն՝
զոր պիտի ընթերցուել երկեակ ուրթ ամօր. եւ նորա
վախճանն կը դասնէ 1796ին. որովհետեւ ստոյգ է
նորա հարիւրամեայ մեռանիլն. ուրեմն նա ոչ թէ
եօթանասուն եւ վեց ամեայ էր՝ այլ ութսուն եւ վեց ա-
մեայ. բազում ամօր ծեր քան զՂուկաս, այլ ժիր եւ
առողջ եւ զգաստ, որ Թրեստի Մխիթարեանց Ակա-
դեմիայի մէջ բարոյական Աստուածաբանութեան
վարժապետ էր, որոյ դասագիրքն էր Ռէդդ եւ Ծուծ
Աստուածաբանութեան կոչեցեալ մատեանն։ Սա
Թրեստ քաղաքումն իբր Հայոց երեւելի կարգաւոր՝
մեծաւ պատուով ընկալեալ Ի՛ր Մարգար աղա Զաքար-
եան Խոջենցի փեսայ՝ աղա Պօղոս Հերմէքեանի

Իսկ Յովսէփ Արղութեանց եկ արտաքս 'ի ներ-
քուստ իշխանութեան սուրբ Աթոռոյն Էջմիա-
ծնի, որում այնքան մաեջիմ էր, և մինչև 'ի
մերձ Ղուկասու մահուան տարիքն՝ մնաց ապըս-
տամբ Հայրապետական իշխանութենէն, որոյ
իրաւանց այնքան անձնատուր էր յաւուր Սի-
մէոնի, և փակեց Ռուսաստանի դրունքն հան-
դէպ ամենայն հոգևորականաց Հայոց, որ ո՛չ
Գանձասարայ կողմէն, ո՛չ Սսոյ և ո՛չ Աղթամարայ
կարողանան դալ նուիրակունք։ Այս ամեն ան-

տանն. որոց օժանդակութեամբ նորա վերջին հիւան-
դութեան ժամանակն հրաւիրուեցաւ Հայոց քահանայ,
որ մատակարարեց նմա զվերջին թոշակն, եւ լսեց
նորա արտասուալի զղջումն, որ իբր առերեսս ու-
բացութեամբ գուցէ բազմաց եղել էր գայթակղութեան
պատճառ։ Բայց զկնի մահուան նորա, մարմինն
Թրեստի միաբանութիւնն չտուին որ Հայ քահանայն
թաղէ, այլ թաղեցին իւրեանք վանից սրահումն եւ այն
գեղեցիկ տապանագրով պատուեցին, զոր յետոյ կը-
ստեղծեն 'ի կարգ բանիս։ Աւետիք Պերպէրեան 'ի
քրոնիկոնի իւրում փոխանակ 'ի 1784 ամի գրելոյ,
գրէ 'ի 1771 ամի գփախուստ Բասենցւոց 'ի Թրեստ.
որ զայ 'ի ժամանակս հայրապետութեան Սիմէոնի, որ
է անհնարին։ Նման սմին է եւ ասելն եկեղեցական
պատմութեան Սիօնի՝ թէ Ղուկաս կաթողիկոս գնաց
յԵւրոպա փախուցեալ յԱթոռոյ, մինչ գերեզմանն
նորա է 'ի Գայիանեան վանս յէջմիածին։ Եւ Հ. Մի-
քայել Չամչեանն՝ որ այդպիսի բաներն հրազով կը-
խնդրէր, աննպար էր թէ լուեր, երբ նա յիրաւի 1771
ամին գնացած լինէր, մինչ Գրիգոր Պատրիարքի
փախուստն բանաստեղծելով յաջողեց գրպարտել եւ
'ի դասս փտփտղաւանից մատենագրել։

ցից, որ մեծ ազդեցութիւն ունեցան նորա ապագայի վերայ, ականատես եղև Ներսէս պատանին, և յորժամ պապ նորա Գալուստ արքեպիսկոպոսն տարաւ զնա առ Ղուկաս կաթողիկոսն, և յայտնեց, որ մտադիր է ուղևորել զնա 'ի Պոլիս վասն ուսման, կաթողիկոսն Ղուկաս՝որ 'ի սրտէ ցանկանում էր ճեպել Սիմէոնեան ժառանգաւորաց վարժարանի կործանումն, որ անբարբառ, կամ լաւ ևս՝ բարձրաբարբառ քարոզ էր Սիմէոնեան ժամանակի պայծառութեան և արդի կամաւոր և բռնաբարական խանդարման, տեսանելով՝ որ Ներսիսի նման յառաջադէմ աշակերտի հեռանալն՝ աւելի պիտի դիւրացնէ իւր քարի խորհուրդն՝ 'ի հաճոյս իւրոց ընտրողաց, ետ նմա իւր ձրի և անարժաթ օրհնութիւնն առատ առատ, և առանձին կոնդակներ առ Գրիգոր Պատրիարքն նախկին, առ Զաքարիա Պատրիարքն, և առ տէր Գաբրիէլ Պատկանեան, որ խնամք ունենան աշնուաղարմպատանեկի վերայ, զի անօթ ընտիր է հանդերձեալ լինել. և յատկապէս կրգրուշացնէր զնոսա, որ ըստ ամենայնի արթնութեամբ հսկեն, որ այն պատանին չբմատնի 'ի ճանկս Մխիթարեանց լատինացելոց և քոլէճցոց։ Երբ Ներսէս պատանին հասաւ 'ի Պոլիս, Գրիգոր Պատրիարքի շնորհօք ծանօթացաւ Զաքարեայ Պատրիարքին, որ յանձնեց թագաւոր վարժապետին, և ապսպարեց տէր Գաբրիէլին՝ որ անխնամ չթողու զնա. և այսպէս Ներսէս որպէս սիրելի հիւր ընկալեալ եղև այն քահանայական տան մէջ, ուր այն միջոցներուն կրգտնուէր Զմիւռնացի աղա Մարդար Զա-

քարեան Խոջենց խոստովանորդի Տ. Գաբրիէլի, բաղում լեզուաց հմուտ գիտնական Հայազգին։

Աղա Մարդարն տեսնելով զճարպկութիւն Ներսէս պատանւոյն՝ սիրահարեցաւ նորա զգօնութեան և ամենայն շնորհաց՝ որք կբփայլէին նորա վերայ, և ասաց Գրիգոր Պատրիարքին։ Տուր ինձ զայս պատանին, որ ես ուղարկեմ 'ի Վենետիկ, որովհետև այս օրերս պիտի ուղարկեմ անդ զպատանին Սերոբէ թոռն տէր Գաբրիէլի։ Գրիգոր Պատրիարքն ցոյց տալով կաթողիկոսի կոնդակն՝ չյօժարեցաւ առաքել զՆերսէս պատանին 'ի Վենետիկ, որովհետև չունէր իսկ հրաման 'ի Գալուստ արքեպիսկոպոսէն՝ իւր վաղեմի բարեկամէն, զոր չկամէր իւիք տրրտմեցնել, այլ Սերոբէ պատանւոյ առաքման համար շատ ուրախացաւ և ճանապարհի ծախուցն ևս օգնեց. և այնպէս երկու պատանիք Ներսէս և Սերոբէ յետ համառօտ ծանօթութեան բաժանվեցան յերերաց։ Ներսէս եղև այն տան մէջ՝ որպէս փոխանակ Սերոբէի՝ զաւակ սիրելի. և միշտ իւր երթևեկն էր 'ի տուն տէր Գաբրիէլի, որոյ որդին տիրացու Փոկասն էր համբաւեալ իւր քաղցր ձայնիւ, որում Գրիգոր Պատրիարքն կուսուցանէր ստեղի շարականներն ըստ Էջմիածնի եղանակաց. և երբ 'ի 1785 թուին եկաւ 'ի Պոլիս Սահակ՝ երկրորդ ահագին կոչեցեալ արքեպիսկոպոսն՝ ձայնապետն Սիմէոնեան ժամանակի, որ վաղածանօթ էր Գրիգոր Պատրիարքին, Գրիգոր Պատրիարքն յանձնեց նմա զտիրացու Փոկասն՝ որ արդէն ձեռնադրուելէր, և կոչուել էր տէր Պետրոս՝ յաշակերտութիւն

ձայնաւոր երաժշտութեան. և Զաքարիա՝ որ միշտ թշնամանս կրկրէր 'ի Սահակէ, չէր զչարէր ընդ այն՝ որ իւր քահանայն՝ իւր ատելի անձին աշակերտութիւն կանէ. բայց երբ լսեց՝ թէ նա իւր որդին ուղարկել է 'ի Վենետիկ՝ բարկացաւ, և չկարելով տէր Գաբրիէլին սանանել ինչ, նորա որդւոյն տէր Պետրոսին՝ որ զուրկ էր 'ի գիտութենէ՝ միշտ ընդ ակամբ հայելով՝ ցոյց կուտար իւր դժգոհութիւնն։

Ղուկասու կաթողիկոսութեան եօթներորդ տարին, 1787 թուին, Գրիգոր Պատրիարքին հարկ եղև դառնալ Յէջմիածին. նորա հետ միասին ճանապարհորդակից եղեալ՝ եկաւ 'ի սուրբ Աթոռն հաւատարիմ և կարօտակէզ որդին նորա՝ պատանին Ներսէս, աւարտեալ իւր ուսումն և սիրելի եղեալ՝ ոչ միայն Զաքարեայ Պատրիարքին, այլև ամենայն մեծատանց Հայոց որք միանգամ ունէին երթևեկս 'ի պատրիարքարանն 'ի բնակարանն Գրիգոր Պատրիարքի, 'ի տուն տէր Գաբրիէլի և տէր Պետրոսի, և 'ի վարժարանն թագաւոր վարժապետի։

Կաթողիկոսն Հայոց Ղուկաս տեսանելով՝ չորեքտասանամեայ 'ի պանդխտութիւն առաքեալ և այժմ ինն և տասնամեայ 'ի գերկ սրբոյ Աթոռոյն վերադարձեալ՝ Ներսէս պատանւոյ ժիր և աշալուրջ, խոհական և առաքինի բնաւորութիւններն, և կարօտութիւն ունենալով լաւ և արագագիր դպրի, որովհետև Գալուստ արքեպիսկոպոսն Էջմիածնի պաշտօններով կաթողիկոսի հրամանաւ առաքեալ էր այլուր, Մեծին Ներսիսի համահաճութեամբ ընդունեց

զայս փոքրիկ Ներսէսն յիւր դրագրական սպասաւորութիւն. և զկնի մէկ տարւոյ, երբ վերադարձաւ Գալուստ արքեպիսկոպոսն Յէջմիածին, ձեռնադրել տուեց սարկաւագ. այս էր 1788 թիւն, մինչ Ներսէս էր քսանամեայ։(ա)

Քսանամեայ սարկաւագ էր Ներսէս, և կաթողիկոսի դրագիր. թէպէտ չյաջողեց Ղուկաս կաթողիկոսին համոզել՝ որ նա Սիմէօնի հիմնարկած և ծաղկեցուցած վարժարանն և արդիւնաբեր տպարանն և թղթաչինութեան դործարանն զոր Ղուկաս կաթողիկոսն գոմէշների լուղալոյ աւազան էր շինել, նորոգէ. և նոցա կործանեալ տեղէն յոտին կանգնէ, և հանապազորդէ, մինչ նորա ոսոխն, Յովսէփ՝ Ռուսաստանումն Ս. Պ. Բուրդ մայրաքաղաքի մէջ դատանելով թալդարեան Գրիգոր աղայի տպարանն, գնեց և ստացաւ Նորնախիջևանայ քաղաքի Հայոց սուրբ Խաչ վանից համար, և այնտեղ՝ օսմանեան տէրութենէն ժողոված հայազգի որբուկ եօթանասունևերկու մանկանց համար բնակարան և վարժարան և ապրուստ պատրաստեց, և ըստ ամենայնի ջանադիր էր, որովհետև ձեռնհաս չեղև հայրապետական աթոռն ժառանգելով՝ ընդհանուր ազգի լուսաւորութիւնք իւր նպատակ դընելով՝ առաջացնել, գոնէ իւր առաջնորդական

(ա) Ղուկաս կաթողիկոսն էր կատուասէր. կըցանկար մէկ վանայ կատու ունենալ, բայց չէր յաջողեր. երբ Ներսէս մտաւ 'ի ծառայութիւն գրագրութեան՝ Էջմիածնի միաբանք ասացին, անա վեհապետի ցանկացած վանայ կատուն եւս եկաւ։ Այս՝ ինքն Ներսէս է պատմել ինձ. քանի անգամ։

վիճակի մասնաւոր Հայոց դրութիւնն բարւոքելով, Ռուսաց ազգի առաջևն պատկառելի կացուցանել։ Բայց երբ Ղուկաս կաթողիկոսն ըսկսաւ Յովսէփայ ապստամբութեան, անձնիշխանութեան դէմ իւր հայրապետական իրաւունքներն ցոյց տալ, Ներսէս՝ որպէս գրագիր կաթողիկոսի՝ սկսաւ հոգւով չափ զինիլ ընդդէմ Յովսէփայ։ Յովսէփ՝ կաթողիկոս չէր, բայց՝ ինչպէս սովորութիւն ունին կաթողիկոսունք, էջմիածնի համար կոնդակներ գրել և նուիրակունք չքրջակայեցուցանել, Յովսէփ ևս իւր սուրբ Խաչ վանից համար այնպէս կոնդակներ էր զարդարում և ցրուում, և հեռաւոր աշխարհներումն բնակված Հայոց ազգէն սուրբ Խաչ վանից անուամբ նուիրակութիւն հաւաքելու՝ վարդապետք և քահանայք էր շրջագայեցուցանում, որոց առջևէն Յովսէփայ ազգասիրութեանց բարի համբաւն թռչելով՝ ամենայն տեղ նոցա համար դուռն էր բաց անում։ Նորա կոնդակաց զօրութեամբ, և մանաւանդ մէկ տէր Ստեփան, և Եայինի տէր Գրիգոր աւագ քահանայից քաջութեամբ՝ մէկ քանի երևելի ճոխ մարդիկ Հընդկաստանի Հայաբնակ քաղաքաց մէջէն՝ սուրբ Խաչ վանից և վարժարանի անուամբ հրիտակներ թողին, և շատ արդիւնք ևս տէր Ստեփան ու Եայինեան տէր Գրիգորի ձեռամբ Յովսէփայ ձեռքն հասուցին։(բ) Մինչև այսօր ևս կան Նորնախիջևանայ սուրբ Լուսաւորչի աւագ եկեղեց-

(բ) Այն հրիտակաց մէկ քանին՝ այս մօտերս՝ 1861 թուականին Միքայել Նալբանդեան երիտասարդն հայրենասէր՝ բերեց Նորնախիջեւան քաղաքի համար։

ւոյ զանգակատան ներքոյ գաւթի դրան յաջ և յահեակ՝ի քար յեռեալ մարմարիոնեայ արձանագրութիւնք, որով երևում են Նորնախիջևանայ վարժարանի անուամբ նուիրած ազգասիրական մեծամեծ զոհաբերութիւնք, որք Յովսէփայ յիշատակի կոթողներն են։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Ներսէս սարկաւագն՝ թէ ունենայր այն ժամանակն՝ այն հոգեկան ոյժն, որով յետ ժամանակաց ցոյց կուտար ճշմարիտ ազգասիրութեան հետ և արդարակորով խիհականութիւն, և չսահեր և չդլորեր այն յարձանուտի բուռն հոսանաց մէջ, որ Սիմէօնի մահէն յետ և նորա գործակից և կամակից բանիբուն վարդապետաց յրուելոյն զկնի՝ կրկնապատիկ կատաղութեամբ հեղեղեցին զսուրբ Աթոռն, և մէկ կաթողիկոսի հաճոյանալոյ համար, չը յանձն առնոյր յաւիտենական ճնասապարտութիւն, որովհետև յայտնի կըտեսներ՝ որ Յովսէփայ նպատակք էին ազգասիրականք, ձեռնհաս էր իւր ամենայն իմաստութիւնն՝ի գործ դնել, և Ղուկաս կաթողիկոսի՝ի տգեղ նախանձուէ յուղեալ անտեղի բարկութիւնն զիջուցանել, որ նա՝ Յովսէփայ ազգասիրական յառաջադիմութեանց խոչնդակ չինի, և թոյլ տայ՝ որ նա անխափան առ իւր բարի նպատակն դիմէ։ Ինչէր կայնի Յովսէփայ խորհուրդների խորոց մէջ. Նորա դրուածքն որ առ հայազգի Շահմիր Խանն՝ի Հնդիկս, առ Հերակլ արքայն Վրաց, առ հինգ մելիքս Սիւնեաց և Արցախայ, առ երևելի նախարարս Ռուսաց, և այլն և այլն, պարզ ցոյց են տալիս՝որ նա

ևս մէկ հանճարեղ ոմն էր, քան զիւր ժամանակակիցս շատ առաջ դնացած հոգւով ազգասիրութեան։ Հոգևորէն սկսինք։

Մինչև Յովսէփայ ժամանակն Ռուսաստանի Հայոց Առաջնորդութիւնն մէկ դիւթական խեղկատակութեամբ՝ կախեալ էր Գանձասարայ Աթոռէն Աղուանից, և Ռուսաց տէրութիւնն Էջմիածնի անուամբ Գանձասարայ հետ ունէր հաղորդակցութիւն։ 1724 թուին, մինչ սուրբ Էջմիածնի կաթողիկոսն էր արդէն յութ ամաց հետէ՝ Աստուածատուր, Պետրոս ինքնակալն Ռուսաց՝ Գանձասարայ Եսայի կաթողիկոսէն ընդունելով կոնդակ և դեսպան, Էջմիածնի անուամբ շնորհեց պատասխանական հրովարտակն պաշտպանութեան։ Ի 1726 թուին, մինչ Էջմիածնի կաթողիկոսն Նորընտիր Զէյթունցի Կարապետ Դ կրթափառէր արտաքոյ Էջմիածնի, Գանձասարայ Նստոր կամ Ներսէս կաթողիկոսն նոյնպէս կոնդակ դրեց առ առաջին Կատարինէ կայսրուհին, և նոյնպէս Էջմիածնի անուամբ դնաց պատասխանական հրովարտակն։ Քառասուն տարի յետոյ ևս քան զայն՝ 1766ին եկաւ Էջմիածնէն Սիմէոն կաթողիկոսի կոնդակն և շատ ընծայք և սրբոց մասունք՝ ձեռամբ Թաւիլտար Ստեփան Խերոդինեանցի, եղբօր Դաւիթ արքեպիսկոպոսի, (որ յետոյ եղև Տփխիսի Առաջնորդ,) բայց կոնդակն այն մնաց անպատասխանի։ որովհետև Գանձասարայ Առաջնորդն խափանումէր, մինչև արժիւ պէս եկաւ Էջմիածնէն Յովսէփ երկայնաբազուկ Արղութեանց, հանդիսացաւ Ռուսաց տէրութեան, սուացաւ Ռուսաստանի Հայոց առաջնորդութիւնն՝ Գանձասարայ Առաջնորդաց եօթներորդի ձեռքէն, և արդէն ութերորդ Առաջնորդ Հայոց, բայց Էջմիածնէն ուղարկած Առաջնորդաց առաջին։ և այսպէս Ռուսաստանի Հայք և նոցա առաջնորդութիւնն, որ եօթանասնամեայ ժամանակաց հետէ կայր՝ դարձաւ իւր հարազատ մօր սուրբ Էջմիածնի ծոցն, և ժողովուրդն վիճակեցաւ Էջմիածնի նախագահութեան, Երկրորդ Կատարինեայ կայսրուհւոյն հրովարտակաւ։ Այս՝ միթէ դուշնաքեաջ իմն ծառայութիւն էր Էջմիածնին՝ 'ի կողմանէ Յովսէփայ։

Յովսէփայ ծայրագոյն պակասութիւնն էր փառասիրութիւնն։ բայց ժամանակն այնպէս էր, որ Յիսուսաւանդ հեղութիւնն և խոնարհութիւնն աւելի վանորէից մէջ կըվայելէր, քան թէ մայրաքաղաքաց մէջ՝ հազարաւոր ժողովրդոց՝ տղմի մէջէն հանելոյ պարտաւորութիւնն ըստանձնեալ կարդաւորին։ որ թէև հոգւով աղքատ լինէր, արտաքուստ չունէր իրաւունք դծուծ երևիլ, երբ եկեղեցւոյ անշունչ քարն և փայտն վայելուչ էին համարում՝ ոսկեզօծել, և անօթքն՝ ոսկի և արծաթի առնել։ սրբութեանց սպասաւորն և կատարողապետն որոմ եղանակաւ; պիտի յանդգնէր ցոյց տալ իւր անձն անարժան այն կոչման՝ յոր կոչեալ էր զնա Հոգին սուրբ՝ Հայրապետական սպասահարկութեամբ և երկնաւոր շնորհաց հրաւիրմամբ։

Բայց այս փառասիրութիւնքն իւր սահմանադրեալ կոպարէն արտաքս ելանելով՝ արել էին զաղգասէր, հայրենասէր և կանոնասէր Յովսէփն՝

ապստամբ իւր մօրէն, և հանել էին Լուսաւորչի գաւազանի հովանիէն. և ահա այս սուրբ Աթոռէն ապստամբութեան չկարողացաւ ներել այս փոքրիկ աստղն՝ Հայաստանի եղերքից վերայ այն ինչ ցոլացեալ, մինչ միւսն արդէն փայլում էր իւր լիալոյս պայծառութեամբ։

Կրկին կասեմ, այս փառասիրութիւնն և նորա սրտի մէջ յղացած մեծամեծ ազդօրուտ, և երբեմն ազգաշնաս դաղափարներն, որ Ներսիսի արծուային տեսութենէն բնաւ չէին կարող ծածուկ մնալ, տուին Ներսիսի ձեռքն զէնք, որով նա յաջողեց ծածուկ և յայտնի հնարներ նիւթել՝ Յովսէփայ ազգաշնաս դաղափարաց պատրուակաւ՝ նորա ազգօրուտ յառաջադիմութեանց դէմ։ Ծածուկն այնքան ծածուկ էր, որ իրաւի պատմութեան սրաբիբ աչքն չզօրեցին այն վարագուրի թանձրութիւնն թափանցել։

Ներսէս՝ թէպէտև տակաւին պատանեկութեան հասակէն չէր ելել, կամ թէ դեռ նոր էր մտել երիտասարդական տիք, բայց ընթերցասիրութիւն ունենալով անյագ, և յիշողականութիւն անօրինակ, ոչ թէ միայն Էջմիածնի՝ Սիմէօն կաթողիկոսի ժամանակն ճոխացած ամենահարուստ գրադարանի մէջէն, այլև հին, բանիբուն, ծեր, աշխարհատես, մտացի և սրատես վարդապետաց խօսակցութիւններից քաղելով, տեղեակ էր իւր ազգի հին և նոր պատմութեանց, և այն անցքերն՝ որ դեռ պատմութեանց մէջ չէին մտել, 'ի լրոյ՝ յականատես և հաւատարիմ վկայից զրոյցներէն լսելով, կազմել էր իւր համար մէկ այնպէս ամփոփ և ստոյգ տեղեկութեանց գի-

տութիւն, որ իւրաքանչիւր ազգային ցաւոց ոպեղանիքն և նախապահպանողական զգուշութեանց դեղորայքն այն թանգարանէն կհանէր։

Ստէպ միտքն կբերէր Բերդումեան Պետրոս և Բասենցի Յարութիւն վարդապետաց խօսակցութիւնքն, զորս նոքա ազգի թշուառութեանց և նորա ժամանակակից վիճակի վերայ կունենային, և որք բերնէ բերան անցանելով կուգային Գալուստ արքեպիսկոպոսի կամ Կամսարական մեծ Ներսիսի խուցն, որք Սիմէօնի ժամանակի առաջնապատիւ Բերդումեանի և Բասենցւոյ և նոցա պատուակից վարդապետաց դասակարգի մէջ չէին, և միայն սեղանատանն կըտեսնէին զնոսա, և այն 'ի հեռուստ ու պատկառանօք. և զորս նոքա որպէս արձագանգ յառաջադէմ նկրտելոց ստէպ կըկրկնէին։ Ներսիսի արծուային սրատեսութիւնն սկսել էր արդէն հասու լինել, թէ ինչ էր գլխաւոր պատճառն Գանձասարայ աթոռոյ յառաջադիմութեան և Էջմիածնի յետնութեան։ Բայց Ներսէսէն առաջ Յակոբ Պատրիարքն էր հասկացել, և Սիմէօնին հասկացրել, և նա Բերդումեանի, Բասենցւոյ և Արղութեանի հետ հառաչել, հեծել և սգացել բազում աւուրս՝ զցայգ և զցերեկ։

Գանձասարայ վիճակն՝ որ որպէս թէ Աղուանից կաթողիկոսութեան յաջորդութիւնն է, Սիւնեաց տուն անուանեալ՝ ամրոց և ամրոցաց մէջ աւելի ապահով լինելով, շատ անգամ՝ մինչ Արարատեան դաշտն ոռնակոխ էր լինում ասպատակաց անընդհատ արշաւանէն, նա իւր անմատոյց լերանց և անառիկ բերդորէից և մթին

անտառաց (զարատաղ, զարարաղ,) պաշտպանութեամբ մնում էր անվնաս. այնտեղ էին հաւաքուած Էջմիածնի լաւ և գիտուն՝ 'ի սրոյ և 'ի գերութենէ ազատուած մեծ մեծ վարդապետներն, և իւրեանց հետ տանելով ընտիր ձեռագիր մատեաններ՝ կըճոխացնէին 'ի բաղում դարուց հետէ նորա գաղտնածածուկ գրատուներն։ Այս այն ժամանակներն էր աւելի, երբ Հայաստանեայց ընդհանրական Հայրապետութեան Աթոռն տակաւին չէր Սիսէն՝ 'ի Վաղարշապատ վերադարձել, և այն ժամանակներն Յոհան Որոտնեցին, Գրիգոր Տաթեւացին և այլ գիտնական վարդապետք՝ Գանձասարայ մերձ լինելով՝ և նորա հովանաւորութիւնն վայելելով, ազգի համար կըճգնէին։

Երբ վերադարձաւ սուրբ Աթոռն՝ 'ի սուրբն Էջմիածին, ամենայն ինչ պիտի նոր հիմներ, մինչ Գանձասար՝ ամենայն ինչ ունէր աւելորդութեամբ և ժողովուրդն, մանաւանդ մերձակայ գաւառաց բնակիչք, ոչ թէ միայն ընտելացել էին նրան, և նորա մէջ եղեալ կարդաւորաց, և նորամէն յառաջացած մանր մունր իւրեանց խելքին յարմար ծիսից և կարգաց, զորս ումանք յԱռաջնորդաց և կրօնաւորաց՝ որպէս յաւուրս Յիսուսի Քրիստոսի զաւանդութիւնս ծերոց՝ քան զծանր ծանր օրինաց՝ գիտեն որպէս մեծ ինչ երևեցուցանել յաչս ռամկաց. այլև իւրովք առատ տրովք և քրիստոնէական բարեպաշտութեամբ, նուիրաբերութեամբ ճոխացուցեալ զնա 'ի ներքուստ, և զարդարեալ արտաքուստ, սիրահարիլ նմա՝ որպէս պճնա-

զարդ դեղեցիկ հարսին, իւրեանց գանձուց հետ և սրտերն ձօնելով, և Էջմիածնի անչքութենէն խրատելով, և նորա անդադար կեղեքումն և կործանումն իւր մեղաց հատուցումն համարեալ՝ 'ի նմանէ զերեսս դարձուցանելով. մանաւանդ որ՝ իւրեանց տեղւոյ ապահովութիւն այնքան ճոխ էին արդէն, որ Աթոռն պահում էին ազատ յամենայն կարօտութեանց. և այսպէս Գանձասարայ Աթոռն սիրելի էր եղեալ զգի Արևելեան բաժնին, նորա քարոզիչք ամենայն կողմ կըհասանէին և առանց աւելի ծանրաբեռնութիւն լինելոյ ժողովրդեան՝ ձեռնհաս կըլինէին խաժամուժի սիրտն դրաւել։

Հնգետասաներորդ դարն արդէն կիսվել էր՝ որ Էջմիածին նորոգվեցաւ 1441 թուին։ Քանի՞ տարի տևեց նորա անդորրութիւնն՝ թէ 'ի ներքուստ՝ 'ի միաբանից, և թէ արտաքուստ 'ի բռնաւորաց և ասպատակաց։ Երբ Շահ Աբբաս Ա՝ 1606 թուին տարաւ զԱրարատեան հայերն 'ի կողմանս Սպահանայ, Աթոռն Աղուանից եթէ չէր խլաւ 'ի խաղաղութեան, դէթ ազատ էր 'ի հիմնայատակ կործանմանէ, և գրեթէ յայնմ իսկ միջոցի եղև և նորոգութիւն վանից 'ի Սիւնեաց աշխարհի և նորոգութիւն գրականութեան։ Զկնի երբ վաթսուն ամաց՝ Սիւնեաց երկրի հայերն դոլով ազատ յաղքատութենէ, մինչ Իսպահանի հայերն միջնորդութեամբ Շահ Աբբաս Երկրորդի՝ 'ի 1665 ամի դաշնադրութիւն արին ընդ Ռուսաց, ընկերութիւն կազմեցին առևտրական՝ Ալէքսէի Միխայիլովիչ թագաւորի հրովարտակաւ սկսան երթևեկս առնել 'ի Ռու-

սաստան, որոյ դուռն էր Կասպից ծովը կողմն Աստրախան քաղաքն. այս երկուց կողմանց հայերն համարեա թէ միասին հիմնեցին բնակութիւն Աստրախանայ մէջ, միացան յայտնի կամ ծածուկ Սպահանայ Հայոց վաճառական ընկերութեան հետ, և փոքր առ փոքր ցրուեցան և Ռուսաստանի միւս քաղաքաց մէջ ևս։ Երբ բազմացան բնակիչք Հայոց Աստրախան, ըստ մեծի մասին գոլով յերկրէն Սիւնեաց, Արցախայ, Աղուանից, Փայտակարանի, Ուտեաց և Ատրպատականի և այլ մերձակայ աշխարհաց, 'ի հովուութիւն իւրեաց սկսան ստանալ քահանայս և վարդապետս և Առաջնորդս 'ի Գանձասարայ։

Մէկ այլ հանգամանք ևս կայր, որ՝ քան զայս աւելի թախանձեցուցիչ էր։ Յորժամ 1722 թուին Դաւիթ Բէգ կանգնեցաւ Սիւնեաց երկրի ազատութեան համար, այն ժամանակն Էջմիածնի հայրապետական Աթոռն ունէր Աստուածատուր կաթողիկոսն, որ ոչինչ իւիք և ոչ ծագիւ մատին անգամ չօգնեց ազգային փրկութեան, որպէս խուլ և համր և անդամալոյծ. մինչ նա կանէր գալ Դաւիթ Բէգի բանակի մէջ, և կոնդակներ ցրուելով ամենայն կողմն՝ ժողովել իւր ազգն, և իւր հայրենիքն ոտքի վերայ կանգնեցնել. բայց նա չարաւ այս բանն։ Յոհան Մանդակունին երբէք՝ Մեծին Վահան Մամիկոնեանին թողած չէր. սա ուրմ կամեցաւ նմանիլ։ Պիտի ասէ թէ Էջմիածինն պահեցի։ Էջմիածինն՝ ազգին չէ՞։ Ա՞զգն էր թանգ, թէ Էջմիածնի քարն և վայրն. Էջմիածնի շինողն և պահպանողն ազգն չէր։ Որպէս ինքն Աստուածատուր

կաթողիկոսն չարաւ, նոյնպէս և նորա յաջորդ Զէյթունցի Կարապետն, և նորա յաջորդ Աբրահամ Բ՝ չարարին։ Բայց Դաւիթ Բէգ մեծ նեղասուտ էր գտնում այն կողմանց վանորէից և հոգևորականաց մէջէն։ Ազգն՝ այս ամենն միտքն էր պահում։

Երբ Պետրոս կայսրն Ռուսաց՝ եկն՝ յօգնութիւն տառապեալ Հայոց՝ 1723 թուին, միայն զԳանձասարայ Եսայի կաթողիկոսն տեսաւ, ինչպէս վերն ասացինք։ Բասենցւոյ և Բերդումեանի և նոյնինքն իսկ Սիմէօն կաթողիկոսի կարծիքն այս էր թէ, եթէ տեսնէր Պետրոս կայսրն՝ Գանձասարայ կաթողիկոսի հետ միացած և զսրբոյ Աթոռոյն Էջմիածնի Աստուածատուր կաթողիկոսն, զոր՝ իմանում էր կայսրն՝ որ նա է ծայրագոյն պատկերացուցիչն եկեղեցւոյ և ազգին Հայոց, զազգն կըճանաչէր միացեալ և ոչ երկպառակ, և այլ աչօք կընայէր Հայոց ազգային գործոյն վերայ։ Այն երկիրներն՝ զորս այն ժամանակն Մեծն Պետրոս առել էր Պարսից ձեռքէն, իւրեանց հոգևոր տէր էին կոչում զԳանձասարայ կաթողիկոսն, և զնա էին ճանաչում հոգևոր Հովուապետ. իսկ Էջմիածնի անուն չկայր, և Էջմիածին կայր իւր անտարբերութեան մէջ ընդարմացած։ Տեսաւ իմաստուն Ինքնակալն՝ որ մէկ տառապեալ փոքրիկ ազգ երկու գլուխ ունի, որոց մէկն մինչ տարէսար, ձորէձոր է ընկել, միւսն տեղէն չէ շարժել, ասաց մըտքումը, երկպառակեալ ազգն արժանի չէ անգլուխ գլխովք՝ կենաց. (գուցէ թէ տակաւին չգիտէր՝ թէ մեր անգլուխ գլխովք ճոխ ազգն՝

քաց յայնոցիկ երկուց, երկու այլևս ունի Տաճ-
կաց երկրումն 'ի Սիս և Աղթամար։)

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մինչ Էջմիածնի Հայրապետութիւնն այդպիսի
աննեբելի թմրութիւն ցոյց կուտայր իւր առա-
քինի հոգևոր զաւակաց՝ հայրենասէր դիւցա-
զանց ճգնաժամուն, Գանձասարայ Աթոռն ար-
դէն հեռաւոր Ռուսաստանն՝ որ դեռ նոր էր
մերժում իրմէն՝ բարբարոսաց աշխարհ՝ անունն,
իւր դաւազանի հետ պատուաստելով, ձեռքն
երկնցուցանել էր դէպ'ի Կ. Պոլիս. և մինչ Սիմէոն
կաթողիկոսն՝ դեռ ևս եպիսկոպոս դոլով 1755
թուին, Աղէքսանդր կաթողիկոսի մահէն յետ,
(մինչդեռ նոր էր ընտրվել Սահակ Ա.հագինն),
կըգտնուէր 'ի Պոլիս՝ Էջմիածնի նուիրակութեան
պաշտօնիս, Գանձասարայ Աթոռոյ կողմանէ
Սիւնեաց, Աղուանից կաթողիկոսի կոնդակաւ
եկեալէր Մովսէս եպիսկոպոս, հնարագէտ, ճար-
տար, ժիր, և ճարպիկ, փոքրամարմին և մե-
ծամտրուս վարդապետն, որ կարողանայ այն
տեղոյ ժողովրդեան հաճոյանալ և որսալ, որ
մոռանեն Գանձասարայ աթոռոյ վիճակաց կար-
դքն. և անունն դրել էր սուրբ Աթոռոյ ծայրա-
գոյն նուիրակ։ Յակոբ Պատրիարքն չկամելով
նորա ժողովարարութիւնն խափանել՝ լռելեայն
թոյլ ետ, և Մովսէս փոքրիկ արքեպիսկոպոսն
սկսաւ քարոզել և նուիրակութիւն ժողովել։
Սիմէոն ևս էր նորա նման փոքրամարմին, բայց
համեմատութեամբ Մովսէսի՝ խստաւ քարց ան-
մտրուս։ Լսեց Սիմէոն՝ որ Մովսէս՝ իւր քարոզ-
ների մէջ քարեր կարձակէ Էջմիածնի դէմ, և

Գանձասարն կըգովէ։ Սիմէոն իւր սովորական
եկեղեցւոյ ատեանն մէկ կիրակի օր քարոզելոյ
ժամանակն՝ տեսաւ որ Մովսէս եպիսկոպոսն ե-
կաւ, բայց ժողովրդեան մէջ փոքր ինչ ծնալէն
յետ՝ երեսն դարձոյց և կամենումէր եկեղեցիէն
ելանել։

Սիմէոն բարձրաձայն աղաղակեց, զի՞ է քեզ
Յով՝ զո՞ տեսեր և փախեար, և դու Յորդանան
զի՞ դարձար անդրէն։ Մովսէս իմացաւ՝ որ այն
քարն յիւր գլուխն էր ուղղեալ, բայց և ժողո-
վուրդն իմացաւ, և Մովսէս հնար չգտանելով
խուսափել՝ եկաւ և կանգնեցաւ դասն։ Այն
ժամանակն Սիմէոն իւր քարոզն շարունակելով,
Մովսէս եպիսկոպոսի՝ Էջմիածնի դէմ լարած նե-
տերն մէկ մէկ յետ դարձուցանելով, ժողովրդեան սիրտն նոր 'ի նորոյ առ Էջմիածին դրաւ-
եց, և իւր քարոզն այս խօսքերով վերջացոյց.
օրհնեալ ժողովուրդ. մորուս կուզէ՞ք՝ ահա Մո-
ա՛ւէս, քարոզ կուզ՞ք՝ ահա՛ քէօսէս։

Մովսէս եպիսկոպոսն առօրին փախաւ Կ. Պո-
լիսէն։ Այն ժամանակն Սիմէոնի հետ կայր և
նորա ձեռնասուն աշակերտն Յովսէփ վարդա-
պետ Արղութեանց. որ յոտից մինչև 'ի գլուխ
ճանաչեց զՄովսէս եպիսկոպոսն։

Եւ յորժամ զկնի ութ ամաց, 1763ին նստաւ
Սիմէոն յաթոռ Հայրապետական, առաջին հոգն
եղաւ Ռուսաստանի Հայերն առնուլ Էջմիածնի
հովանաւորութեան ներքոյ. և թէպէտ առաջին
ձեռնադրութեան նուագին տուել էր Յովսէփին
եպիսկոպոսական աստիճան, սակայն նա հարկա-
ւոր լինելով սուրբ Աթոռոյ այլ անօրէնութեանց

մէջ, ուղարկեց 'ի Ռուսաստան՝ ինչպէս վերն ասուեցաւ՝ զԴաւիթ (Թաւիշդար Ստեփանի եղբայր Խերոդինեանց) եպիսկոպոսն, որ էր առաջ 'ի միաբանութենէ Գանձասարայ, և յաւուրս Սիմէօնի մնաւ 'ի միաբանութիւն Էջմիածնի, տալով նմա կոնդակ 'ի 1766 ամի, և շատ ընծայք· բայց որովհետև Գանձասարայ կողմէն յԱստրախան նստած Առաջնորդն զանազան հընարներով կըխափանէր նորա գործն, երկու տարի արգելվեցաւ։ Սիմէօն կաթողիկոսն չկամէր բնաւ զՑովսէփ հեռացնել սուրբ Աթոռէն, նորա միջի խանդարեալ կարգերի և կանոնների նորոգութեան համար հարկաւոր դատանելով զնա, բայց երբ տեսաւ՝ թէ առանց նորա գործակցութեան Ռուսաստանի վիճակն դեռ երկար ժամանակօք օտար կըմնայ իւր Մօրէն՝ սուրբ Էջմիածնէն, յօժարեցաւ ուղարկել զնա 'ի Ռուսաստան, որպէս տեսանք։

Արդ Ներսէս սարկաւագն, որոյ այօք կըտեսանէր Ղուկաս կաթողիկոսն, որոյ ականջօք կը ըսէր, և որոյ շրթամբք կըխօսէր, մտածելով՝ որ Ցովսէփ արքեպիսկոպոսն այսքան զօրացեալ է Ռուսաստանի վիճակի մէջ, ուր երկիրն վայելում է անդորր խաղաղութիւն, հեռաւոր երկիրներէն ճոխ և բազմագանձ հայերն հաւաքվում են, նոր նոր դաղթականք նոր նոր հայաբնակ քաղաքներ են հիմնում, և առևտուրն յաջողում է նոցա ճոխանալ և հարստանալ, որ Խաչ վանից համբաւն մեծ մեծ հրիտակներ է հրաւիրում 'ի ձեռս Ցովսէփայ, որ կաթողիկոսի նման անկախ, ինքնագլուխ և անձնիշխան Սի-

մէօնի կարգադրութեամբք իւր վիճակի եկեղեցիք զարդարում է, ունի գեղեցիկ տպարան, որոյ տպեալ գրքերն ամենայն կողմն աշխարհաց ցրուելով, աւելի քան զամենայն նուիրակութիւս արդիւնաւոր եկամուտ են բերում վիճակին, և օրըստօրէ պիտի աւելի ճոխանան, ամենայն տեղ լսվում է նորա գովասանութիւնն, կասկածանաց մէջ ինկաւ, որ չլինի՞ թէ Ցովսէփայ փառասիրութիւնն այդչափով չյագենայ, և կամելով կաթողիկոս անուն ևս ունենալ, զսուրբ Խաչի վանքն՝ Հայրապետական աթոռ անուանէ, և Էջմիածնի գլխին՝ մէկ նոր Գանձասար դառնայ, որոյ իշխանութիւնն այնքան աւելի կըհաստատուի, որքան աւելի մերձ է սուրբ Խաչն տէրութեան կեդրոնին, և աւելի զօրանայ և տարածուի Ռուսաց տէրութիւնն, և թէ ժամանակաւ Ռուսաց տէրութիւնն տիրապետէ Արարատեան և Սիւնեաց աշխարհին մինչև յԵրասխ· որ արդէն դրել էր իւր դիտաւորութեան մէջ Մեծն Պետրոս՝ նպատակ իւրոց աշխարհակալութեանց սուրբ Խաչն՝ որպէս մերձաւոր կէտ առ կեդրոն թագաւորութեան, որոյ թեմի մէջ կըլինին մայրաքաղաքք, պիտի լինի գերագահ աթոռ· իսկ Էջմիածին և Գանձասար՝ ընդ իշխանութիւն նորա։ Այսպիսի երկիւղներ յարուցանում էր 'ի սիրտ երիտասարդ սարկաւագին ճշմարիտ ազգասիրութիւնն և հայրենասիրութիւնն, և անկոպար մտերմութիւնն առ սուրբ Աթոռն և առ Հայրապետութիւնն Էջմիածնի, որոյ համար զոհ ինչ չէր կարողանում խնայել։ Այս մթին խորհուրդներն, զոր յայնժամ չէր համարձակ-

վում ումեք յայտնել, որովհետև լի էր Էջմիածինն Յովսեփայ լրտեսներով, որք Հայրապետանոցի մեծաց և փոքունց քայլքն հաշվում էին, և ծանօթութիւն էին տալիս, մանաւանդ Ներսիսի խօսքերն, որոյ համբաւն և զօրութեան ազդեցութիւնն բաղում ուրեք զգալի էր։

Ներսէսի յետևէն այս անտանելի կասկածն որպէս մեկ ուրուական ամենայն տեղ շրջագայում էր, և պատճառ էր դառնում Ներսիսին կենամաշ լինելու։ բայց նա վախենում էր իւր երկիւղն յայտնել կաթողիկոսին՝ որ նորա ծերութիւնն այդպիսի մտածութեամբք նոր նոր վշտաց չմատնվի։ իսկ ինքն իւր մտաց ամենայն զօրութիւնն 'ի գործ էր դնում Յովսէփայ դժն կարիթակտոր առնել ծածուկ և 'ի հեռուստ լարադրութեամբ։

Ներսիսի առաջին թակարդը՝ զոր լարեց Յովսէփայ յառաջադիմութեան դէմ, և մանաւանդ Նորնախիջևանայ սուրբ խաչ վանից զարգանալն կոպար դնելոյ մտօք, եղև այն, որ Հընդկաստանէն՝ նորա արդիւնքն դէպ 'ի սուրբ Աթոռն դարձուցանէ, բայց դժուար էր այս, կոնդակներով անհնար էր առնել, հարկաւոր էր այնպէս մարդ դտանել, որ ձեռնհաս լինէր և Յովսէփայ ազդասիրական գործքերն, թէ ոչ հապառ կասկածելի, դէմ հայրենասիրութեան հակառակ ցոյց տալ, և սուրբ Աթոռոյ ծոցն բանալ այն կողմանց առատ տրոց համար, և Յովսէփայ նուիրակաց յանդիման՝ Հնդկաստանի դռներն փակել, և սուրբ խաչ վանից արդիւնքն իսպառ հատանել, և գժտութեան ինչ 'ի մէջ

կաթողիկոսին և Յովսէփայ նշան ցոյց չտալ, և ազգի մէջ մէկ նոր աղմուկ չյարուցանել։ Երկար քննելից և որոնելից յետ դտաւ զեփրեմ՝ յաշակերտաց Բերդումեանի, որ բարեբարոյ և պարկեշտ անձն գոլով՝ ձեռնհաս էր այն ամենայն գոնէ կիսով չափ գլուխ բերել։ և սկսաւ այն երևելի արքեպիսկոպոսին աշակերտի նման դասատարակութիւն տալ, թէ ինչպէս պիտի վարվի, իւրաքանչիւր ապստարանաց հատուածն՝ ինչպէս պիտի սկսի, և ուր՝ ինչ խոչընդոտն երևի՝ ինչպէս Սկիլլայի և Խարիւբդայի նեղ ճանապարհէն անցնի։ վերջապէս այս ևս առանձին պատուիրեց, որ Նորնախիջևանայ սուրբ խաչի անուամբ կոտակեալ հրիտակներն Էջմիածնի անուան վերայ դարձուցանէ։ իսկ թէ այդ չյաջողէ, գոնէ գործն այնպիսի դժուար ճանապարհաց մէջ դնէ, որ Յովսէփ չունենայ հնար ընդվզոյթ 'ի ձեռս բերել։

Երկրորդ մեքենայն այն էր, որ զվերոյիշեալ Մովսէս մեծամօրուս արքեպիսկոպոսն, որ նման Դաւիթ արքեպիսկոպոսին (Խարեդինեան) Գանձասարայ միաբանութենէն ելեալ՝ մտել էր Էջմիածնի սուրբ Աթոռոյ միաբանութիւնն, և ստէպ պատմում էր Սիմէօնի և իւր մէջ հրապարակական անցքն, Ներսէս տեսանելով նորա անհաշտ թշնամութիւնն ընդդէմ Յովսէփայ, և ցանկութիւնն լինելոյ գործիք վշտացուցանելոյ զնա, ընտրեց զնա առաքել 'ի Պոլիս առ Զաքարիա Պատրիարքն, որ նա Երուսաղէմայ Յովակիմ Պատրիարքէն ևս կոնդակ առնու և տայ Մովսէսի ձեռքն, որ նա այդպէս կաթողիկոսի

և երկուց պատրիարքաց կողմանէ երեք կոնդակ 'ի ձեռին՝ երթայ 'ի Ռուսաստան, և մատուցանէ տէրութեանն՝ Էջմիածնի և Երուսաղէմի և Պոլսոյ նուէրքն և կոնդակներն, որովք՝ երեք գլուխք՝ միաբան և միաբերան կբխնդրէին Ռուսաց կայսերական դրանէն՝ Յովսէփայ ձեռքէն առնուլ Ռուսաստանի Առաջնորդութիւնն, և տալ Մովսիսին, իսկ զՅովսէփ՝ որպէս անշուշտ հարկաւոր անձն Հայրապետական տնօրէնութեանց աղագաւ՝ ուղարկել Էջմիածին։

Թէպէտ իրաւի այս ամենք յաջողեց, այսինքն Ներսէս սարկաւագն զեփրեմ արքեպիսկոպոսն ուղևորեց դէպ 'ի Հնդկաստան, և առաւ զՄովսէս արքեպիսկոպոսն իւր հետ, և տարաւ 'ի Կ. Պոլիս, ուստի յաւուրս Յակոբ Պատրիարքի՝ Սիմէոնի քարոզով էլէքտրացեալ դարձել էր 'ի Գանձասար, և այժմ շնորհօք Ներսիսի գտաւ ընդունելութիւն Զաքարիա պատրիարքէն, և նորա զօրութեամբ՝ գնաց սուրբ Երուսաղէմ և մահտեսութեան արժանացաւ, և Յովակիմ պատրիարքէն ցանկացած կոնդակն ստացաւ, և վերադարձաւ 'ի Պոլիս, ուր 'ի պատրիարքարանի կբնակեր նմա՝ Ներսէս սարկաւագն. և այնուհետև երեք կոնդակ՝ Հայրապետական՝ Ղուկաս կաթողիկոսի, պատրիարքական՝ Պոլսոյ Զաքարեայ, և Երուսաղէմի՝ Յովակիմայ, և նշխարք սրբոց և մեծագին ընծաներ յանձնեալ նորա ձեռքն, Ներսէս նաև նստեցոյց զՄովսէս և ուղևորեց դէպ 'ի Ռուսաստան. բայց երկարատև ծովագնացութեան ժամանակն Սեաւ ծովի վերայ՝ առանց յաջողակ հողմ չգտանելով ծովի մէջ ան-

պարան կապեալ մնալով նաւին, և ապա յանկարծ ալէկոծութեան հանդիպելով, Մովսէս արքեպիսկոպոսն սրբոց մասանց մեծամեծ հրաշքներով փառաւորվեցաւ, և ողջամբ հասաւ 'ի Թագանրոգ. ուր նաւահանգստի մէջ իմացաւ՝ որ կայսերական հրամանաւ արգելեալ է Հայոց հոգևորականաց՝ առանց գիտութեան Հայոց Առաջնորդի, և առանձին միջնորդութեան նորա՝ մուտ գտանել 'ի Ռուսաստան։

Ըստ յաջողելոյ բաղդին Յովսէփի այն ինչ դարձել էր յարշաւանէն Վալաքիոյ և Մոլդաւիոյ՝ յետ հաշտութեան, և 'ի Նախիջևան կբնակեր գալստեան որբուկ մանկանց Հայոց, զորս ունէր մուծանել 'ի վարժարանն սուրբ Խաչ վանից, և կբպատրաստէր վասն նոցա զպիտոյս սննդեան, քաղաքական Թագանրոգի և ուսուցչաց նաւահանգստի նորա՝ բարեպատեհ ժամ գտանելով ծանօթանալ ընդ մեծահամբաւ Արհուն Յովսէփայ, ծանոյց նմա զգալուստ Մովսիսի արքեպիսկոպոսի. և նա հրամայեաց առաքել զնա առնա 'ի Նորնախիջևան առանձին, և զբեռինս նորա առանձին։ Եւ այսպէս Մովսէս արքեպիսկոպոսն անակնկալ անկաւ 'ի ճանկս Յովսէփայ։

Յովսէփ էառ 'ի Մովսէս արքեպիսկոպոսէ այսպիսի իմն ձեռագիր. «Թէ՝ ես արեղայ գոլով՝ խարեալ եմ զկաթողիկոսունն Էջմիածնի և Գանձասարայ և զմիաբանութիւնս նոցա, և սուտ եպիսկոպոս ձևացեալ՝ առեալ եմ զկոնդակ 'ի կաթողիկոսէն Էջմիածնի, և գնացեալ եմ 'ի Պոլիս և Յերուսաղէմ, և զկոնդակս ստացեալ, զի և 'ի Ռուսաստան զնոյն արարից. այլ սուտ խոս-

տովանեալ զյանցանս իմ և թողութիւն գտեալ ուխտեմ յայսմհետէ վարդապետ կոչմամբ ապաշխարել։ Այլ նուէրքն՝ զորս յանձնեալ էին ինձ յէջմիածին, 'ի Պոլիս և յԵրուսաղէմ՝ հասուցանել, հասուցի 'ի ձեռս սրբազան Արհուոյն Յովսէփայ, և չունիմ պահանջ ինչ. Մովսէս վարդապետ''։ Այս ձեռագիրն առնելէն յետ՝ Յովսէփ հրամայեց Մովսիսին երթալ յԱստրախան, և նստիլ լուռ. և հրաման գրեց իւր Մինաս աւագերեցին, որ զգոյշ լինի, և չներէ Մովսէսին ցոփաբանել։ Մովսէս վարդապետ այնպէս սասանեալ էր յերկիւղէ Յովսէփայ, որ երդմամբք և նզովիւք ուրանում էր իւր եպիսկոպոսութիւնն։ Ես յետ բազում ամաց տեսայ զնա յԱստրախան, որ 'ի մերձակայս եկեղեցւոյն Պետրոսի և Պողոսի ունէր փոքրիկ տուն և անդ կը-բնակէր, և իւր պատմութիւնն որպէս սերտած դաս՝ ամենեցուն կրնթեռնոյր անսխալ։ Իսկ Ներսէս՝ զկնի ուղևորութեան Մովսիսի՝ գնաց 'ի Զմիւռնիա, և անտի դարձաւ յ�չէմիածին, և ձեռնադրվեցաւ և ստացաւ վարդապետական աստիճան քսանևերկուամեայ դոլով 'ի 1790 ամի։

Բայց Զմիւռնիա եղած միջոցն, որովհետև Նորնախիջևանցիք ստէպ երթևեկ ունէին 'ի Պոլիս և 'ի Զմիւռնիա, Ներսէս ծանօթացաւ Նորնախջևանցւոց, և իմացաւ՝ որ Նորնախիջևանցիք ունին վեճ Յովսէփայ դէմ. վասնորոյ և ամեն իւր հնարքն գործ դրեց, որ այս վիճաբանութեանց մէջ միջամուխ լինելոյ առիթ գտնէ։ Վասն այնորիկ՝ երբ վարդապետութիւն ստացաւ՝ իւր համար մէկ առանձին պաշտօն յորի-

նեց այս, որ յորժամ Նորնախիջևանցի ուխտաւորք կուգային էջմիածին՝ երթալ 'ի Մուշ 'ի վանս սուրբ Կարապետի, Ներսէս վարդապետն կը ժողովէր զնոսա, կը տանէր առ կաթողիկոսն, և պատմել կուտայր իւրեանց վիճի հանգամանքն, և կը յորդորէր՝ որ Նորնախիջևանցիք Յովսէփայ դէմ բողոքեն առ Հայրապետական Աթոռն, որով բացուի ինքեան ճանապարհ Յովսէփայ սանձն իւր ձեռն արկանել. ինչպէս յետոյ կը տեսնենք։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նոր—Նախիջևանցիք՝ որ Տաւրիկեան նահանգէն գաղթեալ էին դէպ 'ի Դոնաւիս գետն, դեռ ևս՝ իւրեանց տեղերէն չշարժած՝ չորս երեւելի իշխաններ իւրեանց մէջէն էին ուղարկել 'ի դուռն կայսրուհւոյն ստանալ արտօնագիր 'ի մասին բնակութեան իւրեանց այնտեղ, զոր ինքեանք էին ըստ հաճութեան Տէրութեանն ընտրել։ Արդէն յայտնի էր ճիշդ ցուցակօք, որ թիւ ամենայն գաղթականաց Հայոց որք հանդերձեալ էին ելանել 'ի զանազան Հայաբնակ քաղաքաց թերակղզւոյն, 'ի Թեոդոսիոյ, յԵրզնկայ, 'ի Սիմֆերոպոլեայ, 'ի Պահճեսարայէ, 'ի Հին Ղրիմէ, 'ի Սուդակէ, 'ի Ղարասուէ, յՕրգափուէ, և յայլ բազում քաղաքաց, ամանաց և գիւղից, պարտ էր լինիլ համախումբ աւելի քան զերեքհազար հինգ հարիւր դերդաստանս, որք կրկնապատիկ աւելի կլինէին քան զամենայն հայս բնակեալս յայնժամ 'ի Ռուսաստան, որոց առաջնորդ էր Յովսէփ։ Ցանկալի էր յոյժ Յովսէփայ՝ որ այս բազմաթիւ գաղթա-

կանոք ճոխացընէ իւր թեմի հայ բնակչաց թիւն ; բայց անհնար էր . Տաւրիկեան հայք ունէին սեփական Առաջնորդ զՊետրոս վարդապետն Մարկոսեան առաքինաշարժ և դիտնական Արքեպիսկոպոսն , զաշակերտն Պետրոս կաթողիկոսի՝ Քիւթիւր կոչելոյ՝ որ վարեալ էր զՀայրապետութիւն ազգին ի 1748 ամի՝ ի վերջին ժամանակս բազմալեկոծ կաթողիկոսութեանն Ղազարու ։ Յովսէփ եդիտ հնար , զի մինչև պատգամաւորք չդիմեցին յօգնութիւն նորա , խնդրեալ և խոստացեալ արտօնագիրն չհաստատուեցաւ . այլ երբ Յովսէփ միջամուխ եղև , ամենայն խնդիրք Տաւրիկեցւոց կատարեցան առաւել քան զիարդ նոքա կ'ցանկային , և ի 1779 ամի տուաւ արտօնագիրն , և սկիզբն եղև չուոյն ։ ի կէս ճանապարհին՝ որ տևեաց դոգդես ամ մի , վախճանեցաւ բազմերախտ Առաջնորդ ուղեգնաց ժողովրդեանն Պետրոս Արքեպիսկոպոսն Մարկոսեան, և առաջնորդութիւն նոցա յարքունուստ յանձնեցաւ Սրբազանին Յովսեփայ ։

Յովսէփ նոր Յեսու կանգնեալ ի գլուխ այս դաղթականաց՝ ողջամբ հասոյց զնոսա յուխտեալ տեղին , որ նոցա համար էր երկիր աւետեաց, և հիմնեց անդ զնոր—Նախիջևան քաղաքն՝ յանուն քանի Նախիջևան քաղաքաց և գիւղից , զորս թողին ամայի ի թերակղզւոջն ։

Հայք Տաւրիկեան գաւառի՝ գոլով սերունդ այն հայոց՝ որք գաղթեալ էին ի կողմանցն Անւոյ , իրագործել էին այն՝ ինչ որ միագամաւորէն պահել էր աւանդութիւն ազգի , թէ Անի ունէր քաղաք և մի եկեղեցի . և բնակէին Տաւրիդայ

հայք՝ իւրեանց եկեղեցեաց թիւն հասուցել էին մինչև յայս հրէշաւոր բազմութիւն . և իւրեանց երանելոյ ժամանակն՝ իւրեանց հետ առել էին ոչ թէ միայն եկեղեցեաց ոսկեղէն և արծաթեղէն սրբութեան անօթներն , այլ և պղնձեղէն բաղում յոյժ , և վէմեր և տապանաքարեր , յորս նշանաւոր էր Պարոն Լոյս նահատակի դերեզմանի վերայ դրած վէմն յաւուրց Սարմատացւոց ձեռագործ յունական արձանագրութեամբ ։ Այս ամենն՝ որպէս եկեղեցական ստացուածք յանձնեալ էին հանգուցեալ Պետրոս Առաջնորդին . իսկ յետ վախճանի նորին յիւրի անցին 'ի ձեռս Յովսեփայ , որ թէպէտ այր , չինեց քաղաքի մէջ վանք և գիւղորէից մէջ՝ հինգ եկեղեցիք , և մէկ Սուրբ Խաչ վանք՝ յանուն հին Ղրիմու Սուրբ—Խաչի վանից , և նոցա մէջ որպէս թէ բաշխեց այն հազար և մի եկեղեցիքն զարդ արոզ զգեստքն ոսկեղէն և արծաթեղէն անօթքն , բայց այն հանած բաժինն էր որպէս ուղտէն՝ մի ականջն . իսկ ձեռագրեալն՝ մնաց Յովսեփայ ձեռին՝ ընդ տեսչութեամբ Գրիգոր Վարդապետի , որոյ համար երբեմն ասել էր Քիթապ իւտան Թադէոս վարդապետն , թէ Օրումայայ՝ հասատա տբր , փարայ ալմայա՝ ուստա տբր ։ Նոր—Նախիջևանցիք տեսանելով որ իւրեանց եկեղեցեաց ճոխութիւնն մնալ է եկեղեցականաց՝ բաղում ուրեք անխոհեմաբար կասկածելի անօրէնութիւն , մինչ իւրեանց նոր գաղթականքն ունին բիւրատեսակ կարիք , և միայն կծանրանան ոմանց մեծատանց վերայ, որոց քրիստոնէական եղբայրսիրութեան և ընդերոնչութեան անբնդհատ առատաձեռնու-

թիւնն կ'սպառնայ տնանկութիւն և չքաւորութիւն, և առաւել նշմարելով որ այն եկեղեցական գանձն դէպ յԱստրախան կերթայ; և Գրիգոր վարդապետի մերձաւորոց շրջակայքն կ'փարթամացնէ, սկսան իրաւամբ տրտունջ բառնալ։ Բայց երբ Յովսէփ Թովեալճարպիկ լեզուաւ ընդ բազում ծակքանս ելեալ Գրիգոր Վարդապետին իւրոյ՝ ականջ դնել չբարեհաճեցաւ իրաւացի քանքարտանաց, աղերսից և դառնակսկիծ արտասուաց՝ ի պատճառս երկրէ յերկիր տարագրութեան տնանկացեալ, Նորնախիջևանցւոց, Նորնախիջևանցիք բռնադատեցան Ներսէս վարդապետի իրաւունս ունկնդիր լինելով առաջ դիմել առ Ղուկաս կաթողիկոսի պաշտպանութիւնն, և յետոյ՝ յորժամ նորա միջամտութիւնն չազդեց ինչ, ըստ ուղղութեան Ներսէս վարդապետի զվէճն իւրեանց փոխադրել յաշխարհական ատեան, և վերջապէս բողոքել առ Կայսր։

Յայս վայր Յովսէփ՝ Նորնախիջևանցւոց գործերն տղայական խաղ վարկանելով՝ որպէս ճանճից բզզանք կհամարէր, և միայն հովահարաւ վանել բաւական կկարծէր. բայց երբ տեսաւ՝ թէ Ներսէս վարդապետն իւր յետին ճիգն սկսաւ թափել, մէկ կողմն դրեց ամենայն ինչ, և առաւ ի ձեռն՝ զդաւազանն զօրութեան։ Եթէ ինքեան Յովսէփայ ապաստան լիներ գործն, նա չէր սահիր յայնքան չափազանցութիւն, այլ յայտնի շօշափելով որ եթէ այլևս պաշտէ զաղդասիրութիւնն՝ Գրիգոր վարդապետն իւր պիսի յանդարձ կորուստ մատնի, և նորա նախա-

տինքն աւեր արկանէ իւր սեռակնափայլ փառփիւնի վերայ, վասն որոյ և ի գործ եդ իւր ահեղ հեղինակութիւնն, և այնպէս 'ի նեղ էարկ զՆորնախիջևանցիս, որք մատնեցին նորա կամաց զերկուս սկզբնապատճառս խռովութեան, զՄանուկ Դերջանեանն՝ մահանուանեալն Երանելի, և զտիրացու Գաբրիէլ Մարթինեան զայրն խռովայոյզ և անհանդարտ։ Այս ամենայն ազգամիջեան շփոթից արդասիքն այս եղաւ, որ Յովսէփ՝ հակառակ իւր բնիկ բարեսէր կամաց՝ իւրակառոյց քաղաքի մէջ ստիպուեցաւ կանգնել՝ իւր համբաւոյն նսեմացուցիչ կոթող, զտիրացու Գաբրիէլ Մարթինեանն՝ որպէս անարժան իւրոյ բարկութեան անվատեալ յընկերակցէն, միայն զերանելի Մանուկն եդ դատակնքել ի Սիբիր ի տարագրութիւն, յորմէ Նորնախիջևանցիք զարհուրեալ՝ բռնադատուեցան լռել առժամայն։

Ներսէս վարդապետն տեսանելով զայս անյաջող ելս իրաց՝ և առաւել սկսաւ գրգռել զՂուկաս կաթողիկոսն ընդդէմ Յովսէփայ, յորոյ վերայ կամէր իշխել յաղթահարելով, որպէս արդէն կ'իշխէր կամաց Հայրապետին՝ հաճոյանալոյ արհեստի ճարտարութեամբ։ բայց ցորչափ Յովսէփ չէր ցոյց տայր նշան կամաց ի նուաճվիլ, Ներսէսի մէջ այնքան կզօրանար փափագն տեսանելոյ նորա զօրութիւնն նուազած, որ նորա բարի համբաւն մինչև ի վերջն չտևէ. և թէ մէկ կողմէն կ'գրգռէր զմիաբանութիւնն էջմիածնի ընդդէմ Յովսէփայ՝ որպէս ընդդէմ ապստամբի, որ կը պատառէ զքող գլխոյ Հայրապետաց.

թեան Հայոց, միւս կողմէն ամենայն հնարագործ կդներ դարձուցանել յաքսորանայն զերանելի Մանուէլն, զոր թէպէտ ոչ կարաց ի գլուխ հանել՝ մինչ կենդանի էր Յովսէփ, բայց յետ վախճանի նորա յաջողեաց անյայտ հնարիւք, և՝ հազիւ մարթացաւ թմրեցուցանել ըզխայթ խղճին, որ նեղէր զնա տիւ և գիշեր. իսկ էջմիածնցւոց գրգիռն հասաւ յայն աստիճան որ բոլոր միաբանութիւնն սկսաւ ողողակել ընդդէմ Յովսէփայ, թէ ոչ գինքն կ'ուզենք և ոչ նորա ազգին արած բարիներն. յորոց մինչի Օսմանեան երկրէն եկած կարգաւորք կ'ասէին այն կողմանց սովորական առածն, Նէ Շամքն չէքէրի, նէ արաարն իւղիւ։

Բայց Յովսէփ ոչ Ներսէս վարդապետի, ոչ էջմիածնցւոց, և ոչ իսկ Նորնախիջևանցւոց գրգռութենէն ամոխված, առեց իւր դաստակերտ Նորնախիջևանն, այլ միշտ կցանկայր տեսանել նորա մէջ բնակեալ, որպէս և իւր բոլոր վիճակի մէջ ցրուեալ Հայոց անտերունչ ազգի այն գուզնաբեայ մասն ծաղկած. և այս իսկ պատճառաւ՝ ինչ լաւ բան կ'գտանէր, իսկոյն Նորնախիջևանի մէջ կտարրացնէր և կզետեղէր, նմանալով՝ որ սեռնակի մէջ որքան աւելի լինի վառեալ ճրագ, այնքան աւելի լուսաւոր կլինի, վասն որոյ տեսանք որ Ս. Կ. Բուրգ քաղաքի մէջ՝ գտաւ խալգարեան Գիւղոր Աղայի գեղեցիկ տպարանն, գնեց իւր դրամովք, այսինքն այն դրամովք՝ որ նա իւրացուցել էր, և Նորնախիջևանցիք կղահանջէին։ Նոյն դրամովք գնել ե՝ և Սուրբ Խաչի վանից վայելուչ տեղն

Պանուէլ աղայի միջնորդութեամբ, յորում կարոյց սրբատաշ վիմօք Սուրբ Խաչի եկեղեցին, վանահօր և միաբանից բնակարանն, և շրջապատ բոլոր լայնածաւալ սրահի ընդարձակութեամբ ուխտաւորաց սենեակներ. յորս յետոյ երբ նոր գրաւեալ տաճկաց քաղաքներէն վաղարշոյ և Մոլդաւիոյ դաւառաց, Իսմայիլէն, Գիլիէն, Ակքիրմանէն, Խաւշանէն գաղթեց ըզբազմութիւն Հայոց և բնակեցոյց ի 1791 ամին Գրիգորիսպոլիս քաղաքն, այն դաղթականաց մէջէն ընտրեց եօթանասուն և երկու մանկունք որբք, և բերեց Նորնախիջևան, աւելցուց Սուրբ Խաչի վանից մէջ նոցա համար թէ՝ բնակարան և թէ՝ վարժարան, և վարժապետաց բնակութեան տուն. և անդ սկսան այն անհայր անմայր մանկունք և պատանիք կրթվիլ ի ձեռս այնպիսի վարժապետաց՝ որք կային առժամն պատրաստ։ Բայց տեսանելով՝ թէ այս լիաթոշակ աշակերտաց արժանաւոր կրթութիւն տալոյ համար անբաւական և անձեռնհաս են այն վարժապետք՝ որք կային ի Նորնախիջևան, և որք ձեռնհասքն էին՝ նոքա ևս անշուշտ հարկաւոր էին քաղաքական վարժարանին՝ ի պէտս զաւակաց քաղաքացեաց, և մանաւանդ Յովսէփ այն անձն չէր, որ ամեն վարժապետ անուն կրողաց, որ չեն կարող մանկանց այն դաստիարակութիւնն տալ՝ ինչ նա կցանկայր Հայոց մանկանց համար, վարժապետական պաշտօն յանձնէր, հարկադրուեցաւ օրինաւոր վարժապետ որոնել, որ ոչ միայն վարժապետութիւն անէ, այլև վարժապետներ դաստիարակէ։ Լսեց Յովսէփ աբհին՝ թէ վա-

Բոլոր և Մոլդաւիոյ կողմերն կ'շրջագայի մէկ լաւ քարոզիչ վարդապետ՝ Թադէոս անուն, Մաքրաշեան Կոստանդնուպոլսեցի, Քիթապիւտան (Մաուռնակուլ) մականուանեալ Զաքարիայ պատրիարքի անամօք կրթեալ աշակերտներէն. թէպէտ և ընդ նմին լսեց թէ դիւնեսէր է, բայց այսու ամենայնիւ նորա անձին մէջ դիտութիւնն յարգելով, և մարդ կօրէն ակարութիւնն անտես առնելով, հրաւիրեց զնա և կարգեց զնա վանահայր Սուրբ Խաչ վանից, Տեսուչ վարժարանի և տպարանի և երկրորդ իւր՝ 'ի վերայ եկեղեցեաց քաղաքի և գիւղերից և ամենայն եկեղեցականաց որպէս քորեպիսկոպոս։ Այս լուրն հասաւ յունկն Ներսէս վարդապետի, և հաստատեց զնա այն կարգածանաց մէջ, զոր ունէր Սուրբ Խաչի վանից համար, թէ նա կրնի Յովսեփայ ձեռին հակառակաթոռ էջմիածնի. վասն որոյ և նա փութացաւ ի ձեռն ուխտաւորաց Նորնախիջևանայ դրդել զքաղաքացիս, որք թշնամի էին Յովսէփայ, և համախոհ էին Ներսիսի, և միայն Երանելի Մանուկի աքսորման երկիւղէն սասանեալ՝ էին լռել, որք այժմ սկսան միաբերան պահանջել, որ Յովսէփ հանէ Սուրբ Խաչէն ոչ միայն զԹադէոս հրաշագործ վարդապետն, այլև զտպարանն և զվարժարանն. մինչ Սուրբ Խաչն սեպհական կալուած էր Յովսեփայ, իւրով կամ իւրացուցեալ արծաթով ի սեպհականութիւն քաղաքին և եկեղեցեաց նորա գնեալ։ Յովսէփ այս բանի մէջ յատկապէս Ներսէս վարդապետի մատն տեսանելով, մանաւանդ այն միջոց մէկ նոր ազգասիրական հանդէս յանդիման

իւր բացուած տեսանելով, և ճանաչելով՝ որ կռուով և հակառակութեամբ՝ ազգային գործերն չեն յառաջանար, թէև Գրիգոր վարդապետն շատ ջանաց խափանել, բայց նա՝ լաւն և վատն որոշել ձեռնհաս լինելով, բարւոք համարեցաւ այն վարժարանն և եօթանասուն և երկու աշակերտքն, և տպարանն և զԹադէոս վարդապետն փոխադրել յԱստրախան, ուր էր իւր Առաջնորդարանն և թեմական հոգեւոր ատեանն որ փոքր գործոյ համար կամակորութիւն անելով, մեծագոյնն չխանգարէ։ Ի՞նչ էր այս մեծագոյն ազգասիրական բարին, որն որ յղացել էր նորա վեհանձն հոգւոյ մէջ. հրաւիրել յիւր վիճակ զԲասենցի Յարութիւն վարդապետն և զՀ. Միքայէլ Զամչեանն, որոնք եթէ գան և սիրեն այս վիճակն, այն ժամանակն հրաւիրել և զմիաբանութիւն Մխիթարեանց և տալ իսպառ ի ձեռս նոցա զսուրբ Խաչի վանս Նորնախիջևանայ, և զկատարինեայ եկեղեցին Աստրախանայ, զմին՝ վասն եղբայրութեան Ղազարու վանից Վենետկոյ, և զմիւսն՝ վասն բաժանեալ եղբարցն Թրեստի։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Հայոց Պատմութիւնն Հ. Միքայէլի Զամչեան՝ որ տպուել էր ի Վենետիկ ի 1784 թուին, յետ ամաց ինչ եկել էր և յէջմիածին, և Ղուկաս կաթողիկոսն չիմանալով՝ թէ ի՞նչ է, միայն ոսկեզօծ կողից և գեղեցիկ կազմի աղագաւ դրեր էր ի շարս իւր գրեանց, զորս բնաւ չէր սիրեր ընթեռնուլ։ Յորժամ Ներսէս եկաւ ի1787 թուին էջմիածին, և մնաւ ի սպասաւորութիւն

Ղուկաս կաթողիկոսի, որովհետև դեռ ի Պոլիս տեսել էր. զայն և կարդացել, առաւ երրորդ հատորն և սկսաւ միաբանից ցոյց տալ, թէ տեսէք ի՞նչ է գրել Յովսէփայ համար Ագթարմայ Միքայէլ Պատրին, և բացեալ զմատեանն տբուեց ընթեռնուլ, որ Յովսէփայ անունն ոչ իշխանաձնեայ էր գրած, ոչ Երկայնաբազուկ, և ոչ Արղութեանց, այլ լոկ վարդապետ Մարկոսեան։ Թէպէտև Յովսէփայ լրտեսքն խսկոյն գբրեցին նամակներ առ Յովսէփ, բայց որովհետև Յովսէփ ինքն Ռուսաց բանակի մէջ էր, նորա նամակներն մնում էին փակեալ ծրարի մէջ, մինչ նա վերադարձաւ յԱստրխան, ուր արդէն եկել էր և Թադէոս վարդապետն և տպարանն և աշակերտքն սուրբ Խաչ վանից։ Երբ սկսաւ իւր անուամբ եկած նամակներն բանալ և ընթեռնուլ, նոցա մէջէն գտաւ և էջմիածնի լրտեսների գրութիւնքն. խսկոյն հարցուց Թադէոս վարդապետին, նա սուտ չգիտցող ձևացաւ. սկսեցին որոնել Աստրախանայ մէջ Հայոց Պատմութեան երեք հատորներն, զորս ունէր միայն ընթերցասէր Գրիգոր Գէորգեան Ամիրաղեանց՝ Փասոյեան մականուանեալ. բայց նա ևս կասկածելով՝ որ դրեանց վերայ մէկ արգելք չդրուին ծածկեց և ուրացաւ։

Յովսէփ գրեց, և Զաքարիա Պատրիարքն հասոյց այն Հայոց Պատմութեան երեք մատեանն։ Յովսէփ ախորժանօք սկսաւ ընթեռնուլ առաջին հատորն, որոյ հին պատմութիւններն նորան ի վաղուց ծանօթ էին, տակաւին Սիմէոն կաթողիկոսի աշակերտութեան ժամանակէն,

Բասենցի Ցարութիւն և Բերդումեան Պետրոս արքեպիսկոպոսաց և Էջմիածնի գրատան մէջ ունեցած պատմական ճոխ աղբիւրներէն. նոյնպէս աջողակ անցաւ և երկրորդ հատորն։ Բայց ճաշու ժամանակ սեղանատանն անդադար գանգատ կանէր, թէ քաղկեդոնիքներու համար՝ վախճանեցաւ, զրաւեցաւ ի կենաց, ի տէր փոխեցաւ և այլ այսպիսի բառերով կըգրէ. իսկ որք Հայոց եկեղեցւոյ ջատագով են եղել, մեռաւ կըգրէ։ Թադէոս բնաւ նշան ցոյց չէր տար որ և այն վաղգիտէ, և Զաքարիա Պատրիարքն այդպէս անզգամութեանց համար բարկանալով՝ հալածանք կըյարուցանէր լատինահայ կարդաւորաց և ժողովրդոց դէմ։ Բայց երբ եկաւ երրորդ հատորոյ այն գլուխներն, ուր կը զրպարտէ զերևելի վարդապետս մեր թէ՝ կամ միաբանել են ընդ ունիթոռաց, կամ հպատակութիւն են ցոյց տուել Հռոմայ գահին, կամ ուր Նիկոլի պատմութեան վերջերն բանաստեղծութեամբ է լցրել, կամ Մխիթար Աբբայի ուրացութիւնն իբրև զճշմարտութիւն գտանել է կեղծաւորել, զարմացաւ. այլ յորժամ հասաւ այն տեղերն, ուր՝ իւր իսկ Յովսէփայ ականատես եղեալ անցքերն ի հաճոյս քօլէճցւոց և գաղատացւոց սկսել է բռնաբարել և աղաւաղել, զայրացաւ. և դեռ չգիտէր՝ թէ ազգասէր Սիմէոն կաթողիկոսի վերայ ինչպէս է խօսել. հասաւ այնտեղ՝ ուր Սիմէոն արքեպիսկոպոսն՝ Սիմոն է գրած, և մինչև վերջն՝ Սիմոն և Սիմոն. վերջընթեր երեսումն՝ Նորնախիջևանուց Տաւրիկեան Թերակղղիէն գաղթելն, և իւր անունն

Թիֆլիզցի Յովսէփ վարդապետ Մարկոսեան՝ Առաջնորդ Աժտէրխանու գրած է, որոյ վերայ Էջմիածնի մէջ Ներսէս այնքան ծիծաղելէր աբուել միաբանից, վիրաւորեցաւ և հրամայեց իւր Թադէոս վարդապետին մէկ լաւ նամակ գրել առ Հ. Միքայէլ Զամչեան. և նա գրեց այն նամակն անուամբ Աստապատցի տէր Յակոբի որդի տիրացու Պետրոսի, որ նորա վարժարանի աշակերտաց մէջէն էր, (յետ ժամանակաց եղեւ Պետրոս վարդապետ Աստրախանայ) և մի առ մի ցոյց տալով Զամչեանի թէ անգիտութեամբ սխալներն թէ կամաւ ի ճշմարտութենէ շեղիլն և ախտակրութեամբ ստայօդ բաղբաղայք կցկըցելն, ուր յայտնի ցոյց տուած էր Գրիգոր Պատրիարքի զրպարտութիւնն, ուղարկեց ի Պոլիս՝ (ուր էր յանժամ Հ. Միքայէլ Զամչեանն), բաց եդեալ ի նամակի Զաքարեայ Պատրիարքի՝ Այլ երանելի Հ. Միքայէլն՝ փոխանակ սխալներն ուղղելոյ՝ իւր գիտութեան անարժան՝ և մանաւանդ ազգային պատմութեան հեղինակի անվայելուչ ձևով նամակ գրելով՝ պատասխանելէր Գալուստ դպրի անուան ներքոյ ծածկեալ զիւր անուն, որոյ՝ որքան որպէս պատասխան նամակի՝ շարադրութիւնն էր չքնաղ, պանծալի, այնքան՝ որպէս պատասխանուոյ ճշմարիտ պահանջից դառն և լի յանդգնութեամբ էր իմաստն. որով ամենայն ոք ունէր իրաւունք զչարիլ և զայրանալ։ Բայց Յովսէփ փոխանակ բարկանալոյ և դառնանալոյ՝ միտքը դրեց հաշտեցուցանել զնա ընդ եկեղեցւոյ Հայոց, և դարձուցանել ի ծոց սուրբ Էջմիածնի։ Մէկ քաղցր և ամոք նամակ

գրել տուեց իւր կողմանէ առ Հ. Միքայէլն և առաջարկեց որ նա ի բաց դնէ այն կեղծ դիմայլակն՝ որ ակամայ կըկրէր, և գայ իւր վիճակն յԱստրախան և փոխանակ հօրանց ուլուց արօտականաց՝ լինի հովիւ ոչխարաց ի փարախի սուրբ Լուսաւորչի, և կըխոստանայր նմա մեծամեծ երդմամբ զամենայն ինչ՝ զոր միանգամ հնար լինէր տալ՝ չմնայել նորամէն։

Երբ այս նամակն յուղի անկաւ առ Հ. Միքայէլ Զամչեանն, մէկ նամակ ևս գրեց Յովսէփ առ Բասենցի Յարութիւն արքեպիսկոպոսն՝ որ էր ի Թրեստ, և առաջարկեց, կամ լաւ ևս՝ որդիաբար աղաչեց և աղերսեց, որ նա գայ իւր վիճակն և երդմամբ խոստանում էր պատուել զնա որպէս իւր Հայր և Հայրապետ. և այս նամակի մէջ գրել էր, թէ ցանկամէ զբոլոր Միաբանութիւնն Մխիթարեանց հրաւիրել և տալ նոցա վայր բնակութեան ի Նորնախիջևան՝ ի նոր ակառոյց սուրբ խաչի վանսն, և յԱստրախան ի սրահի սուրբ Կատարինեայ եկեղեցւոյ, և զքեզ (զԲանսեցի սրբազան Յարութիւն Արքեպիսկոպոս) ընդհանուր Աբբայ կարգել երկուց այնոցիկ հռչակաւոր վանից, որոց մին չինած էր արդէն, և միւսն մոռադիր էր չինել. և այսու ցոյց էր տուել՝ թէ ինքն միայն Առաջնորդ անունն կրելով՝ պիտի լինէր գոհ, իսկ ամենայն առաջնորդական տնօրէնութիւններն կամէր յանձնել նմա, և որոց նա առաջարկէ. ուխտելով ընդ նմին՝ որ առանց նորա ընտրութեան և հաճութեան ձեռնադրութիւն չներէ իւր վիճակի մէջ. և նովաւ արդիւնաւոր մշակք բաղ-

մացնէ յայդուոյն Քրիստոսի, և քաջ հովիւք ի մէջ հօտի նորա։ Այս երկու նամակքն ևս ի մի ծրար եդեալ առաքեաց առ Զաքարիա Պատրիարք վաղածանօթ բարեկամն իւր, ոչ միայն բաց և անկնիք, այլև իմաստք երկուց նամակաց ևս ընդլայնեալ ի նամակի Պատրիարքին, որով հայցէր, զի Զաքարիա Պատրիարքն՝ որպէս հին բարեկամ ոչ միայն հետամուտ լինի համոզել Հ. Միքայէլ Զամչեանին ի մօտոյ երես առ երես խօսելով, և սրբազան Յարութիւն արքեպիսկոպոսին Բանսեցւոյն ի հեռուստ նամակագրութեամբ, որ նոքա անշուշտ յօժարին գալ ի Ռուսաստանի վիճակ իւր, ուր հունձք բազումք են, և մշակք սակաւք, այլև ի գործ դնէ իւր պատրիարքական հեղինակութիւնն և հանդուցեալ Սիմէոն սրբազան կաթողիկոսի նոր տօնացոյցն մուծանէ յեկեղեցիս Հայոց ի տէրութիւնն Օսմանեանց, որ ազգի մէջէն վերանայ սոպռ կամապաշտութեամբ մնեալ հերձուածոց հոգւոյն տարաձայնութիւնն, որ առիթ է դայթակղութեան ազգիտաց։

Զաքարիա Պատրիարքն բարւոք կատարեց իւր միջնորդական գործն, հրաւիրեց իւր պատրիարքարանն զՀ. Միքայէլ Զամչեան, ետ նորան Յովսէփայ Սրբազանի նամակն, և ընթերցաւ յունկս նորա Յովսէփայ առ ինքն և առ սրբազան Յարութիւն Արքեպիսկոպոսն գրեալ նամակներն և յորդորեց որ լսէ և ընդունի Յովսէփայ հրաւէրն, և սկսի այդ Յովսէփայ բարի դիտաւորութիւնն ի գլուխ հանելոյ աղագաւ՝ սրբազան Յարութիւն Արքեպիսկոպոսի հետ նամակակից լինել։

Հայր Միքայէլն Զամչեան ամաչելով իւր բիրտ և տմարդի յանդգնութենէն՝ արտասուել է՝ ընթեռնլով Յովսէփ Արքեպիսկոպոսի արժանաւոր նամակն, և խոստացել է սրբազան Յարութիւն Բասենցւոյ հետ թղթակցութիւնն սկսել և շարունակել միշտ տեղեկութեամբ Զաքարիա Պատրիարքի, որ հոգւով ցանկացող էր ի կատար հասուցանել Յովսէփայ Արքեպիսկոպոսի ազգասիրական խորհուրդներն։

Մինչդեռ Հ. Միքայէլ Զամչեան և Բասենցի Յարութիւն Արքեպիսկոպոսն այս առարկայի վերայ բանակցութեան մէջ էին, Զաքարիա Պատրիարքն տօնացուցի առարկութեան կողմանէ մի ուրախառիթ համբաւ հաղորդեց սրբազան Յովսէփ արքեպիսկոպոսին, որ Պոլիս սկսել են Սիմէոն սրբազան կաթողիկոսի տօնացուցի շաւղք՝ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի գիւտի նշխարաց տօնախմբութեան օրն՝ վերստին ի շարս կիւրակէից դնել, որ ի քանի ժամանակաց հետէ հերքած ունէին։ Ուրախացաւ և ցնծացաւ Յովսէփ՝ որպէս այն որ գտանէ աւար բազմաեօթն անգամ հետզհետէ ընթերցաւ այն ուրախարար նամակն, և ակնապիշ սկսաւ այնուհետև սպասել սրբազան Բասենցի Յարութիւն Արքեպիսկոպոսի և Հ. Միքայէլ Զամչեանի առ իւր նամակն պատասխանին։ Սպասած պատասխանն եկաւ. բայց շատ հեռի էր նորա ակնկալութենէն և մանաւանդ նորա ազգասիրութեան հրով բորբոքուած ցանկութենէն։ Բասենցի Յարութիւն սրբազանն և Հ. Միքայէլ Զամչեանն միասին մէկ նամակ էին գրել առ սրբազան Յովսէփ արքեպիսկոպոսն։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Նամակի իմաստն էր ծնունդ մտաց Բասենցւոյ՝ իսկ շարադրութիւնն էր Զամչեանի, որոյ և ձեռամբ իսկ էր գրեալ. բայց նամակին ձեռագրել էր նախ Յարութիւն Արքեպիսկոպոսն Բասենցի, և ապա Հ. Միքայէլն Զամչեան. և դարձեալ ի ծրար նամակի Զաքարիա Պատրիարքի փակեալ ուր երկոքին ևս զկնի յայտնելոյ իւրեանց այնչափ ուրախութիւնն, յաւելեալ էին, թէ ոչ միայն նոքա երկոքին, այլ և երեք հոգի ի Մխիթարեան միաբանութենէ Թրեստի՝ պատրաստ են բանալ այդ դուռն, ընդոր անշուշտ պիտի նոցա յետեւէն մտանեն ամենայն միանձունք երկուց ուխտից սրբոյն Ղազարու՝ թէ կանուխ և թէ անագան, եթէ լինի հաշտութիւն ի մէջ Յովսէփայ Արքեպիսկոպոսի և Ղուկաս կաթողիկոսի, որ նոքա իւրեանց տեղերէն շարժելով և իւրեանց արդի վիճակն կորուսանելով՝ չանկանին ի յորձանուտս Սկիլլեայ և Խարիբդեայ՝ ընտանեկան կռուոյ և տարաձայնութեան մատն լինելով՝ հանդերձեալ բարեաց ակնկալութեամբ։ Վերջանձն և աղնուասիրտն Յովսէփ իրաւունք տուեց այս ազգօգուտ պահանջից որ մարգարէական հոգւով ճանաչեց թէ Բասենցւոյ քաղցր և հայրենասէր սրտի մէջ է յղացած. ուրախացաւ անպատմելի ուրախութեամբ, և քաջ գիտելով՝ որ առանց Ներսիսի հզօր միջնորդութեան անհնար է հասանել այն փափագելի հաշտութեան, ի բաց դրեց իւր այսքանամեայ բարկութեան գրգիռներն, առաւ գրիչն ի ձեռն, և մի լի խոնարհամիտ աղաչանօք հրապատակութեան թուղթ գրեց առ Ղուկաս կաթուղիկոսն՝ որպէս առ իւր գլուխ և Հայրապետ, և յայլորդ Սրբոյ Լուսաւորչին Գրիգորի, և Սրբոյ Առաքելոյ Թադէոսի և Բարթուղիմէոսի, և մէկ քաղցր, հեզ և քրիստոնէական բարեպաշտութեան հոգւով զգածեալ նամակ առ մատաղաւուրց Ներսէս վարդապետն, յորս սքիռեալ էր իւր արտասուախառն աղաչանքն յոտս նորա, ընդ ձեռն նորա՝ ընդ դարշապարօք Ղուկաս կաթողիկոսին, և՝ որ լին էր անթերի տմենայն բարեօք աշխարհի, որպէս ամենակարօտ հայցէր, որ Սրբազան վեհապետն Ղուկաս՝ միջնորդութեամբ մարմնացեալ Հրեշտակի՝ Սրբակրօն Ներսիսի Արհիամեծար ծայրագոյն վարդապետի՝ ներողութիւն շնորհէ նորա այնքանամեայ ապստամբութեան, և այն վիճակն՝ որոյ մէջ արդէն ծերացել էր, և զոր Գանձասարայ իշխանութենէն հանեալ՝ արկել էր ընդ գաւազանաւ Հայրապետութեան Էջմիածնի, նոր ի նորոյ պարգևէ նորան՝ որպէս հայրապետական շնորհ, և հաստատէ նորա մէջ իւր Առաջնորդութիւնն, զոր այնքան հաստատ ունէր ի ձեռին զի և դրունք դժոխոց չէին կարող դրդուել. և աղաչել էր՝ որ Ղուկաս կաթողիկոսն առանձին կոնդակ գրէ յանուն կայսրուհւոյն, և ի նմին միջնորդէ յանձնել նմա՝ (այսինքն Յովսէփին) Ռուսաստանեայց Առաջնորդութիւնն, զոր վաղուց էր խնդրեալ և ստացեալ Հայրապետական կոնդակն Սիմէոն կաթողիկոսի, որ և կայսերութիւնն իմանայ՝ թէ Յովսէփ հաստատիմ որդի է սուրբ Աթոռոյ և հպատակ Հայրապետական իշխանութեան։

Ցովսէփ՝ որ ի սէր ազգի իւրոյ անձն այսքան նուաստացոյց, պատշաճ չհամարեցաւ ծածկելոյ Ղուկաս կաթողիկոսէն և ոչ Ներսէս վարդապետէն այս հանդամանաց շարժառիթն, այլ համարձակ և մանրամասն գրեց իւր նամակի մէջ ամեն անցքն, թէ զիարդ կամեցել է դարձուցանել Բասենցի Յարութիւն Արքեպիսկոպոսին և Զամչեան Հ. Միքայելին ի ծոց Հայաստանեայց եկեղեցւոյ, և զիարդ նոքա առ ժամանակ հրաժեշտ են տուել՝ առիթ բերելով այն ատելութիւնն, որ յօրէ Հայրապետութեանն Ղուկասու ընկել է նորա և Ցովսէփայ մէջ. և ի հաստատութիւն իւր բանից, իւր նախկին նամակաց պատճէնքն, և ի նոցանէ ըստացեալ նամակաց խսկատիպն, գրեց իւր նամակի մէջ, և ձեռամբ իւր Սիրելի Տէր Մինաս աւագ քահանայի առաքեց առ Ներսէս վարդապետն ի Մի՞ծրարի՝ յանուն նորա վերնագրեալ, որ նա իւրովձեռամբ մատուցանէ Ղուկաս կաթողիկոսին։

Տէր Մինասն հասաւ Էջմիածին, տուեց Ցովսէփին ուղարկած ծրարն՝ Ներսէս Վարդապետին հանդերձ պատարագօք։ Ներսէս վարդապետն այս անակնկալ նամակն ընթեռնլով, և ի նմին ևս անակնուն ելի լուրն Բասենցւոյ և Զամչեանի դարձի առնլով և հաւատիքն տեսանելով, ուրախացաւ, առ ժամանակ մոռացաւ ամեն հին թշնամութեան անցքերն և յօժարեցաւ այս ազգաշէն հաշտութեան մէջնորդ կանգնիլ։ Յետոյ՝ Ղուկաս կաթողիկոսն 1793 թուին գրեց կոնդակ առ Տերութիւնն Ռուսաց, և խնդրեց որ Ռուսաց ինքնակալութիւնն կրկնակի հաստատութիւն շնորհէ Ցովսէփայ Աւագնորդութեան, ի վերայ այն լայնատարած վիճակին, բայց այս հաշտութիւնն եղև կարճատև, որովհետև Ղուկաս կաթողիկոսի կոնդակի պատասխանն շատուշացաւ կայսերական դռնէն։

Ներսէս կարծելով թէ Ցովսէփ կամ ծաղր անելոյ համար է ձեռն մխել այս կեղակարծ հաշտութեան, կամ այն մէկ նոր մեքենայ էր սուրբ Խաչի վանքն կաթողիկոսարան անելոյ մասին, հակառակ իւր երկայնամիտ համբերութեան՝ առ այս նուազ մատն եղև մրրկեալ նեղսրտութեան և իւր բազմահոյլ համախոհից ձեռամբ ծածուկ հասոյց ի Պոլիս և Թրեստ՝ Հ. Միքայել Զամչեանի, և Բասենցի Յարութիւն Արքեպիսկոպոսի հետ Ցովսէփայ նամակակցութեանց լուրերն, և այնպէս դժուար վիճակի մէջ գլորեց զերկոսին ևս Հռոմայ իշխանութեան կողմէն, որ նոքա յուսահատած զղջացան, որ այնպիսի մուրհակ էին տուել Հայոց Արքեպիսկոպոսի ձեռն, և դեռ չգիտէին որ այն մուրհակն Ներսիսի ձեռքն էր։ Ներսէս կարծեց թէ Ցովսէփ միայն այն ժամանակ կամեցաւ նորա Ներսիսութիւնն ճանաչել, երբ առանց նորա չէր կարող իւր խորհուրդն կատարել, իսկ երբ հարկաւորութիւնն անցաւ, կրկին արհամարհեց զնա, և իրաւունք ևս ունէր այսպէս կարծել, որովհետև արքունական հրովարտակն դեռ չկայր ի միջի։ Բայց Ցովսէփ չունէր յանցանք, և Ներսէս ի նանիր էր՝ զբրպարտել նորան երախտամոռաց հաւատադրժութեամբ, կայսրուհին Կատարինէ կայր ի մահիճս ծանր հիւանդութեամբ։

Վերջապէս լուր տարածվեցաւ, որ կայսրուհին Ռուսաց Կատարինէ Բ. 1796թուին վախճանել է, և ինքնակալութեան աթոռն ժառանգել է նորա միակ որդին Պողոս կայսրն (Պաւլ Պետրովիչ) որ իւր օգոստափառ մօր հանդէպ Յովսէփայ համար միշտ բաց ունէր իւր արքայական շնորհաց դրունքն։ Անագան ուրեմն ճանաչեց Ներսէս վարդապետն իւր սխալ գործն, որով մեղանչել էր ազգասիրութեան դէմ, և մինչ ճանապարհներ էր սկսել որոնել՝ որ իւր վրիպանքն ուղղէ, ահա Յովսէփայ միջնորդութեամբ Ղուկաս կաթողիկոսի 1793 թուի կոնդակի պատասխան հրովարտակն ելաւ Պողոս Ա. կայսեր երեսէն, զոր այն միջոց արքունական Սենեկապետն (կանցլերն) իշխան Բէզբօրոդկոյ հանդերձ զանազան ընծաներով ուղարկել էր առ Ղուկաս կաթողիկոսն. իսկ Ներսիսի անունն չկայր ուրեք յիշած, որպէս ակնուներ ինքն՝ Յովսէփայ խոստմանց վստահացեալ։ Վասնորոյ Ներսէս վարդապետի սրտէն հեռացաւ այն զիղջն և ըստրջանքն, և նորոգեց իւր թշնամութեան մեքենայքն, բայց այս անգամ ձեռն մխեց այլ հնարից։

Այս միջոցներն Ղուկաս կաթողիկոսն ևս հասանելով զառամութեան հասակին, սկսել էր ցաւօքև հեծութեամբ սպասել իւր մօտալուտ վախճանին։ Ազգային կարիքն անթիւ էին և անհամար. Էջմիածնին Պարսից իշխանութեան ներքոյ լինելով բռնաւորաց ամենակերպ ոճրագործութեանց ասպարէս էր։ Սուրբ Աթոռոյն և Հայրապետութեան չէր կարող ոք այն միջոցներն

այնպէս օգնել, որպէս Յովսէփ ունէր կարողութիւն և ցանկութիւն օգնելոյ, բայց նորամէն օգնութիւն խնդրող չկայր։ Եթէ Ղուկաս կաթողիկոսն կամենար, նորա յանդիման արդէն զկնի այս հաշտութեան ամենայն ճանապարհներն բաց էին Յովսէփայ հզօր բազկաւ Էջմիածնին օգնութիւն հասուցանել, բայց Ներսէս վարդապետէն չունէր թոյլտուութիւն։ Ներսէս վարդապետն Ղուկաս կաթողիկոսի կամաց վերայ անկողպար ազդեցութիւն ունենալով, նորա ձրգտումն միայն այն էր, որ կարողանայ Յովսէփին յաղթահարել. այլ Յովսէփին նուաճելն դժուար, կամ լաւ ևս՝ անհնարին էր։

Ներսիսին անտանելի էր տեսնել՝ Յովսէփին զօրացած, փառաւորուած, բարի համբաւով հռչակուած, և նորա գրգռութեամբ էին Էջմիածնի բոլոր միաբանութիւնքն ընդդէմ Յովսէփայ զինեալ տարապարտ ատելութեամբ, և չհասկանալով Յովսէփայ գինն՝ սովորական առած էին շինել նորա դէմ միշտ կրկնել՝ նէ շամին շէքերի, նէ արապին իզիւ։

Յովսէփ և Ներսէս երկու արեգակունք էին, մին պայծառ և լուսափայլ ի միջօրէի մերձ առ կէտն եթերական, միւսն դեռ նոր ծագեալ ի հորիզոնէ, բազում ճառագայթաւէտ ժամուց և ժամանակաց առհաւատչեայքն հետ ունելով սկսել էր բարձրանալ. երկոքին ևս ունէին բազում երկրպագուս։ Հզօր էր Յովսէփ. օր ըստ օրէ զօրանալոյ անսերկբայ երաշխաւորութիւնքն ունէր Ներսէս. սորա ծանօթք և բարեկամք սփռեալ կային Հայաստանի ամեն կողմերն, և հայաբը-

նակ քաղաքաց մէջն. Պոլիս, Տիֆլիս, Զմիւռնիա, Պարսկաստան, Հնդկաստան։ Ընդարձակ նամակակցութիւն ունէր ընդ ամենայն տեղիս, ուր միանգամ հայազգիք տարածեալ էին իւրեանց առևտուրն, և ուր միանգամ սակաւ էին Յովսէփայ պատուագիրք։ Յովսէփ մեծամեծ ազգասէր սիրագործութեանց ձեռնարկած գոլով ըսկսել էր ազգէն տուրք ժողովել, ազգն կաթողին էր տեսնել՝ թէ երբ և Ներսէս կրսկսի ազգէն օգուտ քաղել. բայց Ներսէս յայդմ մասին լուռ էր և պապանձած. դեռ չէր ոք լսել նորա բերնէն՝ թէ դրամ տուէք։ Ռուսաստանի հայերի համար որովհետև ձեռօք շօշափելի էին Յովսէփայ յառաջ բերած բարիքն, որ այն ժամանակն անփոխարինելի երախտիք էին, զարմանալի չէր, եթէ ազգն զինքն համարէր նորա երախտապարտ, որովհետև չէր կարող ուրանալ՝ մանաւանդ որ Յովսէփ այնքան հզօր էր, որ եթէ իւր լայնածաւալ վիճակի մէջ մէկ դուշնաքեայ խլրտիւն ղդայր, այնպէս կ'սասանեցուցանէր տէրութեան իշխանութեամբ, որ միւսանդամ՝ այն տեսանելով այլք չէին համարձակեր գլուխ բարձրացնել. այս պատճառաւ Ռուսաստանի մէջ սակաւ էին Ներսիսի ծանօթք և համախոհք. միայն Նոր Նախիջևանայ մէջ ունէր մէկ քանի կուսակիցք, որ Յովսէփի դէմ նախանձ ունենալով՝ նորան յարեալ էին։ Ո՞վ կուտայր Հայոց խղճալի ազգին այն երջանկութիւնն, որ Յովսէփ և Ներսէս լինէին միմեանց բարեկամ, և երկոքին միասին միաբանութեամբ ըսէին ազգէ օգտի համար նահատակիլ։ Յովսէփ

ունէր մէկ Գրիգոր վարդապետ Զաքարեան, որ՝ որովհետև Աստրախանայ կանանչի բաղաբ ասայնալ որդոստայի մէջ էր զարգացել, մանկանուն էր ստացել Աստրախանցի։ Սա թէպէտ և զգօն և հանճարեղ մարդ էր, բայց Ներսիսի չափ գրոց աշակերտութիւն արած չլինելով, Յովսէփայ նման ազգասէր մարդն առաջի աչաց ունէր միշտ, բայց նորա ազգասիրութենէն և ոչ դուշնաքեայ մասն ունենալով, ազգասիրութեան վերայ նուազ և աղաւաղ դաղափար էր ստացել։ Ահա սա էր Յովսէփայ ձեռաց գործիքն, և ինչ դեր Ներսէս կ'խաղայր Ղուկասու ատեանումն, նոյնն և Գրիգոր՝ Յովսէփայ առաջն։ Եթէ փոխանակ Գրիգոր վարդապետի՝ լինէր Յովսէփայ ձեռին Ներսէս վարդապետն՝ բարեբաղդ կըլինէր Հայոց ազգն։ Բայց այն ժամանակն՝ մինչ Յովսէփ միայն Ռուսաստանի Հայոց վերայ ունելով իշխանութիւն, մայր նոցա երջանկութեան համար կ'ջանայր, և Գրիգոր գործ կ'ածէր այս նպատակի աղագաւ՝ Ներսէս միայն Յովսէփայ համար թակարդներ նիւթելով՝ անդադար երթևեկութիւն կանէր Պոլիս, Զմիւռնիա, Էջմիածին։ Ո՞վ գիտէ՝ թէ քանի՞ անգամ տեսան Ներսիսին Կարս, Արզրում, Թոխատ և այլ հայաբնակ քաղաքք, ուր զանազան պաշտօնավարութեամբ ստէպ ստէպ կը շրջադայէր. բայց այս իսկ ճանապարհորդութիւնք էին՝ որք զնա զբաղցուցին, ամրացուցին, պնդացուցին, և որոյ հետևանքն միայն նամակօք ծանօթութիւն, դէմ առ դէմ ծանօթացուցին. ով մէկ անգամ տեսաւ նորա հրեշ-

տակային պարկեշտութիւնն, ոչ առ անդամի լսեց նորա ճարտար և համոզիչ բարբառէն, կապուեր նորա հետ անխզելի կապով բարեկամութեան։ Անարծաթ մարդն ամենայն ուրեք կարէ լինել սիրելի։

Նա շատ հայերու ճանաչեց, շատ հայեր ևս նորան ճանաչեցին. և այս հայերու մէջէն՝ թէպէտ բազումք ևս կային՝ որ նորա Յովսէփայ դէմ առած գործոցն հաւան չէին, բայց այսու ամենայնիւ նորան 'ի սրտէ սէր էին տուել, որպէս գործունեայ և պարկեշտ կարգաւորի, և Էջմիածնի օգտին անձնատուր և խոհական վարդապետի։ Այս վերջին ձիրքն, այսինքն սուրբ Աթոռոյ օգտի համար ջոհ երթալոյ պատրաստութիւնն այն ժամանակ աւելի հանդիսայոյց, երբ Պարսից տէրութեան մէջ բռնաւոր խաներն Շահ դառնալ թեւակոխելով՝ բազում անգամ Էջմիածնի վերայ՝ յարձակելով՝ սուրբ Աթոռն իւրեանց անսանձ անզգամութեանց կրկէս էին ձեւացուցել։

Ահա այս Հայաստանի ընդհանուր ոսնակոխ լինելոյ ժամանակն երբ Ղաջար ազգէն առաջացաւ Աղայ Մահմադ խանն, որու Ախտայ խան ասուեցաւ, և ստացաւ Պարսից Շահութիւնն։ այս սարսափելի միջոցն Ներսէս վարդապետն այն կողմանց հայազգի բնակչաց համար տիւ և գիշեր հրեղէն և ամպեղէն սիւն էր։ Արդէն Եփրեմ Արքեպիսկոպոսն վերադարձելէր Հնդկաստանի նուիրակութենէն, ուր գնացել էր Ներսիսի անօրէնութեամբ, և մեծ արդիւնք էր բերել Էջմիածնի անուամբ, բայց և իւր գաւառանապտուղն բեղմնաւորելէր առատութեամբ,

երբ 1795 թուին Աղայ Մահմադ խանն՝ լսուեցաւ՝ թէ մտադիր է արշաւան տանել ընդդէմ Վրաստանի, որովհետև Հերակլ արքայն Վրաց չէր ընդունել նորա Շահութիւնն, և չէր յօժարացել՝ որպէս Բագրատունի՝ նորան սուր ածել ընդ մէջ, և Հայաստանի թագաւոր կացուցանել, և Գանձակայ (Գանջու, Ելիսավէթապօլսոյ) Զաւաթ խանն խոստացել է նորան առաջնորդութիւն անել. Յովսէփայ հայրենասիրութիւնն գութ շարժեց Ռուսաց տէրութենէն օգնութիւն ժամանեցուցանել. բայց Վրաստանի ներքին դարանակալներն որպէս աղայ Մահմադ խանի արշաւանքն ճեպել տուին, նոյնպէս և Ռուսաց զօրապետի կոմս Գուդովիչի ճանապարհն կաւկասեան լերանց ստորոտումն յապաղեցին, մինչև 1795 սեպ. 13. Պարսիկք մտան Տփխիս, աւերեցին, և գերեօք և աւարօք ճոխացեալ յետ դարձան։ Ներսէս վարդապետն տեսանելով թէ չէ կարող Ղուկաս կաթողիկոսին համոզել, որ նա հայազգի գերիներն՝ Էջմիածնի գանձով փրկանաւորէ, դիմեց առ Եփրեմ, և բանալ տուեց նորա ոսկւով լի պարկի բերանն, և որքան հայազգի գերիք բերուեցան այն կողմն՝ ամենն ազատեց, և դարձոյց իւրեանց հայրենեաց աւերակներն։

Այս ազգասիրական շահատակութեանց ժամանակն Ներսէս՝ որ Եփրեմի քսակն ձեռին անդադար Պարսից բանակի մէջ կայր ի դեղերանս՝ զբաղեալ վերադարձի կարևոր գործերով, չկարաց ժուժկալել, որ և իւր սեպհական այնքան-

ամեայ վաստակած փողերն չմնան, այն մարդասիրական ճգնութեանց մէջ. և երբ ձեռին առնեցած ամեն հնարներն սպառեց, այնուհետև ձեռնամուխ եղև Կամարականաց տոհմական կալուածոց, որոց շատն ծախեց և ետ փրկանք դերեաց, որով Շահազիզեանց վաղեմի ճոխութիւնն կիսով չափ նուազեցաւ։ Բայց և ընդ նմին Եփրեմի և Ներսիսի անունն փառաւորվեցաւ աղդի մէջ, թէպէտ և ոչ Եփրեմ և ոչ Ներսէս էին խնդրակ փառաց և պարծանաց։ Բայց Ներսէս, որ առաւել քան զառաջինն վառեալէր ատելութեամբ ընդդէմ Յովսէփայ, Տփխիսայ աւերակն խապառ բարդեց Յովսէփայ ուսոց վերայ որպէս յանցանք, և նորա համախոհք՝ որ նորա ձեռին էին որպէս եղէգնափող, թէպէտ և քաջ գիտէին՝ որ Տփխիսայ մատնութիւնն ի ձեռս Պարսից՝ էր արդասիք ներքին դարանակալութեան, բայց և այնպէս Ռուսաց զօրաց յապաղիլն գրելով մեղս Յովսէփայ, որով Յովսէփայ աղդասիրութիւնն ծածկեցաւ նորա փառասիրութեան վրայ դուրաւ, և ինքն Յովսէփ զրպարտուեցաւ որպէս մատնիչ իւրոց հայրենեաց, և առիթ այնքան հեղման անպարտ արեան, և գերութեանն հայազգեաց, որոց մէջէն հարիւրաւոր և հաղարաւոր չքնաղ օրիորդք և մատաղամարդ տիկնայք մինչև ի Քիրմանշահ, ի Բասրայ և յԱղուանստան գերի վարեցան և անկան ի հաւատոց արդելեալ ի յարկս կանանց Պարսից։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ի վեր անդր ասացի թէ Ներսէս վարդապետն Յովսէփ արքեպիսկոպոսին սանձահարելոյ աղա-

գաւ մէկ այլ նորահնար ճանապարհ նիւթեց. ահա այս էր այն նոր ճանապարհն։ Երբ Պարսից արշաւանաց փոթորիկն անցաւ, և Եփրեմի անունն Ռուսաստանի հայաբնակ քաղաքաց մէջ հռչակի հարաւ, Ներսէս ժամ դիպուկ համարեցաւ իւր խորհուրդն կատարել. և սկսաւ Ղուկաս հիւանդ կաթողիկոսին միւսանդամ գրգռել ընդդէմ Յովսէփայ. և որովհետև Եփրեմ իւր մեծագանձ ճոխութեանց պատճառաւ Էջմիածնի մէջ աւելի պատիւ, յարգ, մեծարանք և հեղինակութիւն էր ստացել քան զռիշտ Ղուկաս կաթողիկոս, և քան զինքն անարծաթ Ներսէս վարդապետն. Ներսէս կասկածելով թէ չլինի՞ որ յաւերժ փառասիրութեան կայծ ընկնի Եփրեմի սիրտն, և միաբանք ընտրեն զնա կաթողիկոս և դնեն Հայրապետական աթոռն, որովհետև քաջ գիտէր՝ որ յաւուրս Եփրեմի նա չէր կարող յայնքմ հետէ ունենալ այն զօրութիւնն. և այն իսկ պատճառաւ Ներսէս վարդապետն Եփրեմ արքեպիսկոպոսի անուն դրել էր կակուղ փուչ, իւր մտաց մէջ հաստատել էր Եփրեմն մէկ գեղեցիկ պատրուակաւ հեռացնել Էջմիածնէն, և դնել Յովսէփայ դէմ որպէս դիմամարտ ախոյեան. վասնորոյ այնքան ջանադիր եղև, մինչև յաջողեց հաւատացնել Ղուկաս կաթողիկոսին և Էջմիածնի միաբանից՝ թէ Յովսէփն է պատճառ, որ ցարդ կայսրուհին Ռուսաց՝ կաթողիկոսի կոնդակն թողել է անպատասխան։

Միաբանութիւնն համախուռմ ոտք ելլան, և պահանջեցին որ անշուշտ Առաջնորդութիւնն Ռուսաստանի՝ Յովսէփայ ձեռքէն առնուի, և

յանձնվի Եփրեմին. և եթէ Յովսէփ անսասա դանվի և առ այս նուազ՝ հոգևոր զինուք հարուածուի, մինչև ի զգաստութիւն գայ. և այսպէս Եփրեմ արքեպիսկոպոսին ուղարկեց Ներսէս վարդապետն ի Ռուսաստան, որ Յովսէփին կապանօք բերէ յԷջմիածին, և ինքն հաստատուի յԱռաջնորդութեան Ռուսաստանեայց Հայոց։

Եփրեմ արքեպիսկոպոսն եկաւ յԱստրախան ի սկզբն 1796 ամի։ Ինքն խոհական և խաղաղասէր անձն գտլով՝ թէպէտ գահավէժ չ'գլորեցաւ կռիւներու խորխորատն, և ինչպէս նորան Ներսէս վարդապետն էր պատուիրել՝ չընկաւ իսկոյն Ռուսաց մեծամեծաց դռներն, որ կաշառներով նոցա սիրտն դարձուցանէ առ ինքն, սակայն երբ տեսաւ Յովսէփայ ելումուտն՝ չկարողացաւ զսպել զանձն, որ չյայտնէ՝ թէ ինչ խորհրդով է եկել։ Հայազգի երևելի վաճառականք, որ Յովսէփայ գործերէն էին տեսել և ճանաչել՝ թէ ինչ է ազգասիրութիւնն, և որչափ հաղուագիւտ և անգիւտ իսկ է Հայոց ազգի մէջ ազգասէրն, ազգի օգուտն և Էջմիածնի շահն և պատիւն իւրեանց նպատակ դնելով եկան ժողովեցան Եփրեմ արքեպիսկոպոսի խուցն որ էր ի բնակարանի ժամակոչ Գրիգորի՝ ի սրահի աւագ եկեղեցւոյ, ուր էր և Առաջնորդարանն, և համոզեցին՝ որ Եփրեմ զգուշանայ, և ազգամիջեան կռիւ չգրգռէ։

Եփրեմ՝ բարի դաստիարակութիւն էր ստացել բազմամեայ բնակութեամբ ի մէջ հարուստ ազգասէր և փորձ վաճառականաց Հայոց Հնդկաստանի, վասնորոյ՝ երբ տեսաւ Աստրախանայ

հայազգի վաճառականաց տրամադրութիւնն՝ որ ի նոյն խմորոյ էր զանգեալ, բարուք վարկաւորպէս խուլ և համր յետս դառնալ, այլ Յովսէփայ ճանկերէն ազատիլն էր այնուհետև անհնարին. և այս իսկ պատճառաւ՝ Եփրեմ թէպէտև չկորցրեց իւր արքեպիսկոպոս անունն, բայց ոչինչ նուազ քան զՄովսէս վարդապետն մնաց ի ժամակոչական խցին ամն բազումս, ուտելով իւր հացն, և սասսնեալ և զարհուրեալ երթևեկելով յեկեղեցին, և լուռ կալով և աղօթելով ի դասն աշակերտի, ուր լրբենի եկեղեցանք՝ բազում անգամ յերկրպագանելն նորա՝ ոանհար են եղել ի վեղարն նորա։

Այսպէս Եփրեմ մեծաւ զօրութեամբ զինեալ Հայրապետական կոնդակօք եկ յԷջմիածնէ, և եկեալ յԱստրախան վատթար քան զՄովսէս վարդապետն անկաւ ի դարան, և որ ունէր կապանօք տանիլ զՅովսէփ յԷջմիածին, ինքն մնաց ի գերութեան աղօթարար։ Ընդ ելանելն Եփրեմի յԷջմիածնէ՝ դէպ ի Ռուսաստան, ի միասին նորա հետ եկաւ և Ներսէս վարդապետն յԷջմիածնէն դէպ ի Ղ. Պոլիս, ուր արդէն ի1796 նուիրակ էր գնացել, և զինի իւր նուիրակութեան գործն աւարտելոյ՝ Զմիւռնիոյ առաջնորդ էր նշանակուիլ Դանիել ահեղաձայն, բայց և ընդ նմին հեզահոգի արքեպիսկոպոսն Էջմիածնի։ Մինչդեռ Ներսէս կայր դեղերեալ Պոլիսէն Զմիւռնիա և անդրադարձ Զմիւռնիայէն ի Պոլիս, լսեց Եփրեմ արքեպիսկոպոսի ի Ռուսաստան առաքելութեան անյաջողութիւնն, և վերադարձաւ յԷջմիածին, ուր թուտաներորդ դա-

ցու վերջընթեր տարին, մինչ 1798 ամին Դանիել՝ որ Զմիւռնիոյ առաջնորդութեան անյարմար համարուելով հանուել էր յաթոռոյն, Զաքարիա Պատրիարքէն յետոյ Պօլսոյ Պատրիարք ընտրուեցաւ ի 1799 յամսեան մարտի։ Ներսէս վարդապետն հասանելով յԷջմիածին՝ երբոր տեսաւ թէ Ղուկաս կաթողիկոսի վախճանն մօտեցել էր, սկսաւ մոռանել իւր ապագայն, և պարզ տեսանելով՝ որ Ղուկաս կաթողիկոսէն յետո ով որ լինի Հայոց Հայրապետ, ոչ թէ միայն չի տար Նորան այն բացարձակ իշխանութիւն ինչ որ տուել է Նորան Ղուկաս կաթողիկոսն, այլև երկնչելով Նորա խորագիտութենէն՝ ոչոք չհամարձակիր ձեռն դնել Նորա գլխոյ վերայ, և տալ Նորան եպիսկոպոսութիւն, կամեցաւ Հայրապետութիւնն տեսնել այնպիսի անձին վերայ, որ երախտապարտ լինելով Նորան՝ ոչ միայն իւր հայրապետական անդրանիկ գործն անէ Նորան եպիսկոպոսութիւն շնորհելն, այլև ցորչափ կենդանի է՝ Նորան Էջմիածնէն չհանէ, և առանց Նորա հաճութեան մէկ քայլ չանէ ոչ յառաջ և ոչ յետս։ Ներսէս վարդապետի ծայրագոյն արժանաւորութիւնն այս էր, որ այսքան անցից սկզբնապատճառ էր, և ոչ ոք չէր կարող ասել՝ թէ այս ինչ գործոյ շարժառիթն Ներսէս վարդապետն էր. չէր գտնվեր հետք ինչ Նորա հնարից՝ որ մարթանայր ոք ասել թէ այս Նորա գործն է. ոչ բանիւ և ոչ գրով կարէր ոք երբէք հաստատել. և այս պատճառաւ երբ մէկ անցք տեղի կունենայր, կասէին Հոգւոյն Սրբոյ տնօրէնութեամբ է, և ամենեքեան կիմանային՝ որ

Ներսէսի մատին ազդեցութիւնն է. վասնորոյ ստէպ կ'լսուէր Էջմիածնի միաբանից բերնէն այս երգն, «զեկավար ճարտարապետ՝ անցեր ընդ ծով կենցաղս անհետ»։ Այսպէս Ներսէս վարդապետն ձեռնամուխ եղև իւր խորհուրդն մարմնացուցանելոյ դիտաւորութեամբ մէկ այնպիսի գործոյ, որ Հայոց եկեղեցւոյ հիմն դղրդեցուց։ Գրեց Պոլիս՝ իւր մտերիմ համախոհ Կիւմիւշխանցի Մանուէլ վարդապետին մի նամակ, որոյ մէջ իմաց անելով Ղուկաս կաթողիկոսի կենաց վերահաս վտանգն, խորհուրդ տուեց, որ նա ջանայ՝ որքան հնար ունի՝ Պոլսեցւոց ընտրել տալ Դանիէլ Պատրիարքին՝ Ղուկաս կաթողիկոսի յաջորդ, Նորա սիրտն գրգռելով այնու, որ Դանիէլ զկնի իւրոյ օծութեան՝ յառաջնում իսկ կիւրակէի կը շնորհէ Նոցա երկոցուն ևս եպիսկոպոսութիւն, զոր Ղուկաս յամենայն կեանս իւր զլացաւ։ Իսկ ինքն Ներսէս վարդապետն առ երեսս, որպէս թէ մոռանալով Հայ ազգի օգուտն, կամ Էջմիածնի և ընդհանուր Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ պայծառութիւնն, երբ Ղուկաս կաթողիկոսն ի 1800 ի 25 Յունվար ամսոյ վախճանեցաւ, Էջմիածնի միաբանից առաջարկեց կաթողիկոսի ընտրութիւնն փութացուցանել։

Այս ժամանակի Էջմիածնի միաբանիցմէջ անուանի էին՝ Դաւիթ արքեպիսկոպոս Էնակէթեցի, որդի Պորղալուցւոյ ուրուք, զոր կոչէին և Լօռեցի և Տփխսեցի, Մինաս արքեպիսկոպոս, Բարսեղ արքեպիսկոպոս Կեսարացի, Ներսէս արքեպիսկոպոս ծեր՝ մեծ կոչեցեալ, և այլք բա-

ղումք, յորոց ոմանք դասանէին ի Պոլիս. որպէս և Գալուստ եպիսկոպոսն Լայլք։ Ներսէս վարդապետն՝ որ քաջ ճանաչէր զոգի Դաւթի Էնակէթեցւոյ, զի յարեալ է ի Յովսէփ, գնաց նախ առ Դաւիթն, և որպէս թէ խոստովանաբար յայտնեաց նմա՝ թէ հանդուցեալ Ղուկաս կաթողիկոսն քանի ամսովք յառաջ քան զայն ապրեալ է կտակ և ի նմին նշանակեալ է յաջորդ իւրոյ հայրապետական աթոռոյ՝ զԴանիէլ. վասն որոյ և խորհուրդ եւ նմա ընտրել զԴանիէլ, և խոստացաւ նմա՝ զնա ինքն զԴաւիթ առաքել հրաւիրակ Դանիէլի ի հայրապետութիւն, և երդմամբ ուխտեց դրել առ Դանիէլ, որ նա իւր պատրիարքութիւնն Պոլսոյ՝ տայ նորանդաւթին։ Ներսէս վարդապետն այս՝ այն դիտաւորութեամբ այսպէս տնօրինեց, որ Յովսէփ կարծէ Դաւթին իւր հակառակորդ, և մանաւանդ Դաւիթ հեռանայ Էջմիածնէն, որ յապայն չլինի նորան գլխահար։ Յետոյ գնաց առ Բարսեղ և Մինաս եպիսկոպոսունս և նոյնպէս խոստովանաբար ասաց թէ Ղուկաս կաթողիկոսն իւր աթոռն կտակաւ թողել է ժառանգութիւն Յովսէփին։ Այսպէս դեռ ևս Ղուկաս կաթողիկոսի դիակն չէր սառել, որ Էջմիածնի միաբանք յերկուս բաժնվեցան, ոմանք Դաւթի հետ միասին Դանիէլեան համախոհք եղան, և ոմանք Բարսեղ կեսարացւոյ զհետ երթալով սկսան Յովսէփայ համար լինել փողահար։ Մինչդեռ միաբանութիւնն պատաղեալ կայր հանդիսիւ յուղարկաւորութեան Հայրապետի, ի թաղումն որոյ հրաւիրեցան և հինգ Մելիքք Ղարաբաղու, և այլ

երևելի Հայք ի կողմանց Թաւրիզու, Խոյի, Սալամաստայ, Խարսայ, Մշոյ, Արզրումայ և այլ մերձակայ հայաբնակ քաղաքաց, որք կային շուրջանակի զՄասեօք՝ յայս կոյս և յայն կոյս Երասխայ և Ախուրեան գետոց, Ներսէս վարդապետն՝ ընտրեալ մին ի հաւատարիմ սուրհանդակաց (շաթը) Էջմիածնի, որք շնորհօք Ներսիսի վարդապետի հատընտիր խմբեալ էին յԱշտարակ գեղջէ, ի մտերմաց Ներսիսի և եղբօրն նորա Շահազիզեան Կարապետ աղայի, առաքեաց յԱստրախան, աշտանակեալ ի վերայ միոյ յօդապարիկ երիվարաց, որով լի էր միշտ ախոռ հայրապետանոցին, և տուեալ ի ձեռս նորա նամակ շնորհաւորութեան ի դիմաց իւրոց և ամենայն համախոհից, յորում հրաւիրէր զնա յաթոռ Հայրապետական, զոր իբր թէ կտակաւ թողեալ էր նմա հանգուցեալ Ղուկաս կաթողիկոսն։

Յովսէփ՝ որ դեռ ևս Ղուկասու կենդանութեան ժամանակն էր իւր մտաց մէջ կաթողիկոս, երբոր այս անակնկալ լուրն ընկալաւ Ներսէս վարդապետի նամակէն, և այն նամակին մէջ նշմարեց Ներսիսի խորագիտութեան հետ նորա քաղաքավարութիւնն, ոչ թէ միայն ըստ իւր վեհանձն բարուց ի սրտէ ներեց նորա այսքանամեայ հակառակութեան, այլև իսկոյն կոչեց առ ինքն զԵփրեմ արքեպիսկոպոսն, տուեց նորան ընթեռնուլ այն Ներսիսի գրած նամակն, Հոգւոց ասաց Ղուկաս կաթողիկոսի համար, և երդմամբ խոստացաւ թողուլ Ներսիսի ձեռին Էջմիածնի ամենայն գործերն, որպէս էին յա-

ւուրս Ղուկասու · զկնի որոյ տարաժամ զանդակ հրամայեց հնչել տալ· գնաց յեկեղեցի՝ ուր ժողովեալ էին արդէն ամենայն հոգևորականք և անթիւ աշխարհականք , հրամայեց տալ Եփրեմ արքեպիսկոպոսին իւր պատուական շուրջառներէն մին , և Հոգեհանգիստ կատարել ի յիշատակ հանգուցեալ կաթողիկոսի , մինչ ինքն ինաց կանգնած ի մէջ ժողովրդեան հանդոյն սգաւորի ։

Զկնի հանգստեան Աւետարանի՝ Աստուած անեղի երգէն առաջ՝ երեսն դարձոյց առ ժողովուրդն , և ծանուցմամբ խմաց տուեց Հայրապետի մահն և իւր ընտրութիւնն , և անդ յանձնեց իւր առաջնորդութիւնը Եփրեմ արքեպիսկոպոսի ժամանակաւոր հովուութեան , խոստանալով ընդ հասանիլն յԷջմիածին , ձեռնադրել զսիրելին իւր Գրիգոր վարդապետն՝ եպիսկոպոս և առաքել յԱստրախան յաւաջնորդութիւն Հայոցն Ռուսաստանեայց , իսկ զԵփրեմ կոչել յԷջմիածին և առաքել զնա ծայրագոյն նուիրակ և Պատրիարք կոչմամբ ի Կոստանդնուպոլիս։ Անդ հրամայեց և Թադէոս վարդապետին Մարուգեան ժողովել զամենայն կաղմած տպարանին , և զհետ իւր բերել յԷջմիածին , ուր հանդերձեալ էր հրաւիրել և զայնոսիկ՝ զորս հրաւիրեալ էր և տակաւին չէին եկեալ։ Զկնի ծանուցմանն յորժամ երգեցաւ Աստուած անեղի երգն , զվերջինն ինքն իւր հրեշտակային ձայնիւ սկսաւ , Որ աղբիւրդ ես ծարաւեաց և հանդիստ աշխատելոց, ճանապարհ մոլորելոց և այլն. ինքն կականալիր արտասուեաց և յարտասուս

բռնադատեաց զամենեսին ։ Բայց երևի թէ Յովսէփ արքեպիսկոպոսն՝ միայն Ներսէս վարդապետի նամակաւ կաթողիկոսացեալն՝ երբ ասաց զայս ամենայն , գիտեմ՝ զինչ արարից , քակեցից զչտեմարանս և մեծամեծս չինեցից , չասաց ընդ նմին և զայս՝ թէ եթէ Աստուած յաջողեսցէ ։ Ղուկաս կաթողիկոսի մարմինն թաղուեցաւ Գայիանեաց վանքն · և միաբանք սկսան կաթողիկոս ընտրել։ Դաւթի կողմն զօրացաւ , և Դանիէլ ընտրուեցաւ · և ինչպէս խոստացեալ էր Ներսէս վարդապետն՝ Դաւիթ արքեպիսկոպոսն գնաց միաբանից բազմակնիք կոնդակաւ դէպ ի Պոլիս հրաւիրակ առ Դանիէլ Պատրիարքն յաթոռ Հայրապետական ։

Ներսէս վարդապետն ձեռամբ միւս մասին՝ որ էին Յովսէփեան , խմացում տուեց Յովսէփ արքեպիսկոպոսին՝ միաբանից երկպառակութիւնն , և Դաւթի հրաւիրակ երթալն առ Դանիէլ։ Յովսէփ դիմեց տերութեան օգնութեանն և ՝ՀՀ թէ միայն իւր Հայրապետական ընտրութեան հաստատութիւն ընկալաւ , այլև այնպէս տնօրէնութիւն եղև , որ ամենայն խոչ և խութ ի բաց մերժի յերեսաց Յովսէփայ՝ թէ ի Ռուսաստան , և թէ այլուր ։ Վասնորոյ երբ հասաւ Դաւիթ ի Կ. Պոլիս , ուր արդէն Մանուէլ վարդապետն զբաղումս պատրաստեալ էր ի կողմն Դանիէլի , և միայն Գալուստ եպիսկոպոսն չէր հաւան ընդ այն , մատոյց զթուղթ հրաւիրանաց միաբանութեանն , և գտեալ զՄանուէլ վարդապետն՝ սկսան ի միասին յորդորել զԴանիէլ՝ թողուլ զպատրիարքութիւնն Կ. Պոլսոյ և եր-

թալ յէջմիածին նստիլ՝ յաթոռ Լուսաւորչի։

Բայց քանզի ի նմին իսկ ժամանակի Մանուէլ վարդապետն ի նամակաց Ներսէս վարդապետին իմացաւ, որ և մի մասն միաբանից էջմիածնի՝ Յովսէփի կողմն է, և ընտրութիւնն յօգուտ նորա է արել, և թէ ինքն Յովսէփ ևս հետամուտ է Հայրապետական գաւազանի, ծանոյց և Դանիէլին և Դաւթին և Դանիէլի կուսակցաց։ Դանիէլի կուսակիցք՝ որք ի սրտէ սէր էին տուել Դանիէլին իւր հեղահոգի բարուց աղագաւ, չկամելով որ Դանիէլ ի վէգ մտնէ ընդ Յովսէփայ և աղդամիջեան կռիւ բորբոքէ, խորհուրդ տուին նորան հրաժարիլ ի կաթողիկոսական ընտրութենէն, ցոյց տալով՝ որ լաւ է նմա Պօլսոյ Պատրիարքութիւնն հանդստեամբ վայելել, քանթէ էջմիածնի Հայրապետութեան համար ի կադ և ի կռիւ համակիլ։ և աղաչէ որ Դանիէլ իւր փոխանորդ ընտրէ ի կաթողիկոսութիւն զմի ոմն յարժանաւոր եպիսկոպոսաց։ և երբ հաճեցուցին զԴանիէլ, ընտրութիւնն անկաւ ի վերայ Բարդուղիմէոս եպիսկոպոսի։ Այլ Դաւիթ հոգւով չափ զինեցաւ ընդդէմ այս խորհրդոյ։ Տեսաւ Մանուէլ վարդապետն՝ որ Դաւթի ջանքն միայն այն է, որ Դանիէլի ձեռքէն յափշտակէ Պատրիարքութիւնն, վասնորոյ զգուշացոյց Դանիէլին, որ Դաւթի ծուղակն չընկնի։

Դաւիթ հասկացաւ որ Մանուէլ վարդապետն պիտի չներէ նորան՝ Դանիէլին սխալեցնել, մէկ այլ հնար ձեռքն առաւ։ Կոստանդնուպօլսեցի Յովհաննէս եպիսկոպոսին հարևանցի հասկացոյց՝ որ եթէ նա կամենայ՝ կարող է ստանալ որպէս

Պօլսոյ Պատրիարքութիւնն, նոյնպէս և էջմիածնի հայրապետութիւնն։ Յովհաննէս եպիսկոպոսն խօսեցաւ սոյն իսկ մտօք Գալուստ եպիսկոպոսի հետ։ և Գալուստ եպիսկոպոսն հրապարակաւ անդրադարձաւ Բարդուղիմէոսի կաթողիկոս ընտրվիլն և ընտրողներն նզովեալ կոչեց։ Այս Գալուստ եպիսկոպոսի գործն սկիզբն եղև ժողովրդեան մէջ խռովութեան ծագման։

Դանիէլ Պատրիարքն լսելով Գալուստ եպիսկոպոսին գործն և ժողովրդեան խռովութիւնն Դաւիթ արքեպիսկոպոսի բերանէն՝ չկամեցաւ այլ ևս լսել Մանուէլ վարդապետին, այլ ժողովեալ զժողովուրդն յեկեղեցի, ետ ընթեռնուլ յունկս նոցա էջմիածնի միաբանից հրաւէրն։ Ժողովուրդն հաստատեց էջմիածնի միաբանութեան ընտրութիւնն, և Դաւիթ յոտն կացեալ՝ ընթերցաւ եկեղեցւոյ աղօթքն, որ ընտրեցեր և ընկալար զերանելի և զերջանիկ Հայրապետն Դանիէլ՝ Քրիստոս Աստուած մեր, և այլն, և առաջինն ինքն անկեալ ի ծունկս՝ համբուրեաց զոտն նորա, և Դանիէլ իսկոյն ադոյց Դաւթի զմատանին պատրիարքութեան և բաղմեցոյց յաթոռ Պատրիարքական։ Անդադան ուրեմն հասկացաւ Դանիէլ՝ որ Մանուէլ վարդապետին չլսելով և Դաւթին ունկն մատուցանելով բաղում չարեաց դուռն է բացել։ և դեռ չէր կարողացել դարման ինչ մտածել, որ ահա փարձութիւնքն կայծակի նման հասան նորան։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Միմիայն անխոհեմ ընթացք Գալուստ և Դաւիթ արքեպիսկոպոսաց տուեց Ենճեան մակա-

ուանեալ Յովհաննէս արքեպիսկոպոսի ձեռն զէն, որով յաղողեց հակառակ իւր եպիսկոպոսական աստիճանի և ի նախատինս անուան իւրոյ՝ Դանիէլ անմեղ՝ ի կաթողիկոսութիւն ընտրած անձն Գալուստ խառովայոյզ արքեպիսկոպոսի հետ միասին յաքսորս առաքել ի Տենեդոս կղզին և ի Կիպրոս. ուր չորս ամիս մնալոյն զկնի՝ ունելով ինքեան բանտակից զՄանուէլ վարդապետն, Դանիէլ առաքեց յառաջնորդութիւն Եւդոկիոյ, և Դաւիթ դարձաւ յէջմիածին պատառել զաղգն։

Ներսէս վարդապետն անդադար լուր կըստանայր Եփրեմ արքեպիսկոպոսի նամակօք՝ Ռուսաստանէն, և Մանուէլ վարդապետի գրութեամբք Պոլիսէն, Տենեդոսէն և Եւդոկիայէն, և գիտէր, և միշտ որպէս ինքեան կամ էր՝ իմացում կուտայր միաբանութեան, թէ Յովսէփ ինչ խորհրդոյ վերայ է, ինչ յաղողութիւններ է ձեռքն անցուցել, և ինչ ճանապարհորդութեան հանդերձանք է պատրաստել, կամ Դանիէլ Եւդոկիա ինչ գործով է պատաղեալ, և ուր և երբ կարեն զմիմիանս տեսանել։ Մինչ պատրաստուեցաւ Յովսէփ՝ երթալ յէջմիածին, արդէն Ռուսաց դեսպանն Նաթարայ յաղողել էր Օսմանեան Դռնէն հանել նորա համար հաստատութեան հրովարտակ, թէ Հայոց ազգի բացարձակ հաճութիւնն և ընտրութիւնն չէր ապահովել, վասնորոյ և Յովսէփ տակաւին ժամանակ և պատեհութիւն ունէր իւր վիճակի հայաբնակ քաղաքաց այցելութիւն առնել, և իւր այնքանամեայ ժողովրդեան տալ հրաժարական

ողջոյն և իւր վերջին օրհնութեան հետ աւանդել իւր հայրական իրատն, որ միշտ յայս մի բան կըվերջանար, թէ յայսմհետէ զդոջ կացէք ձեր Առաջնորդներէն, որովհետև նոցա մէջէն յոյժ սակաւք կըլինին Յովսէփ. ձեր եկեղեցեաց արդիւնքն ձեր ձեռին պահեցէք՝ որ ձեր նեղութեան ժամանակն ձեզ պիտոյանայ, մանաւանդ ջանք դրէք՝ որ այն արդիւնքն ազգի մանկանց կրթութեան համար ի գործ դըրուին։ Թէպէտ ես ևս ստացել եմ ձեզմէն շատ արդիւնք, բայց ես աւելի շատ արդիւնք եմ ձեզ համար ապահովել. դեռ մի տարի հաղիւ է լրացել, որ այս վիճակի ամենայն հայաբնակ քաղաքք ստացան արտօնութեանց պարգևագիր. կըլինեն այնպիսի Առաջնորդներ, որ ոչ միայն ձեր արդիւնքն տարապարտ կառնուն, այլև այն ձեր արտօնութեանց դարանակալ կըլինին։

Վերջապէս համբաւ հասաւ Ներսէս վարդապետին՝ որ Յովսէփ յուղի անկաւ Աստրախանէն դէպ յէջմիածին, իսկ իւր ծանրութիւնն՝ յորում կային Ղրիմու երկրի հաղար և մի եկեղեցեաց դանձերն, հրամայեց Գրիգոր վարդապետին բերել զկնի իւր. և տպարանն և իւր գրադարանն յանձնեց Թադէոս վարդապետին, որ յառաջիկայ գարնանն հասուցանէ յէջմիածին։ Ներսէս վարդապետն սկսաւ յաճախել իւր նամակներն առ Յովսէփ, որ ընտրեալ ի Հայրապետութիւն ազգի՝ որքան կըմերձենայր ի Տփխիս, այնքան ստէպ ընդ առաջ կ՚ելանէին նմա Ներսիսի ուղևորած սուրհանդակներն հանդերձ նամակօք, և իսկոյն կըվերադառնային կոնդա-

կօք յանուն Ներսէս վարդապետի, որով կըրկ-
նապատիկ աւելացաւ նորա զօրութիւնն Էջմիա-
ծնի մէջ բոլոր միաբանութեան վերայ։

Յովսէփ մնաւ ի Տփխիս մեծաւ փառօք՝ որ-
պէս երբեմն Յիսուս յԵրուսաղէմ Ծաղկազարդի
օրն։ բայց ինչպէս Երուսաղէմ եղև Յիսուսին,
նոյնպէս և Տփխիս եղև Յովսէփայ կենաց դէմ
վայր դարանակալութեան։

Բաղում անգամ լսել եմ Ներսէս արքեպիս-
կոպոսի բերնէն Քիշնէվ քաղաքի մէջ, և Ներ-
սէս կաթողիկոսի բերնէն Տփխիս քաղաքի մէջ,
թէ՝ եթէ սրբազանն Յովսէփ հասանէր ողջամբ
յԷջմիածին և նստէր Հայրապետական գահն,
մեծ կասկած պիտի յղանայի երկնից արդարա-
դատ հատուցման դէմ. որովհետև և այսքան
տարի ապստամբ էր մնացած սուրբ Աթոռէն,
և ոդորում էր և մաքառում էր ամենայն զօրու-
թեամբ նորա անժխտելի իրաւանց դէմ, և ոտ-
նակոխ էր անում նորա Հայրապետի պատիւն՝
որ անհաւատից անգամ էր պատկառելի։

Ներսէս վարդապետն՝ Ղուկաս կաթողիկոսի
գերեզմանի վերայ նստած Գայիանեանց վանքի
մէջ, արդեօք ինչ մտածման մէջ էր, մինչ Յով-
սէփ Էջմիածնի միաբանից՝ իւր իսկ Ներսէսի
դրդմամբ՝ հրաւիրանաց բաղմաստորագիր նա-
մակն ծոցն դրած, ազգի տաներորդ մասին
ընտրութիւնն ստացած, և Ռուսաց կայսերական
հաստատութիւնն ձեռքն առած Յորդանան գե-
տի նման կուգար դարիւ և դարիւ։ Յորդանան
գետի նման, որոյ պարզ յորդառատ և քաղցր
ջրերք անհետ կըլլորչին Մեռեալ ծովու աղի և

դառն ջրերի մէջ։ Արդեօք գէթ սակաւիկ իմն
հաւատացե՞լ էր՝ թէ Յովսէփ, որ իւր Ներսէսի
ճարտարութեամբ ըստ երևութին առանց խո-
չընդակութեան, իսկ ըստ իրին բաղմապատիկ
խոչընդակութեամբ ստացել էր Հայրապետական
աթոռն, զկնի բաղմամեայ հակառակութեան՝
տեսանելով նորա՝ Ներսէս վարդապետի մէջ կեղ-
ծուպատիր դարձ և ակամայ զղջումն, պիտի ու-
նենայ այնպիսի դիւցազնական վեհանձնութիւն,
որ ներէ նորա դարանակալութեանց Աւետա-
բանական անյիշաչարութեամբ, և ուղիղսրտով՝
իւր Գրիգոր վարդապետի հետ միասին ձեռնա-
դրէ եպիսկոպոս, ինչպէս Եփրեմ արքեպիսկո-
պոսի բերանով խոստացել էր, տայ վիճակ, և
Ղուկասու առջևն այնքան ժամանակի աշխա-
տութեանց դէմ վարձատրութիւն անէ, կամ
արդեօք պիտի կատարուի՞ նոցա մէջ այն առա-
ծքն, թէ՝ առ մեծասիրտ սէգ առիւծին, շատ
է յերկիր հեղուլ զմարմին, իսկոյն վախճան լի-
նի մարտին, երբ խոնարհի անդ թշնամին։

Արդեօք՝ յիրաւի այսպիսի յոյս գոնէ առ ժամ
մի ունեցաւ Ներսէս վարդապետն, և միտք
բերելով իւր բարեկամաց՝ Դանիէլ և Մանուէլի
աքսորն՝ ի սրտէ կըցանկայր Յովսէփայ ողջամբ
յԱթոռ ժամանելն, զկնի որոյ՝ Ներսէս վարդա-
պետն պարզ հասկանալոց էր՝ որ այնուհետև
չպիտի ունենայ այն բացարձակ աղատութիւնն՝
որ ինչ ունէր Ղուկաս կաթողիկոսի ժամանակն,
թէ պատրաստվում էր իւր մտքի մէջ՝ համբե-
ռութեամբ և քաջութեամբ կանգնել Յովսէփայ
յանդիման յառաջնում տեսութեան, ինչպէս

Պողոս՝ յառաջին ատենին, որ երբ տեսնէ՝ թէ նորա կամքն է իւր առիւծային զօրութեամբ նորան դեռնէ դեռին զարնել, յուշիկ թողուլ կրկէսն, և հեռանալ Մանուէլի նման Դանիէլի մօտ յԱռաջնորդութիւնն Եւդոկիոյ, և այն տեղէն սկսիլ նոր պատերազմ Յովսէփայ նոր Հայրապետութեան դէմ։ Կամ թէ որովհետև Էջմիածնի միաբանք արդէն սովորել էին նորան լսել, և հնազանդիլ, մանաւանդ Յովսէփայ կոնդակների զօրութեամբ, նոցա վստահանալով՝ Էջմիածնի մէջ ապստամբից միաբանութիւն մի կազմել, և Յովսէփին այս ճանապարհաւ սանձահարել։

Քաջ գիտէր Ներսէս վարդապետն՝ որ Յովսէփ՝ Ղուկասու նման գծուծ գիւղական ոմն չէր։ լաւ էր ճանաչել Յովսէփայ դիւրադրդիռ, ղայրացկոտ, սեգ և գիրգ բնաւորութիւնն։ Երբ նորա պատկերն իւր երևակայութեան մէջ նկարագրում էր, իսկոյն իւր մտաց արձագանգի մէջ հնչում էր նորա ահեղ և սքանչելի ձայնն, իւր մտաց հայելւոյ մէջ կերպացուցանում էր նորա փառացի տեսին, նորա հսկայական քայլերն, նորա մեծ մեծ ձեռներն, և նորա երկայն բազուկներն։ պատկերացուցանում էր նորան Հայրապետական զգեստուց մէջ որպէս մի երկնաքաղաքացի, իսկ առ անին իւր կրօնաւորական հագուստի մէջ՝ ինչպէս մէկ օսմանեան ահընկէց փաշա, կամ ինչպէս մի Պարսիկ անկոպար խան։

Այս ահագին պատկերագրութեան մէջ յանկարծ տեսնում էր զՅովսէփ այլ կերպով, որ երբ իւր սնանն խոհեմութեամբ առ ջեն պարզելով ճանաչեցնէին, կ՝սկսէր երեխի հանգոյն լալ, երեսն և մօրուսն արտասուօք թանալ, մեղայ ասել, ի ծունկս անկանիլ, ամենայն զրհ բերել ի սեղան, ամենայն հնարիւք ջանադիր լինել հաշտութիւն խնդրել և իւր յանցանքն բազմապատիկ հատուցմամբ լուանալ։

Այսաեղ պատկերն խսպառ փոխվում էր։ Հայաստանցին պիտի վրաստանցւոյն համակրութիւն ցոյց տայր։ ՈՐքան դժուար էր սատանայ խաբող աշտարակցւոյն՝ Սանահնեցի շան ճրագի առջևէն կէն ու հո ձևանալ, հնազանդիլ հպատակիլ, և ծառայակերպ պատիւ և յարգութիւն ցոյց տալ։ Ո՞ւր մնաց սուրբ Աւետարանի վարդապետութեան՝ խոնարհեցուցանելով զանձն՝ բարձրանալն։ ՈՒր մնաց հեզ և խոնարհ Յիսուսի փրկարար օրինակն, և նորա քաղցր լծոյ և փոքրոգի բեռին յանձնառութիւնն։ Երբ վարագոյրն վերանայ, սքողեալ առարկայքն կ՝երևին իւրեանց բնիկ կերպարանօք։

Այս ևս ոչինչ էր, որովհետև Ներսէս վարդապետն յառաջին տիոց պատանեկութեան սովոր էր ծառայել կաթողիկոսին, ուրեմն կարող էր ծառայել և Յովսէփին։ բայց այլ էր՝ կաթողիկոսին ծառայել, այլ էր՝ կաթողիկոսի սիրելեաց ծառայել։ Ղուկաս կաթողիկոսի և Ներսէս վարդապետի մէջ չկայր երրորդ ոք։ Ներսէսն էր Ղուկաս կաթողիկոսի թէ որդին, թէ հարազատ ծառայն, թէ նորա ամենայն ակնարկութեանց ճիշդ խելամտողն և կատարողապետն, նորա ամենայն հոգեկան բաղձանաց գուշակողն, թարգմանն և տնօրինողն։ Ներսէս վարդապետն միայն

կայր բնակուած ի սրտի Ղուկաս կաթողիկոսի, և Ղուկաս կաթողիկոսն անդրադարձ՝ բաղմեալ կայր ի հոգւոջ Ներսէս վարդապետի՝ մի հոգի էր նոցա՝ յերկուս մարմինս բնակեալ։

Յովսէփ նոյնպէս ունէր իւր Գրիգոր վարդապետն, զոր թողել էր յԱստրախան՝ որ իւր ծանրաբեռն ճոխութիւնն բերէ. չկայր այլ ոք, որում կարող լինէր Յովսէփ հաւատալ իւր այնքան ամաց բաղմաց ամբարեալ Հայոց աղգի քրտանց պտուղն։ Լուր կայր՝ որ Գրիգոր արդէն մօտ է Կովկասու լերանց՝ ի Մողղոկ։ Գրիգոր պիտի համնէր՝ որ կաթողիկոսի օծութեան հանդէսն նորա հանդերձապետութեամբ հանդիսավեհութիւն զգենոյր։ Ներսէս պիտի մնայր յանկեան ուրեք անյայտ։ Ներսիսին չմնաց հնար ինչ։ Եթէ Գրիգոր չլինէր Յովսէփի և Ներսիսի մէջ անջրպետ, Ներսէս կարող էր յուսալ Յովսէփայ առջև ևս իւր գործունէութեան տեղ, և ասպարէզ գտանել. հարկ էր միայն սպասել երեք կամ չորս եօթնեակք, մինչ դայր Գրիգոր ձեռնադրուէր և երթայր իւր վիճակն. այնուհետև ընդ անցանել աղմկալիր աւուրց հանդիսից և տօնախմբութեանց՝ կըհասանէր ժամանակ անդորր դիւանագիտական կոնդակագրութեանց, և Ներսէս վարդապետն, որոյ նրբանկատ յառաջատեսութեամբ որքան յաճախել էր թիւ արագագիր պարզագրիչ դպրաց ընդօրինակողաց՝ ի դեղջէն Աշտարակայ, այնքան անդիւտ էին եղել ի դիւանատան Հայրապետանոցին ոչ միայն շարադրողք և յօրինողք, այլև իսպառ անհետացել էին մտաւութեամբ հասկացողք և

քաջավարժ ընթերցողք ձեռագրաց. միմիայն շարադրող կոնդակաց, ընթերցող ամենակերպ նամակաց և՝ յօրինող պատասխանագրութեանց էր անձանձիր ամենաբաւականն Ներսէս վարդապետ, յորոյ ձեռին արագագիր դպիրքն և պարզագիր ընդօրինակիչքն էին մեքենաշարժ պաճուճապատանք, յորոց միշտ՝ աչալուրջքն և սրամիտքն ընդ զանազան պատրուակօք կելանէին դիւանէն։ Բայց Ներսիսին քաջ յայտնի էր՝ որ Գրիգոր իսկ և իսկ ընդ դնելն զաջ ոտն ի սեամ դրան Էջմիածնի, ահեկանն այնպէս պիտի աքացէր նրան, որ օդապարիկի նման վեհարանի կտուրէն կամ յԱշտարակ թաղէր, կամ ի բիւրական շունչ առնոյր, և միւս անգամ ի սրահ Էջմիածնի ընդ ծակ բանալեաց անգամ չյաջողէր ակն արկանել. և մինչ հարկ ստիպէր նման հեռանալ ի սրբոյ Աթոռոյն, բնակիչք շրջակայից յուշ բերեալ այն ամենայն՝ որ ինչ կրեալ էին յաւուրս յաջողութեանց նորա, բեթէլի քրմորդեաց նման պիտի ծաղրածանակհալածէին։

Ներսէս լսել էր Գրիգորի գեղեցիկ դիտակի հետ բարձրահասակ չքնաղիրան վայելուչ տեսլեան համբաւն, որ մանկացեալ Յովսէփ ոմն էր, առանց ունելոյ նորա դիւցազնական վեհանձնութիւնքն և ազդաչէն առաքինութիւնքն, և հասու էր որ Գրիգոր ոչ թէ միայն պիտի թոյլ չտայր ինքեան՝ Ներսէս վարդապետին՝ մնանել ի մէջ իւր և Յովսէփի, և ժամանակաւ դառնալ միջնորմն ի մէջ Ռուսաստանեայց վիճակաւոր Առաջնորդի և ընդհանրական կաթողիկոսի, այլ առաջին իսկ նուագին՝ երբ տեսնէր զՆերսէս

վարդապետն յատենի Յովսէփայ, ի քթթել ա-
կան պիտի Ամբակումայ նման բուռն հարկանէր
զդագաթանէ նորա մօրուախառն, և զընկենոյր
պատուհանէն քառասունևինն կանգուն հեռա-
ւորութեամբ, և Յովսէփ պիտի չգտնէր իւր ան-
ձին մէջ այնքան հոգեկան արիութիւն և անյողդ-
ողդ բնաւորութիւն, որ դէթ հեզ Յիսուսի
նման ասէր, թոյլ տուք մանկուդդ գալ առ
իս և մի արգելուք զդոսա։

Ներսէս վարդապետն լաւ գիտէր՝ որ միայն
Յովսէփայ հետ հաշտութիւնն, և միայն Յովսէ-
փայ շնորհած ներողութիւնն չ՚արժէր ինչ, ան-
շուշտ հարկաւոր էր Գրիգորի հաշտութիւնն,
Գրիգորի ներողամտութիւնն։ Յեսնենք Գրիգոր
գիտէր, կըհասկանայր՝ թէ ի՞նչ է հաշտութիւնն,
ի՞նչ է ներողամտութիւն, ի՞նչ է կարող նոցա
միաբան լինելն օգուտ բերել ազգին, ի՞նչ կը-
նշանակէ ի սէր ազգին անձնական անարդ կրից
զոհ բերելն։ կամ այսպիսի զոհ ցայն օր ինքն
Ներսէս վարդապետն ունէր դրած ի սեղան տա-
ռապեալ հայութեան։

Յեսնենք՝ թէ Գրիգոր յօժար էր Ներսիսի հետ
հաշտել։ Դիցուք՝ թէ Գրիգոր ընդ երկար դե-
դերելոց չէր յէջմիածին, զկնի ամենաչափ ժա-
մանակի պիտի երթայր Ռուսաստան մտանել ի
փառս իւր, ուր որքան սիրեալ և պատուեալ
էր Յովսէփ, նոյնչափ սիրով և մեծարանօք գը-
գուեալ էր և Գրիգոր։ Բայց միթէ չգիտէր
Գրիգոր՝ որ երբ Ներսէս վարդապետն մնա
Յովսէփայ մօտ, կաթողիկոսն ըստ ամենայն մա-
սանց նա կըլինի, և ոչ Յովսէփ։ ուրեմն նորա

առաջնորդութիւնն մէկ վաղանցուկ երազ պիտի
լինի, որոյ մէջ որքան աւելի երկարատև մնայ,
այնքան աւելի արհաւրօք զարհուրեալ պիտի
զարթի, և որքան աւելի ջանահնար լինի վաղ-
վաղակի սթափիլ, այնքան աւելի թուչ պիտի
լինի նորա շրջապատեալ մթնոլորտի սեւութիւնն
Ներսէս վարդապետին թանաքի կաթիլներէն։

Գիտէր Ներսէս վարդապետն՝ որ այս ամենայն-
որպէս հայելւոյ մէջ յառաջագոյն տեսանելով՝
Յովսէփայ դպրոցի մէջ դաստիարակեալ, և մի-
այն արտաքին փաղփիւնն ըստանձնեալ, իսկ
ներքին ձիրքն ըստ կարի անտես արարեալ Գրի-
գոր վարդապետն՝ անձնապահ լինելոյ զդուշու-
թեամբ պիտի ամենայն ճիգն թափէ և թոյլ
չտայ որ Յովսէփ՝ Ներսիսի հետ միաւորվի։ Ի՞նչ
խղճմտանք էր՝ Գրիգոր վարդապետի խղճմտան-
քըն, որ այն ծերացեալ առիւծին, իւր Արարչին,
իւր յոչնչէ Ստեղծողին՝ Յովսէփին, որ արդէն
շնորհօք գործունէութեան իւր իսկ Գրի-
գորի էր բթացել, նորա աչալուրջ շրջահայեցու-
թեան բոլորաժիրն՝ իւր Գրիգորի՝ նորա ակնոց
և գիտակ սատարելոյն պատճառաւ՝ անձկացել,
այժմ մտադիր է միայնակ թողուլ՝ այն միաբա-
նութեան մէջ՝ որ շնորհօք Ներսիսի դիակնացել
է, և միայն անձնական կրից թափոյն մատն լի-
նելով՝ անշրջանկատ անձնասիրութենէն շլացած
հաստատել է ի կամն, և ցնդաբանել իսկ՝ պար-
ծելով՝ հեռացնել նորամէն զՆերսէս վարդա-
պետն, կամ որպէս ինքն էր ասել՝ երկուց մէջ
Սինէական պատուարն ամբառնալ՝ զՆերսէս հե-
ռացնել, որ միմիայն կարէր զՅովսէփ մատաղա-

ցնել, մանկացնել, նման փիւնիկ հաւի նորոգել, որ վոքու հօտի հովիւ լինելոյ ժամանակն ցոյց էր տուել իւր քաջ և բարի հովիւ լինելն, ընդհանուր հօտին Հայաստանեայց եկեղեցւոյ հովուապետ ընտրուելով, ձեռնհաս լինէր իւր հովուական ցպով հաւաքել զցրուեալ ոչխարսն և ի փարախ Լուսաւորչի համախմբելով՝ մեռեալ ազգն կենդանացնել։ Ո՞ւմ աւելի վնաս պիտի լինէր։ Ներսիսի՞ն՝ որ կրօնաւոր մի էր, և նոյն կրօնաւորական վեղարաւ որ վանքի անկիւնն անդորը դտնէր, անդ կարէր իւր կեանքն անցուցանել, թէ Յովսէփին՝ որ Առաջնորդ ժամանակն՝ գործին գործէր, արհեստաւորն պարծէր. այժմ ընդհանուր Հայրապետ ազգի լինելով՝ պիտի երևի որպէս ձուկն հանեալ ի ջրոյ, կամ որպէս նաւապետ նաւու ի վերայ ալեաց լայնածաւալ ծովու անթի և անքեղի միայնակ։ Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։ Այս երկուց վարդապետաց բարի օրինակն նորոգեց մեր ազգի հայրենաւանդ վարդանանց և Վասակեանց առնչութիւնքն, և հոգևորականք սկսան կենցաղագիտութեան աշակերտիլ, իւրեանց նպատակին ժամանելոյ համար՝ անխտիր ի դիականց սանդուղք յօրինել, և անձնասիրութեամբ ձեռամբածեալ՝ ամենայն ծաղկունքն ի կոկոնի կարկտահար առնել. յորոց մի է և ձեր ամենախոնարհ ծառայս։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Այս կենսական խնդրոյ, որ Ներսէս վարդապետի համար կենաց և մահու մէջ ընտրութեան (խնդիր) էր. ի՞նչ կասկած կայ, որ Ներսէս վար-

դապետն՝ միայն անձնապահ լինելոյ աղդաւանդամ՝ պիտի մոռանայր մէկ ելից ճանապարհ։ Քան զայն ապահով փախստեան ծակ չէր յաջողում ի միտ բերել, որ Էջմիածնի միաբաններէն մէկ քանիսին խելքերն ջրէ, իւր համախոհ առնէ, և նոցա հետ միասին դիմէ առ Դանիէլ. բայց դուցէ թէ նորա խորախորհուրդ սրտի անհետազօտելի մթին խորշերի անկիւնումն կայր աճիւնացեալ դազախի տակն մէկ յուսոյ կայծ, որ նորան ի ներքուստ կաղդուրում էր և քաջալերում էր կարծել և ասել, Պետերբուրգէն մինչ ի Տփխիս այնքան հեռի չէ, որքան՝ Տփխիսէն մինչ յԷջմիածին։

Յովսէփայ կեանքն այնքան անբիծ, անարատ և անբասդիւտ չէին որքան նորա արտաքին ծիրանիքն։ Դեռ հինգ տարի չէր անցել այնուհետև, որ ըստ ոմանց զրպարտուել էր Յովսէփ, և ըստ ոմանց կշտամբուել Տփխիսի մատնութիւն. և այն մարդիկ՝ որ հեղինակ էին դարանակալութեան, աւելի բարձրաձայն էին աղաղակում և ընդդէմ Յովսէփայ դրդռում ամբոխի սիրտն։

Արդէն ի քանի ամաց հետէ մեռել էր Հերակլ արքայն, որ ընդ իւր տարաւ ի գերեզման երկու կարեվէր խոց, որ ստացել էր Յովսէփէն՝ առանց նորա վերք ինչ ի սիրտ արքային դնել կամելոյ. մին այս էր՝ որ արդէն տեսանք, իսկ միւսն մէկ հին անցք, որոյ նախընթաց, զուգընթաց և հետևորդ պարագաներն միայն Ներսիսի նման սրամիտ, հեռատես և շրջանկատ անձն կարող էր ի միտ առնուլ, կշռել և մակաբերաբար գուշակել։ Այս՝ Պրինցի անցքն էր,

Ցընթացս պատմութեանս տեսանք՝ որ 1725 թուէն սկսած Սիւնեաց տանէն Դաւիթ բէգ հայազգի իշխանն և նորա ընկերակիցք երբեմն երբեմն ցոյց էին տալիս աշխարհին որ Հայազգն դեռ խպառ մեռած չէ. այլ իւր նախնեաց արիութիւնն և ազգասիրութիւնն թէ միտք բերէ, կարողէ գործով ևս հաստատել իւր կենդանութիւնն։

Երբ այս ազգային առկայծեալ պատրոյգն ևս շիջաւ, Դաւիթ բէգի զօրականներն ցրուեցան, և բազումք մոան Նադիր Շահի զօրաց մէջ որպէս էր և կամարական Կարապետ աղայն, և գնացին մինչև Աղուանստան և Ղանտահար և Հնդկաստան։ Սոցանէ մին՝ (որոյ անունն գրած ունէի, բայց այլ թղթոցս հետ յափշտակութեան՝ մատնուեցաւ,) Հնդկաստանի Հայոց մէջ շատ յառաջադէմ եղև, ոչ միայն առևտրական վաճառաշահութեամբ ճոխանալով, այլև Անգղիացւոց և Հոլանտացւոց՝ ընկիկ Հնդկաց դէմ մարտնչելոց մարտական հանդիսից մէջ ճախարակելով, ևս առաւել ազգասիրական հոգւով զօրանալով, եղև դառնալ յայն երկիր, ուր իւր պատանեկութեան հասակի մէջ հոտոտել էր վառօդն, և ծանօթացել էր թշնամեաց արճճեայ գնտակաց հետ, և թէ հարկն պահանջէ՝ մեռանի իւր հայրենեաց Հայաստանի փրկութեան համար՝ զէն ի ձեռին։

Կցորդ կենաց գոլով Շամիր խանի (Շահ Ամիր խանի) ճոխ և բազմափորձ հայազգի հայրենասէր իշխանի, և նորա ազգասիրական խրախուսանօք քաջալերեալ, իւր ռազմական նահատակութիւններով բազում Եւրոպական թագաւորութեանց ծանօթացաւ, և ի նոցանէ ստացաւ Պրինց պատուանունն, որ այնքան սովորական եղև և հասարակեցաւ հայոց շրթանց մէջ, որ այն մեաց. իսկ նորա անունն, հայրանունն և մականունն մոռացվեցաւ։ Այս Պրինցն, որ կընշանակէ իշխան, կամ թագաւորազն, ունէր երկու որդի՝ Արշակ և Վաղարշակ անուն։ Հնդկաստանի հայազգի ճոխ վաճառականաց բազմակնի և բազմաստորագիր վկայականօք և յետկարօք ուխտի օգնութեան, և ոմանց Եւրոպական թագաւորութեանց՝ որք կըցանկային Արևելեան Հնդկաց վաճառաշահէն, որոյ գլխաւոր տուրևառիկն կըլինէր ձեռամբ հայազգեաց, նոցա միջնորդութեամբ օգուտ քաղել, վաւերական հաւաստեօք կազդուրեալ, սկսաւ Եւրոպայի երևելի քաղաքաց մէջ շրջագայիլ, և շատ թագաւորներէ ստացաւ դաշանց գիր, որ ընդունին նորա վեհութիւնն։ Այս օրինակ թղթեր ունելով ի ձեռին եկաւ Պրինցն ի Ս. Պ. բուրգ. և որովհետև չունէր իմի՛ք կարօտութիւն, մեծարանօք և պատուով հիւրընկալութիւն գտաւ հայասէր ինքնակալ կայսրուհիէն Եկատերինեայ, և յարգութեամբ ճանապարհ ստացաւ դէպ յԱստրախան, որ անտի ուղևորի ի Հայաստան՝ անցանելով ընդ լերինն Կովկասու և ընդ Վիրս։ Աստրախան քաղաքի մէջ, որոյ հայազգի բնակիչք ըստ մեծի մասին էին զաւակունք ցրուեալ զօրացն Դաւիթ բէգի, և Աւան խանի և Աւան Իւզբաշուոյ, մեծ ընդունելութիւն գտան թէ քաջալանջ Պրինցն և թէ նորա

երկու որդիք Արշակ և Վաղարշակ զուարթածաղիկ և քաջակորով պատանիք, որք Անգղիական զինուորական նշանագրեստուք իւրեանց ուրախութիւն կըպատճառէին համազգեաց։

Իսկ երբեմն յաւուրս մեծամեծ տօնից՝ մինչ կըհագնէին իւրեանց բնիկ հայազանց իսկական զինուորական տարազն, և կուգային յեկեղեցի, ոսկիափայլ փեսրազարդ սաղաւարտներն գլխներին, երկաթակուռ զրահք հագներին, ուսէն կապարճ նետից և աղեղն, և մէջքէն երկսայրի սուսեր ի կախ, նման կլինէին այն դիւցազանց, որովք լի է ազգային պատմութիւնն մեր։

Կըպատմէին ականատեսք, թէ կասէր Պրինց՝ որ՝ եթէ այս զէնքն չլինէին Կիլիկեցւոց ժամանակն, այլ մնած լիներ Հայոց մէջ հրաղէնն, Հայերն անյաղթ կլինէին և ցարդ պահած կլինէին իւրեանց անձնիշխանութիւնն։ Եա՝ կասէ եղել է, այս զէնքն պահումեմ, որովհետև իմ նախնեաց պապերէն ժառանգութեամբ են մընացել, և պիտի իմ զօրացս ցոյց տամ՝ թէ Տիգրան, Տրդատ, Վարդան, Վահան, Լէոն կամ Թորոս միայն այս զէնքերն են ունեցել, և միշտ յաղթել են. բայց Դաւիթ բէգ ցոյց տուեց որ հայերուն աւելի օգտաւէտ է հրաղէնն։

Շատ երիտասարդք՝ որ Պարսկաստանի ամեն կողմերէն կըհաւաքուէին յԱստրախան, որովհետև ծաղկած էր անդ Հայոց վաճառաշահն, տեսանելով այս քաջարի հայերուն, թողնում էին իւրեանց առևտուրն և մոռանում էին նորա զինուորութիւն։ Պրինցի դալոյ ժամանակն՝ Յովսէփ էվայր յԱստրախան։ Ինչպէս յետոյ երևեցաւ, միայն ազգասիրութիւն, հայրենասիրութիւն, դանձ, քաջութիւն, բաւական չեն. ազգի կանգնելոյ համար՝ հարկաւոր է շրջահայեցութիւն և միաբանութիւն։ Նախ և առաջ Շամիր խանն՝ որ լաւ կըճանաչէր Յովսէփի փառասիրութիւնն, պիտի զգուշանայր և զգուշացնէր Պրինցին, որ նա այլոց համար թող լինէր առաջին անձն Հայոց մէջ, այլ Յովսէփայ համար՝ լինէր անդրանիկ յորդիս հայրութեան նորա, և առաջին ոչխար հովուութեան նորա. բայց ոչ նա մոռացեց և զգուշացոյց Պրինցին, և ոչ Պրինց՝ որ մոռացել էր՝ թէ որքան մարդասիրութիւն էր գտել Դաւիթ բէգ Հայաստանի վանքերի վանահայրերէն, և մանաւանդ Գանձասարայ կաթողիկոսէն. և երկար ժամանակ Հնդկաստանի հայազգի վաճառականաց մէջ, և Եւրոպիոյ թագաւորութեանց դռներումն՝ այլ գաղափարներ էր ստացել, և այլ ուղղութիւն էր սեփականել ինքեան, միտք բերեց՝ թէ իւր շլինքն տանձի կոթ չէ, որ եթէ Յովսէփայ առջև գլուխն փոքր ինչ խոնարհեցնէ՝ միջաբեկ խորտակի, և ոչ Յովսէփ՝ որ յաջողութենէն հարբած լինելով, երբ լսեց Պրինցի լուրն, զարմացաւ, թէ ինչպէս է համարձակել այն հայազգին արտաքոյ իւր անօրէնութեան ազգասէր անուն ստանալ, ազգի մէջ երևելի հանդիսանալ, և Եւրոպիոյ թագաւորաց ծանօթանալ, կարողացաւ ասել, որ ոչ է մեզ հակառակ՝ ի մեր կողմն է, թէ նա ոչխարամիտ աշխարհական է, ես Յիսուսի օրինակէն խրատուած հովիւ լինելն ցոյց տամ, երթամ ինքս գտնեմ իմ մոլորեալ ոչխարն։

Յայտնըվեցաւ՝ որ ոչ Պրինցն էր հեռատես մարդ, և ոչ Յովսէփ։ Այս երկուսի սրտից մէջ ևս թագաւորական խան էր փառասիրութիւն։ Պրինց արդէն այնպէս ապահովեալ էր համարում իւր ապագայ վիճակն, որ կարծում էր թէ մէկ ոտքն անշուշտ հաստատած է այն ճանապարհի վերայ՝ որ անխոտոր կըտանէր դէպ ի Հայաստանի աթոռն։ Հինգ Մելիքք ամենայն բոպէ կարէին հանել երեսուն քառասուն հազար հրազինեալ զօրք։ Նա ունէր այնքան ճոխութիւն, որ կարէր նոցա ռոճիկն առատապէս բաշխել. ինչ այլևս արդեալառիթ կայր, որ Պրինց տկարանայր կանգնել Սիւնեաց և Արցախայ անմատոյց լերանց մէջ Հայոց՝ ի չորս հարիւր ամաց հետէ կործանեալ աթոռն։ Բայց Յովսէփ՝ այդ աթոռն կամենում էր տեսանել հաստատեալ ոչ իսկ և իսկ ի Հայաստան, ուր Ղուկանէ կաթողիկոս, Ներսէսն է թագաւոր, իսկ ինքն և ոչ ժամակոչ Գրիգորի չափ ունի անդ իշխանութիւն. այլ նախ ի Գրիգորիպոլիս, ուր իւր թագաւորութիւնն էր, և այն ընդ իշխանութեամբ իւրոյ եղբօրորդւոյ, զոր ինքն ընտրեալ էր յայն աթոռ, որ ինքն լինի թագաւորահայր, և երբ ստանայ Հայոց Հայրապետութիւնն, ի Գրիգորիպոլսոյ փոխադրէ ի Վաղարշապատ. վասնզի և Գրիգորիպոլիս քաղաքին տուել էր կնիք ինքնահնար, և անունն դրել էր կնիք թագաւորաց Հայոց. յորում կային և Մասիս հանդերձ տապանաւ, և աղաւնին Նոյեան, և եօթնագլուխ վիշապն Տիգրանեան, և դաստառակն Արգարեան, և Արծիւն Արշակունեան, և գառն Տրդատեան, և Առիւծն Լէոնեան։ Վասնզոյ երբ տեսաւ Պրինցի և իւր որդւոյ դրօշակի տակ, Հայ զօրականք, զորս ինքն չէր խմբել, նորա ազգասէր սրտի մէջ վառուեցաւ անձնասէր նախանձն, և փոխանակ խաչիւ և խաչվառաւ ընդառաջ ելանելոյ այն սակաւաւոր զօրաց, և նոցա դրօշն օրհնելոյ, անձնատուր եղև յաչաղանաց։

Յաչաղելոյ և թշնամութեան դուռն բանալոյ շարժառիթք ևս պակաս չէին։ Պրինց կամենում էր՝ որ Յովսէփ նորան այնպէս պատիւ տայ՝ որպէս վայել է իւր համազգի օրինաւոր թագաւորի։ Յովսէփ կամենում էր որ Պրինց նորամէն այնպէս կախումն ունենայ, որպէս թէ դեռ նա պիտի նորան յոչնչէ գոյացուցանէ, և նորա հրամանաւ շարժի, նորա ակնարկութեամբ ուղղէ իւր ընթացքն՝ որ եթէ արդարև յաջողէ նա թագաւորել, որով իւր եղբօրորդւոյ առաջն պիտի կտրէր, այնպէս դաւանի՝ որպէս թէ չնորհօք Յովսէփայ է գտել այն ամենը, և իւր երկուց որդւոյ համար առնու ի հարանութիւն նորա ցեղէն, որ վերջապէս Արղութեանց տուն մտնի այն թագաւորութիւնն. և եթէ երբէք նա տէր դառնայ բովանդակ Հայաստանի, Յովսէփայ առջև լինի ոչ այլ ինչ բայց միայն որպէս վասսալ, հպատակ իշխան, որ ինքն՝ Հռոմայ պապի նման երբ կամենայ, նորա գլխէն, կամ նորա որդւոյ գլխէն առնու այն թագն, և դնէ իւր եղբօրորդւոյ գլխին։

Երբոր տեսաւ Յովսէփ՝ թէ Պրինց երբէք լինելոյ չէ այնպէս, որպէս ինքն կը յերազէր, նամակ գրեց առ Հերակլ արքայն Վրաց, և իմա-

ցնելով Պրինցի ան աշնկալ ծագումն, խորհուրդ տուեց որ թոյլ չտայ նորա անցանել դէպ ի Հայաստան, դուշակելով՝ որ եթէ Պրինց երթայ հանի Սիւնեաց աշխարհ, Ղարաբաղի Մելիքաց հետ միաւորվի, և նոցա հայադունդ զօրաց գլուխ կանգնի, այնուհետև Հերակլի հեղինակութիւնն այն կողմերէն կանհետանայ։ Բազմափորձ ծերունին Հերակլ թովեալ ի բանից Յովսեփայ՝ գտաւ դիւրահաւան, և դարանամուտ եղև կովկասեան լերանց անձուկ կիրճերի մէջ, և անակնկալ յարձակմամբ Պրինցի հայադունդ սակաւաւոր զօրաց վերայ՝ շատ անմեղ արիւն թափեց։ Բայց եւրոպական կրթութիւնն յաղթանակեց ասիական զօրութեան վերայ։ և Պրինց Քսենոփոնտի նման հասոյց իւր զօրաց մնացորդն մինչև Էջմիածին, անցանելով ընդ լերինս Կովկասու և Վրաստանի։

Շատ էր այս՝ Ներսէս վարդապետին։ որ Ղուկաս կաթողիկոսի բերնէն կոնդակ գրեց առ Հերակլ և պարզհասկացուց նորան իւր մեծ սխալանքն։ նախ՝ որ նա ի զուր և տարապարտուց Հայոց դէմ սուր հանեց, մինչ նորա նախնին փառնաւաղ արքայն էր քանի ամօք յառաջ Դաւիթ բէգին տուել իշխանութիւն՝ Հայաստանն փրկելոյ։ Երկրորդ՝ որ նա խելամուտ չեղաւ՝ որ Յովսեփ իւր ազգականաց Արղութեանց համար է այն տեղն ապահովում։ Երրորդ՝ որ լաւ էր թէ Պրինցն տիրէր Հայաստանին, քան թէ Արղութեանք, որ Յովսեփայ զօրութեամբ կարող են ժամանակաւ մեծ ազդեցութիւն ունենալ Տփխիսի վիճակի վերայ։

Ղուկաս կաթողիկոսի այս կշտամբանքն մեծ տպաւորութիւն արաւ Հերակլի վերայ։ Հերակլ բացեց աչքն և յայտնի տեսաւ՝ որ Յովսէփ բարեկամ չէ իւր թագաւորութեան՝ ի սրտէ։ Վասնորոյ երբ սկսաւ աղա Մահմադ խանի արշաւանի սպառնալիքն որոտալ, Հերակլ ոչ ի ձեռն Յովսէփայ, այլ ուղղակի խնդրեց տէրութենէն օգնութիւն, միայն հարևանցի Յովսէփի ընչացքն քերելով։ վասնորոյ և օգնութեան յամենն Յովսէփայ ազդեցութեան գրուեցաւ, գուցէ թէ նա իսպառ անմեղէր, և Տփխիս յաւերակ եդաւ։

Ոչ Հերակլ, և ոչ որդիք նորա, և ոչ մեծամեծք Վրաստանի կարող էին այս մոռանալ, և ներել Յովսէփայ, եթէ նա արդար և յանցաւոր էր։ Բայց Ներսէս այնպէս էր անցքն ձևակերպել, որ այնուհետև անհնար էր իւիք Յովսէփին արդարանալ։ Ներսէս տեսանելով Պրինցի հանդամանքն, գործ դրեց Ղուկաս կաթողիկոսի Հայրապետական իշխանութիւնն։ Նորա պատգամաւորայ ճարտարութեամբ Սիւնեաց երկրի հինգ Մելիքք ընդունեցին զՊրինցն, և սկսաւ թքաւոր անուամբ վերապատուել։ Դիպակայ կողմն մէկ Պարսիկ բէգէ գնեց մի հայաբնակ բազմամարդ գիւղ, և բէգի մեծակառոյց բնակարանն արաւ իւր արքունիք։ և սկսաւ վարժարանի հիմն դնել։

Յովսէփ վառվեցաւ սրտմտութեամբ, սկսաւ Մելիքներուն գինել ընդդէմ իւրեանց նորեկ թքաւորին։ Մելիքք խաբուեցան Յովսէփայ հեղինակութենէն, և սկսան նոր թքաւորի

հետ այնպէս վարվիլ, ինչպէս մէկ ժամանակ Հայոց նախարարք՝ Շապուհ Պարսկի հետ՝ որ Հայոց թագաւոր էր դրուել։ Եւ երբ Ֆոնայ խանն պատերազմ բացեց Հայոց դէմ՝ Պրինց աղաչեց Մելիքաց որ միաբանին և թշնամւոյ դէմ մարտնչին։ Մելիքք պատասխանեցին. թքաւորն դու ես, դնա կռուիր։ Վերջապէս երբ Պրինց շատ թախանձեց, Մելիքք իւրեանց զօրքն համախմբեցին. Պրինց և իւր որդիք անվեհեր առաջնորդեցին իւրեանց բանակին։ Բայց երբ ճակատամարտն բորբոքեցաւ, իւրաքանչիւր Մելիքք առին իւրեանց զօրքն հեռացան յամուր տեղիս, և մնաց Պրինցն և իւր որդիք և նորակիրթ զօրքն սակաւ. որք երես չդարձուցին ի թշնամեաց, այլ պատերազմելով յետս յետս գնացին, մինչև հասան յապահով անտառս Ղարաբաղու։ Եւ այսպէս մաղապուրծ ճողոպրեալ՝ դարձաւ սրտակտուր ի Հնդիկս։

Պրինցի հեռանալէն յետ յերկրէն Սիւնեաց, մինչ Ներսէս գնաց Ղուկաս կաթողիկոսի հրամանաւ ի Պոլիս և ի Զմիւռնիա, Յովսէփ ժամանակ գտաւ, որսաց Աղուանից կամ Գանձասարայ Յոհաննէս կաթողիկոսին, և նորա միջնորդութեամբ համոզեց Մելիքաց՝ որ մտնեն ի հպատակութիւն Ռուսաց, որ Կասպից ծովու կողմէն սկսել էին յառաջ խաղալ. և այսպէս անյայտ մնաց Պրինցի թքաւորութիւնը։ Ես Պրինցի զօրաց մէջէն տեսել եմ միայն Կոստանդ անուամբ մի հայազգի հնդկաստանցի, որ մինչև ի 1825 ամն Աստրախան Հայոց տպարանի մէջ կաշխատէր, և Լիթքայի տպարանի Հայոց տառերն,

որպէս և Մատրասայ հին տպարանի այբուբենի պղպատեայ և պղնձի կաղապարներն իւրով ձեռամբ շինել էր։ Այս Կոստանդ առել էր տէր Խաչատուր աւագ քահանայի քեռ դուստրն, և ունէր բնակարան՝ աղա Մկրտումի տան հանդէպ։ Աստրախանայ ծերոց մէջէն բազումք կային այս Պրինցի ականատես, և նորա անցիցն տեղեակք, որպէս և ի Տփխիս՝ թէ հոգևորականք և թէ աշխարհականք. որք շարժելով գլուխս կըպատմէին։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յովսէփ արքեպիսկոպոսն՝ ընտրեալն ի Հայրապետութիւն Հայոց՝ մնեալ է Տփխիս։ Առաջի նորա՝ սկսեալ ի Գիորգի պարոնէ թագաւորէն Վրաց և յարքայական գերդաստանէ նորա՝ ամենայն աւագորեարն Վրաստանի՝ կաղմեալ յարքայազանց և յիշխանազանց, ի թիւս որոց կային հայազգի բէհբոդեանք (Միրի—չիքեար—բոշիտ) Արղութեանք, Բէգթաբէգեանք, Թումանեանք, Ղորղանեանք (Միրախոռ,) և այլք բազումք, և տիկնայք մեծուհիք, որք բաղկացուցանէին զարքունիս Բագրատունեաց, կային ի սպասու նորա, և անհանդուրժ մնային քաղցր ակնարկութեան նորա։

Իբր յեօթն ամաց հետէ պանդխտացեալ էր անդ Սերոբէ տէր Պետրոսեան Պատկանեան, թոռն տէր Գաբրիէլի Պատկանեան, զոր տեսաք վերագոյն, մինչ Ներսէս պատանին առաքեցաւ ի Պոլիս յուսումն՝ առ թագաւոր վարժապետն։ Սերոբէ յօրէ գալստեան իւրոյ ի Տփխիս, և գտեալ չնորհս յարքայէն Հերակլէ՝ հրամանաւ

նորա սկսել էր առնել մանկավարժութիւն. վանորոյ և ստացեալ էր վարժապետ անունն՝ որպէս մականուն։ Յովսէփ ի 1794 ամի ի նամակաց Հերակլի լսելով այս Սերոբէ վարժապետ կոչեալ երիտասարդի անունն, և ուրախանալով՝ որ Տփխիս քաղաքի մէջ՝ Զամչեանի քերականութիւն ուսուցանող՝ սկսել է Հայոց մանկանց աւանդել իւրեանց բնիկ լեզուն, յայտնել է աղա Յոհաննէս Եղիազարեանի Լազարեանց և խնդրել է ի սէր և ի պատիւ վաղածանօթ տէր Գաբրիէլին, կարգել ռոճիկ երկուհարիւր ռուբլի արծաթ. (որ և կըստանայր ցելանելն իւր ի Տփխիսէ՝ նախ աղա Յոհաննէսէն, և ապա ի ժառանգաւորաց վեհաղնեայ տանն այնորիկ)։ Սերոբէ վարժապետն իմանալով՝ թէ յորոց է շնորհն, որչափ գոհութիւն մատոյց Հերակլ արքային բանիւ բերանոյ, նոյնչափ և սրբազան Արհեպն Յովսէփայ և աղա Յոհաննէսին Լազարեանց գրով նամակաց։

Ի մտանել Յովսէփայ կաթողիկոսացուին ի Տփխիս՝ յորժամ բազմահոյլ ուխտ եկեղեցւոյն եկ ընդ առաջ նորա հոգևորական հանդիսավեհութեամբ, ի թիւս երգեցողաց կայր և Սերոբէ վարժապետն շապիկ զգեցեալ։ Դեռ ևս չէին հասել ի դուռն Փաշայ—վանքի եկեղեցւոյն, (զոր՝ զկնի աւերածին Տփխիսայ նորոգեալ էր տէր Ղազար Լազարեանն,) որ Յովսէփ յիշեց զերիտասարդն Սերոբէ վարժապետ, և հարցուց այն ժամանակի Առաջնորդին Էջմիածնի (որոյ անունն մոռացել եմ.) և նա խոյսն բերեց և կանգնեցուց առջևն։

Երբ Սերոբէ ծունկ չոքեցաւ համբուրել վեհափառի դարշապարն, նա՝ որ միով ձեռամբ բռնած ունէր խաչ, և միւսով Հայրապետական գաւազանն, խաչն տուեց Առաջնորդին՝ որ ընդ աջմէ նորա կայր, և գաւազանն՝ իւր տիրացու Էլիզբար ձայնապետին, կռացաւ, կարկառեց իւր երկայն բազուկներն, բռնեց նորա երկու ականջներէն և ոտից վերայ կանգնեցնելով, ասաց, ես Նաբուգոդոնոսորայ արձանն չեմ, և համբուրեց ճակատէն, և հրամայեց որ տիրացու Էլիզբարի հետ միասին իւր ետևէն դայ. և այսպէս մտաւ վանքի եկեղեցին։

Ի 1794 ամէն սկսած՝ գուցէ քսան անգամ էր Ներսէս՝ կաթողիկոսի սարկաւագն, և յետոյ վարդապետն, եկել Տփխիս, և վերադարձել, և գոնէ մէկ անգամ բարեպատեհ ժամանակ չէր ունեցել այցելութիւն առնել Սերոբէին յիւրում մանկավարժարանի, որ կայր այն ճանփու վերայ՝ ընդ որ վանքէն պիտի երթան յեկեղեցին Մողնուոյ՝ փիթոյեանց աղայի կալուածն։ Բայց երբ լսուեցաւ՝ թէ Յովսէփ ելեալ է ի խնդիր կաթողիկոսութեան, ահա ձիաւոր սուրհանդակ մի յէջմիածնէ բերեց և տուեց Սերոբէ վարժապետի ձեռն մէկ ծրար, ասելով՝ Ներսէս վարդապետն ուղարկեց։ Ծրարի մէջէն ելաւ մէկ երկայն նամակ, որով Ներսէս վարդապետն յիշելով իւրեանց ի մանկութենէ ծանօթութիւնն, կըմեղադրէր Սերոբէին որ Ղուկաս կաթողիկոսի կենդանութեան ժամանակն գոնէ մի նամակ չէ գրել առ նա, և ինչ ոչ է խնդրել. մինչ նա կարէր նորա ամէն խնդիրն կատարել. և նամակն

յայն էր վերջացուցել, որ Սերոբէն ինչ լսէ կաթողիկոսի ընտրութեան աղագաւ, մանաւանդ արհիապանծ, իշխանաշնեայ Յովսէփայ երկայնաբազուկ Արղութեանց արքեպիսկոպոսի մասին, գրէ, և ի գալ սուրհանդակաց առ նա՝ պատրաստ պահած նամակն ուղարկէ. և այն թղթոց ծախուց համար գրել էր ի ծրարին մուրհակ հարիւր վենետկեան ոսկւոյ ստանալ յԱռաջնորդէն Էջմիածնի, (քանզի դեռ՝ և գանձասար ունէր անդ իւր առաջնորդական վիճակն։

Սերոբէ վարժապետն՝ ըստ խնդրոյ Ներսէս վարդապետի, սկսեց գրել առ նա պարտուպատշաճ տեղեկութիւններ, ի շարս որոց գնաց և երկայնապատում ճառօրէն գրած ստորագրութիւն հանդիսի մոտից սրբազան Հայրապետին Յովսէփայ ի Տփխիս, և խնդրելոյ և որոնելոյ և գտանելոյ նորա զՍերոբէ վարժապետն, և պահելոյ զնա առ իւր, և յետ երկուց աւուրց պատուիրելոյ նմա պատրաստել ի ճանապարհ. որովհետև կամի տանիլ զնա յԷջմիածին, և անդ նորոգել զժառանգաւորաց դպրատունն և ըստպարանն Սիմէօն հոգելոյս Հայրապետի՝ հոգևոր ծնողի իւրոյ, որ յաւուրս Հայրապետութեան Ղուկասու խանդարեալ էին։

Սերոբէ վարժապետն տեսած չէր Պրինցին. այլ զկնի գալստեան իւրոյ ի Տփխիս լսել էր բազում ինչ յականատեսից, և մանաւանդ ի տէր Առաքելէ Ղամազեան, ի Հաքիմեան բժիշկ Թաթուլէ և ի Փիթոյեանց աղայէ, և յայլոց. և յառաջնում հացկերութի՝ ուր կային և ընդ առաջ եկեալք Հայրապետացուին Հայոց հինգ

Մելիքք Ղարաբաղի, մինչ արքայորդին Դաւիթ արար առարկութիւն վասն անցից Պրինցի և աւերման Տփխիսայ, Մելիքք սկսան ի հաճոյս Յովսէփայ ծաղր առնել զեւրոպական կրթութի՝ զօրաց՝ զոր Պրինց կամէր մուծանել ի զօրս Հայոց. այլ իշխանն Բէհբուդեան և Ղորղանեան Յովսէփք Մելիքաց դէմ վիճաբանութիւն բացին։ Այս խօսակցութեանց ժամանակն Սերոբէ վարժապետն ևս ընդ երգեցկաց կայր անդ, և լսել էր, որ ասել էր Յովսէփ Աւետարանի մէկ խօսքն թէ՝ որ ոչ ժողովէ ընդիս՝ ցրուէ։ Ընդ որ գժգոհել էին Բէհբուդեանն և Ղորղանեանն։ Յայտնապէս կըերևի եղել է, որ ինչպէս դեռ նոր՝ էին Տփխիսի առերածի վէրքն, նոյնպէս և Պրինցի անցից խոցերի սպիքն դեռ ևս ծածկուած չէին։ Մինչ արքունիքն զանազան կուսակցութեանց յոգուտ Ռուսաց, օսմանցւոց և Պարսից տէրութեանց շփոթից մէջ կըտարուբերէր, ժողովրդեան մէջ ևս գոհ և դժգոհ կողմնակցութիւնք իրերաց վերայ զօրանալ կըթափոխէին։ Յովսէփ՝ որքան համախոհ ունէր Տփխիս, այնքան ևս հակառակորդք՝ կային, որք անդադար բանադնաց կըլինէին Էջմիածնի հետ։ Աղղութեանց մէջէն անդամ կային բազումք՝ որք առ երեսս կըկեղծաւորէին, այլ ի ներքուստ չարաչար թշնամիք էին Յովսէփայ. որովհետև նա իւր եղբօրորդւոց միոյն տուել էր նախընտրութիւն քան զայլս։ Բազում Հայք և Վիրք նոյն իսկ Յովսէփայ Տփխիս մնանելոյ օրն՝ տեսանելով խաժամուժ ամբոխի խուռն բազմութիւնն ասել էին միմեանց. մեզ ինչ կըպակսէր՝ եթէ

խեղճ Պրինցին էլ այսպէս ընդունելութիւն անէինք, դուցէ մենք էլ այսօր մարդոյ կարգ մտած լինէինք, քաղաքը քանդված չլինէր, այնքան արիւն և դերի զոհած չլինէինք։

Տփխիսի մէջ կային դեռ ևս Պրինցի զինուորներէն, որ ոմանք առաջին դարանակալութեան ժամանակէն էին մնացել, և ոմանք Ղարաբաղէն էին յետ դարձել, որ Յովսէփայ փառքն տեսանելով աչքերն թաց արած յերկինքն կընայէին և կըհառաչէին։ Տփխիս այնպէս տեղ չէր, որ Յովսէփայ նման ճանապարհորդ կարող լիներ մօտէն անցնել, և ներքս չմտնել։

Դուցէ թէ՝ Յովսէփ ինքն մոռացել էր անցեալ բաներն, սակայն ոչինչ առհաւատչեայք ունէր կարծել, թէ և այլք պիտի մոռացած լինին. մանաւանդ երբ այնքան տարի փորձելէր Ներսիսի աչալրջութիւնը, երբէք չունէր իրաւունք չկասկածելոյ, թէ ուր ինքն Պրինցի համար դարանակալութիւն էր արել, այնտեղ և իր համար դարան լարած չլինի։

Լաւ աշակերտ էր Աւետարանի, բայց միտքը չբերեց Յիսուսի վերջին խօսքերի մին թէ՝ որ սուր առնուցու՝ սրով մեռցի։ Անձնապաստան վստահութեամբ կարծեց՝ որ ինչպէս ինքն անյիշաչար է, այլք ևս այնպէս անյիշաչար կըլինին առնա։ Ազդասիրութիւնն և փառասիրութիւնն երկու ձիոց նման լծել էր ի կառս իւր և հանդէս յաղթանակի էր կարդել. տասնևչորս դարէն այնուհետև դլորվել, մինչ Տրդատ թագաւորին և Մեծ Ներսէս Հայրապետին դեղ մահու էին արբուցել. միլիոնաւոր հայազգիք այնուհետև

ոտնակոխ էին եղեալ, բայց այն դեղատուաց չառաւիղքն մնացեալ էին՝ որ այս ազգալոյս ջահն չիշուցանեն։

Ուրախութեամբ զուարթացած դարձաւ իւր բնակարանն բարեկամի տանէն, և զդաց՝ որ թունաւորվել է. քան զամենայն ինչ առաջ խնդրեց սուրբ հաղորդութեան խորհուրդն։ Երբ ճաշակեաց իւր փրկչի կենդանարար մարմինն և արիւնն, ապա հրամայեց, որ դեղմափ տան։

Առակախօսից առած է. ցուլն եթէ իմանայ իւր հարուածոյ վնասն՝ զգուշութեամբ կըշարժէ եղջիւրներն. բայց չհասկանալով կուտայ հարուածն, և վերքն կրլինին անդարման։ Աստուածութիւնն՝ զիմաստունն անդամ կանէ քան զցուլն անմիտ։ Յովսէփ զկնի այնքանամեայ Առաջնորդութեան, Ռուսաց տէրութեան առեանում Հայոց ազգի և եկեղեցոյ պատկերացուցիչ լինելոյն, մինչ ամենայն մասամբ պարտաւոր էր երկնչիլ երկիւղ և անդ, ուր չիցէ անդամ երկիւղ ինչ, անդ՝ ուր յամենայն կողմանց կասկածանաց արհաւիրքն դափր կըհարկանէին, յետաւ իւր զօրութեանն՝ որպէս անմահութեան ժառանգորդ, ինքն զոհ գնայ դարանակալութեան, և Հայոց ազգի վիճակն ընկաւ անյայտութեան խորափիտն՝ դէթ դարաւոր ժամանակօք։ Բազումք միայն անձնապահ լինելոյ կարեաց մատն լինելով, ով կըհամարձակէր ասել նորան թէ զդոյշ կաց յայս կամ յայն անձնէ, եկեմուտ մի ունէր յայս կամ յայն տուն, մի ուտեր, մի ըմպեր յայս կամ յայն անօթոյ. հասարակաց

Հայրն ի Հայրապետութիւն ազգի հրաւիրեալ կարէր ասել թէ ունիմ կապած վտանգի յայսկամ յայն գերդաստանէ։

Ինչ որ առիւծն Յովսէփ ի մեծոյ առ ոտս իւր կացեալն չտեսաւ, արծիւն Ներսէս ի հեռուստ նշմարեց, և չվրիպեցաւ տեսաւ՝ որ ի գուբն և ի խորխորատն զոր փորեաց և պեղեաց այլոց ի բարկութեան, ինքն դլորեցաւ, յիւրումպարզմունութեան։

Բարեկամք և թշնամիք միահաղոյն կային շուրջանակի զմահճաքն նորա և լային։ Ինքն Հայրապետն կոչեաց զնոսա միաւ մի, համբուրեալ զաջն նորա, և առնուլ զվերջին օրհնութիւն, և զողջոյնն հրաժարական։

Պատուեալ ծերունիքն Տփխիսաբնակ Հայոց արատաւոր թագեալ զաջ նորա, զոր արդէն դալուկն ժահու ծածկեալ էր։ Հայլեն՝ Հայր, Հայր, թողուս զմեզ և երթաս։ Պատասխանեաց Սրբազան հիւանդն այսպէս՝ երթամ ընդ անդ առնալի ճանապարհն՝ ուր մեր հարքն կանցեալ են։ Ծերունիքն կրկնեցին՝ ուր յանձնես, ուր թողուս զմեզ։ Յոգւոյ հանեալ մերձ ի ժահ հիւանդն ասաց՝ Դանիէլին կամ Դաւթին՝ բայց լա՝ ի Դա՝՝՝նա հ՝գ՝է՝ և լռեաց։

Անդ առ մահճաքն կայր և Սերոբէ վարդապետն, որ յորժամ եռեալ թէ գնաց Յովսէփ ի տունն յաւիտենականութեան, և ընդ իւր առեալ զնոսրայն յոյսն յիշմամբն երթալոյ և անդ ժառանգաւորաց դպրատան մէջ վարժապետութիւն անելոյ, ճողոպրեց անձն այն խոնարհ բազմութեան մէջէն, և վազելով եկաւ

տուն, ուր տեսաւ որ սուրհանդակն եկել է և կբսպասէ նորան։ Հապ եպ մէկ համառօտ նամակ գրեց, որպէս կոչոյդ երեկեան նամակին, որով իմացուցել էր վեհափառի անակնկալ տէրութիւնն, և ծանոյց, թէ այսօր՝ յայս ինչ ժամու վեհափառն Յովսէփ, առ հաստատուն իշխանաց, թէ ուր թողուս զԱթոռդ, պատասխանեց՝ Դա՝՝՝նի՝՝՝է՝՝՝լին, ՝՝՝կամ՝՝՝Դաւ՝՝՝թին՝ բայց՝՝՝լա՝՝՝է՝՝՝Դա՝՝՝և վախճանեցաւ։ Սուրհանդակն առաւ նամակն և գնաց։ Յետ քանի ամաց մինչ բորբոքեցաւ Գաւթեանց և Դանիէլեանց տարաձայնութիւնն, Սերոբէ վարժապետն՝ որ Տփխիսայ Առաջնորդի ատեն նամակագրութիւնքն կընէր, մինչև նոր արտաքսուելի անցքն կողբայր, մէկ երդոյ մէջ, որոյ գլխատառք տանցն կընթերցուին, Սերոբէ, և երդոյ գլուխն, Սարսեցուցիչն զօրաց երկնից՝ երրորդ գուբզայի մէջ կատ՝ Բաբուենն ազդէր ազգին ընտրել, յաջորդ ինքեան զտէր Դանիէլ, և այլն։

Սուրհանդակն՝ որ Սերոբէ վարժապետի այս համառօտ նամակն տարաւ, ունէր իւր հետ քաղաքական նամականիք՝ ի բազմոց գրեալ առ Ներսէս։ բայց նոցա մէջ միայն հիւանդութիւնն էր իսկ վերջին քանքն կտականման և մահն անագան լսեցին, և Ներսէս միայն գիտէր ի նամակէ Սերոբէ վարժապետի։ Ներսէս լսեց այս ազգաքիսաս դառն լուրն՝ ոչ զարմացաւ և ոչ վրդովվեցաւ, այլ որպէս անվրէպ հետևորդ նախընթաց հանգուանեաց անդորր յառաջ քան զամենասին ոգեորեալ, հաւաքեց Էջմիածնի

միաբանքն, յայտնեց Յովսէփ սրբազան Հայրապետի վախճանն, տարաւ եկեղեցի, հոգեհանգիստ կատարել տուեց, կրկին ընտրել տուեց զԴանիէլ, և մինչ պատրաստում էր ի դիմաց միաբանից թուղթ առ հայազգի ժողովուրդն Պոլսոյ և առ ինքն Դանիէլ որ կայր յԵդեսիա, եկաւ հասաւ յԷջմիածին Դաւիթ արքեպիսկոպոսն, որ Գալուստ եպիսկոպոսի հետ կռուոյ պատճառանօք՝ Պոլսոյ ժողովուրդն նորան հանել էին պատրիարքութենէն, և դրել էին Ենճեան Յոհաննէս եպիսկոպոսին. սա ևս կամենալով Դաւիթին իւր մնտակայութենէն հեռացնել, ասել էր, գնա՛ Էջմիածին, և կարողացիր միաբանից հաճութիւնն ստանալ և կաթողիկոս դառնալ. ես ասա կըջանամ օսմանեան տէրութեան հրովարտակն առաքել։

Այս այն միջոցն էր՝ որ Ենճեան Յոհաննէս եպիսկոպոսի խորամանկ չարախօսութեամբ՝ դեռ Դանիէլ, որ ընտրվել էր ի կաթողիկոսութիւն, նոր էր աքսոր գնացել ի կղզին Տենեդոս, և Գալուստ եպիսկոպոսն ի Կիպրոս։

Յովսէփայ հետամտութիւնն՝ թէև Ռուսաց դեսպանն կպաշտպանէր ամենայն զօրութեամբ՝ ազդեցութիւն չունէր ոչ Պոլսոյ հայազգի ժողովրդեան վերայ, և ոչ Պարքոսի դրանն. արտաքուստ այո՛ այո՛ կասէին, այլ ի ներքուստ ոչ՝ ոչ կըպնդէին։ Դանիէլ իւր աքսորէն այն ժամանակն յետ դարձաւ, երբ Յովսէփ Ռուսաստանէն ելաւ դէպ ի Տփխիս, և Դաւիթ՝ Ենճեան Յոհաննէս եպիսկոպոսի հատադեղք կուլ տուած կուգայր դէպ Էջմիածին։ Բարեբաղդ էին երբ

կոքին ևս որ միմեանց չհանդիպեցան։ Եթէ Յովսէփ եկած հասած լինէր յԷջմիածին, և Դաւիթ ևս գայր, ո՞վ՝ ի՞նչ տեսարան պիտի լինէր. ինչպէս պիտի Ներսէս կռուեցնէր նոցա և ինքն հեռուստ հանդիսատես լինէր։

Առիւծ էր Յովսէփ՝ յովազէր Դաւիթ։ Յովսէփ պիտի Ռուսաց զօրութեան ապաւինէր, Դաւիթ ևս քաջ գիտէր Պարսից բռնութիւնն յիւր օգուտ ի գործ դնել։ Գուցէ թէ ի 1800 թուին լինէր այն, ինչոր գինի 25 ամաց տեղի ունեցաւ։ Գուցէ նորապսակ Աղէքսանդր Ա. կայսրն տնօրինէր Էջմիածնի ազատութիւնն, ինչ որ նորապսակ կայսրն Նիկողայոս Ա. կատարեց։

Ներսէս՝ Դաւթին ճանաչէր որպէս բարեկամ, Ղուկաս կաթողիկոսի կտակն նորան խոստովանաբար յայտնելով՝ որ նա որպէս կտակակատար Ղուկասու՝ Դանիէլին հաւատրակ լինի, և նորա պատրիարքութեան յաջորդ. որպէս և եղև իմիւ։ Բայց երբ Դաւթին պատրիարքութենէն հանեցին, Գալուստ եպիսկոպոսի հետ վիճաբանութեան ժամանակն, և մանաւանդ տեսնելով՝ որ Ենճեան Յոհաննէս եպիսկոպոսն նորան Հայրապետութեան ատուեր ցոյց տալով ի հեռուստ կամենումէ իւրմէն հեռացնել, խելքն ի գլուխն բերեց, իմացաւ՝ որ Ներսէս նորան նոյնպէս Էջմիածնէն հեռացնելոյ աղագաւ է մտերմարար խօսել, Ղուկասէն ոչ թէ կտակ, այլ մէկ գտակ է մնացել, որով միայն յիմարաց գլուխն են զարդարում. թէպէտև առաջ ևս աւելի սէր չունէր առ Ներսէս, վառեցաւ բնդ դէմ նորա անհնարին սաստելութեամբ, եկաւ Էջմիածին այնու գի-

տաւորութեամբ, որ Ներսէսին ճառախեղդ առնէ. բայց ժամանակին չհասաւ։ Դեռ ևս Թրակիայէն հեռացած չէր, որ լսեց՝ թէ Դանիէլեւ-դոկիոյ Աւագնորդ եղև. այդ փոյթ չէր։ Արզրում հասաւ, լսեց՝ որ Յովսէփ ստացել է կաթողիկոսութիւնն, և եկել է Դուսաստանէն։ Մինչդեռ կըվարանէր թէ ինչ ձեռնամուխ լինի, լսեց՝ որ Յովսէփ հասաւ Տփխիս։ Իւր անուանակցի նման ասայ. բարեւոք է անկանիլ ի ձեռն Աստուծոյ, քան ի ձեռս մարդոյ. ճանապարհ ընկաւ դէպ Էջմիածին, որ Դանիէլի հրաւիրակ երթայոյ յանցանքն Ներսիսի վերայ դնէ, և ինքն արդարանայ, և հին բարեկամութեանն հիման վերայ նոր բարեկամութիւն կանգնէ։ Եկաւ Էջմիածին, լսեց որ Յովսէփ վախճանել է. և Ներսիսի ձեռամբածութեամբ Դանիէլն է կրկին ընտրել։ Դաւիթ երկչոտ կամ վեհերոտ անձն չէր. երբ տեսաւ թէ նորա գիմամրցանակն այժմ Դանիէլն է, և ոչ Յովսէփ, ոգի առաւ։ Պօլսոյ փոփխութեանց անիւներն նորան ճախարակել էին, դրեց նարտի վերայ իւր վիճակն, փորձեց իւր բաղդն. անյաջողութիւնք գրգռեցին, յաջողակ գիպուածք քաջալերեցին, Ներսիսին անգոսնեց և մնաւ ի պայքար։

ԾԵՐՈՒՆԻ ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Վերջ Ա. հատորոյ։

«Ազգային գրադարան»
NL0333651